

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**



**1. ԻՌԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ**

Մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակման իրավաչափությունը արտակարգ և ռազմական դրության գործողության պայմաններում

2

**2. ԿԱՐԱՊԵՏ ՀԱԿՈՒՅԱՆ**

Հանրային խորհրդի իրավական կարգավիճակը և նրա դերը քաղաքացիական հասարակության ձևավորման գործում

15

**3. ԼԻԼԻԹ ԵՐԵՄՅԱՆ**

Կալանավորման ինստիտուտի որոշ հիմնահարցերի վերաբերյալ (իրավունքի և պրակտիկայի հարաբերակցությունը)

22

**4. ՀԱՅԿ ԱՐԱՄՅԱՆ**

Քրեական դատավարությունում օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների օգտագործման որոշ հիմնախնդիրներ

29

**5. ՄԱՐԹԱ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ**

Անչափահասը և սեռական բռնությունը

34

**6. ՄՀԵՐ ՄԱՄԱՋԱՆՅԱՆ**

**ՄԻՔԱՅԵԼ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Որոշ նկատառումներ խմբային հայցի մասին

40

**7. ԼԻԼԻԹ ԽԱՌԱՏՅԱՆ**

Խոսքի ազատության սահմանադրաիրավական երաշխիքները

44

**8. ԱՐՇԱԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ**

Ազատագրվում պատժատեսակը որպես քրեաբանահոգեբանական ուսումնասիրության հիմնախնդիր

52

**9. ՊԵՐՃ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի պաշտպանության հիմնախնդիրը Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համատեքստում

57

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ >>**

ԻՌԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորի օգնական, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտ



ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ  
ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿՄԱՆ  
ԻՐԱՎԱԶՍՓՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ  
ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածն ամրագրում է, որ մարդու և քաղաքացու իրավունքների պահպանումը և պաշտպանությունը պետության պարտականությունն է: Քաղաքացիների իրավունքների ու ազատությունների և անձի անվտանգության իրական ապահովումը վերագրվում է Հայաստանի Հանրապետության կենսականորեն կարևոր շահերի թվին: Սակայն քաղաքացիների իրավունքների ու ազատությունների ապահովման խնդիրը հատուկ նշանակություն է ձեռք բերում հատուկ իրավական ռեժիմների գործողության ժամանակահատվածում՝ արտակարգ բնույթի զանազան իրավիճակների առաջացման դեպքում, երբ հասարակության և պետության կանոնավոր գործունեությունը դառնում է անհնարին այս կամ այն պատճառների հետևանքով: Ինչպես արդարացիորեն նշում է Բ.Ա. Ստրաշունը՝ «... սահմանադրությունները հաճախ նախատեսում են այս կամ այն իրավունքների ու ազատությունների սահմանափակման հնարավորություն արտակարգ հանգամանքների դեպքում<sup>1</sup>»:

Արտակարգ դրության ռեժիմի պայմաններում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեղի է ունենում իշխանության կենտրոնացում, դադարում են լիարժեքորեն գործել սովորական ռեժիմի համար սահմանված զսպումների և հակակշիռների մեխանիզմները, էականորեն մեծանում է իշխանության չարաշահման վտանգը: Հաշվի առնելով նման վտանգի հնարավորությունը՝ ժամանակակից կոնստիտուցիոնալ լիզմը ձևավորել է մի քանի հիմնարար սկզբունքներ, որոնք նպատակ են հետապնդում մի

կողմից առաջացած բացառիկ իրավիճակի շուտափույթ հաղթահարում, իսկ մյուս կողմից՝ մարդու հիմնական իրավունքների սահմանափակումների համաչափության ապահովում:

Որոշ աշխատություններում ուշադրություն է հատկացվում այն բանին, որ մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումն արտակարգ կամ ռազմական դրության բաղկացուցիչ մասն է կազմում, քանի որ քաղաքացիները մի կողմից չեն կարողանում իրականացնել իրենց իրավունքները ողջ ծավալով (որոշ դեպքերում դրանց իրականացումը կբերի անբարենպաստ հետևանքների ինչպես այդպիսի դրության պահպանման նպատակների համար, այնպես էլ հենց քաղաքացիների համար), մյուս կողմից այդպիսի սահմանափակումը հանդիսանում է արտակարգ կամ ռազմական դրության պահպանման առավել արդյունավետ պայման: Սակայն օբյեկտիվ անհրաժեշտություն է, որպեսզի արտակարգ դրության և դրա հիման վրա իրականացվող սահմանափակումների՝ **որպես պատճառի և հետևանքի միջև խելամիտ հավասարակշռություն լինի<sup>2</sup>**:

Ըստ ամերիկացի գիտնական Ս.Նիլինգի, որը ևս նշված տեսակետի կողմնակից է՝ բացարձակ ազատություն կամ իրավունք գոյություն չունի, քանի որ անգամ այնտեղ, որտեղ իրավունքների ու ազատությունների համար գործում են սահմանադրական, օրենսդրական կամ այլ ավանդական երաշխիքներ, միևնույնն է, արտակարգ դրությունը ստիպում է միջամտել մարդկանց անձնական կյանքին և բոլոր իրա-

www.lawinstitute.am

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

վունքներին, և այդ գրված երաշխիքներն անգոր են դառնում: **Թեև այս հարցում չկան միանշանակ մոտեցումներ, այնուամենայնիվ, դժվար է համաձայնվել վերոհիշյալ կարծիքի հետ, քանի որ որոշ կարևորագույն իրավունքներ ոչ միայն չեն կարող սահմանափակվել, այլ ընդհակառակը՝ արտակարգ դրության ժամանակ դրանք կարիք ունեն հատուկ ուշադրության:** Որոշ իրավունքների սահմանափակման անթույլատրելիությունը համապատասխանում է միջազգային իրավունքի նորմերին, որոնք ունեն բացարձակ բնույթ անգամ արտակարգ դրության կամ ռազմական դրության ժամանակ («Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 15-րդ հոդված)<sup>3</sup>:

Այսպիսով, ամենատարածված տարբերակն է, երբ սահմանադրություններում առկա է սպառնիչ ցանկ, սահմանված են, թե որ իրավունքները չեն կարող սահմանափակվել անգամ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ<sup>4</sup>:

Երկրի ողջ իրավակարգի համար չափազանց կարևոր է, որպեսզի Սահմանադրության մեջ հստակ ամրագրվեն՝

1. այն իրավունքները, որոնք որևէ սահմանափակման ենթակա չեն,
2. այն իրավունքները, որոնց սահմանափակման շրջանակն ու կարգը սահմանվում են Սահմանադրությամբ,
3. օրենքով սահմանափակվող իրավունքները և սահմանափակման պայմանները,
4. արտակարգ իրավիճակներում իրավունքների սահմանափակման սահմաններն ու կարգը<sup>5</sup>:

Նշվածն իր արտացոլումն է ստացել երկրի հիմնական օրենքում: Արտակարգ և ռազմական դրության պայմաններում մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների սահմանափակման սահմանադրական հիմքը ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածն է, որով ամրագրված է, որ մարդու և քաղաքացու առանձին հիմնական իրավունքներ ու ազատություններ, բացառությամբ ՀՀ Սահմանադրության 15-րդ, 17-22-րդ և 42-րդ հոդվածներում նշվածների, կարող են օրենքով սահմանված

կարգով ժամանակավորապես սահմանափակվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ՝ արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում:

Ի տարբերություն ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածով սահմանված իրավունքների և ազատությունների սահմանափակման՝ արտակարգ և ռազմական դրության պայմաններում մարդու և քաղաքացու առանձին իրավունքների և ազատությունների սահմանափակման հիմքերը, ծավալը, բովանդակությունը, կարգն էականորեն տարբերվում են սովորական ռեժիմի պայմաններում իրավունքների և ազատությունների սահմանափակումներից:

**Առաջին**, քննարկվող հոդվածում նշված իրավունքները կարող են սահմանափակվել միայն **ժամանակավորապես**, այսինքն՝ այդ սահմանափակումները պայմանավորված են պետության բնականոն ռեժիմից շեղվելով, և նորմալ ռեժիմին վերադառնալուն զուգահեռ վերանում են իրավունքների և ազատությունների սահմանափակման հիմքերը և անհրաժեշտությունը: Այսինքն՝ իրավունքների և ազատությունների սահմանափակման ժամկետը չի կարող գերազանցել այն ժամկետը, որի ընթացքում հայտարարվում է ռազմական դրություն կամ արտակարգ դրություն, քան այն հանգամանքների տևողությունն է, որոնց ծագումը հանգեցրել է սահմանափակման կիրառմանը<sup>6</sup>, սակայն կարող է և այդ ժամկետից էլ պակաս լինել, եթե վերացված են լինում տվյալ իրավունքի կամ ազատության սահմանափակման համար հիմք հանդիսացած հանգամանքները<sup>7</sup>:

**Երկրորդ**, եթե ընդհանուր ռեժիմի պայմաններում իրավունքների և ազատությունների սահմանափակման **հիմքերը սահմանվում են հենց օրենքով (հոդված 43), ապա արտակարգ և ռազմական դրության պարագայում նման պահանջ չկա: ՀՀ Սահմանադրությամբ սահմանված պահանջները հետևյալն են՝**

- ա) նշված իրավունքներն ու ազատությունները կարող են սահմանափակվել միայն **ժամանակավորապես**,
- բ) սահմանափակման կարգը սահման-

ված է Սահմանադրությամբ և օրենքով,

զ) նշված իրավունքներն ու պարտականությունները կարող են սահմանափակվել միայն ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ,

դ) արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում<sup>8</sup> :

**Երրորդ** տարբերությունը նա է, որ եթե սովորական ռեժիմի դեպքում սահմանվում են հնարավոր սահմանափակման ենթակա իրավունքներն ու ազատությունները, ապա արտակարգ և ռազմական դրության պայմաններում սահմանվում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք չեն կարող սահմանափակվել:

Ռազմական դրության պայմաններում քաղաքացիների որոշ իրավունքների ու ազատությունների հնարավոր սահմանափակման և դրանց հնարավոր շրջանակները գործողության մեջ դնելու օբյեկտիվ անհրաժեշտությունը հասկանալու համար կարևոր նշանակություն ունի միջազգային իրավունքի նորմերի և ռազմական դրության կիրառման արտասահմանյան պրակտիկայի ուսումնասիրությունը: Ինչպես վկայում է պատմական փորձը, ճգնաժամերը պետություններից շատերի պատմությունում առաջացնում էին քաղաքացիների որոշ իրավունքների ու ազատությունների ժամանակավոր սահմանափակման անհրաժեշտություն այս կամ այն արտակարգ իրավիճակներում, այդ թվում՝ արտակարգ կամ ռազմական դրությունը գործողության մեջ դնելիս<sup>9</sup> : Միաժամանակ, արդի պայմաններում քաղաքացիների ցանկացած իրավունքների ու ազատությունների հնարավոր սահմանափակումները պետք է համապատասխանեն միջազգային իրավական նորմերին և իրականացվեն ազգային օրենսդրությանը խիստ համապատասխան<sup>10</sup> :

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան ու դրան կից արձանագրությունները, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը, Մարդու իրավունքների համընդ-

հանուր հռչակագիրը, ինչպես նաև մարդու իրավունքների միջազգային բազմաթիվ այլ փաստաթղթերի նորմեր վկայում են, որ այդ սահմանափակումները կարող են լինել միայն միջազգայնորեն ընդունված շրջանակներում, օրենքով սահմանված, իրավիճակին համաչափ: *Այսինքն՝ սահմանափակումները պետք է բխեն համաչափության սկզբունքից, այն է՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների ժամանակավոր սահմանափակումները պետք է համապատասխանեն վտանգի աստիճանին՝ լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր*: Նշված դրույթը լիովին տարածվում է նաև քաղաքացիների իրավունքների ու ազատությունների սահմանափակումների նկատմամբ արտակարգ կամ ռազմական դրության պայմաններում<sup>11</sup> :

Արտասահմանյան երկրների օրենսդրության և պրակտիկայի վերլուծությունը վկայում է այն մասին, որ իրավունքների ու ազատությունների սահմանափակումներն արտակարգ կամ ռազմական դրության ժամանակահատվածում, որպես կանոն, կրում են գործողության ծավալով և ժամանակով սահմանափակված բնույթ, կիրառվում են միայն համապատասխան օրենսդրական ակտի հիման վրա: Մարդու հիմնական անօտարելի իրավունքները պետք է անպայմանորեն պահպանվեն նույնիսկ արտակարգ կամ ռազմական դրությունը գործողության մեջ դնելու ժամանակ<sup>12</sup> : Այդ առնչությամբ չի կարելի պաշտպանել այն դիրքորոշումը, ըստ որի հնարավոր է ռազմական դրության պայմաններում կիրառել քաղաքացիների իրավունքների և ազատությունների ավելի լայնածավալ սահմանափակումներ, քան արտակարգ դրության պարագայում<sup>13</sup> :

Նշված սկզբունքն իր արտացոլումն է գտել նաև «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածում, այն է՝ ... առաջադրվող լրացուցիչ պարտավորությունները պետք է իրականացվեն այն սահմաններում, որոնք համարժեք են ռազմական դրություն հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքներին, ինչպես նաև պետք է համապատասխանեն մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հան-

րապետության միջազգային պարտավորություններին և բխեն ռազմական դրության պայմաններում (արտակարգ իրավիճակներում) պարտավորություններից շեղվելու վերաբերյալ միջազգային պարտավորություններից:

Եվրոպական սահմանադրական դատարանների կոնֆերանսի մասնակիցների ելույթներից երևում է, որ հատկապես ուշադրություն է դարձվել հետևյալ հանգամանքներին՝

1. մի շարք պետությունների սահմանադրություններում կամ օրենսդրությունում այն իրավունքներն ու ազատությունները, որոնք չեն կարող սահմանափակվել արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ,

2. մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակման համաչափությունն այն օրինական նպատակներին, որոնց հասնելու համար միայն կարող են սահմանափակվել որոշ իրավունքներ (ազգային անվտանգության, հասարակական կարգի պահպանության, բարոյականության, առողջության, այլոց իրավունքների պաշտպանության և այլն),

3. իրավունքի սահմանափակման ընթացքում իրավունքի էության աղավաղման անթույլատրելիությունը<sup>14</sup>:

Բնութագրական է, որ նման մոտեցումը համահունչ է ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածում ամրագրված նորմի հետ, համաձայն որի՝ արտակարգ և ռազմական դրության պայմաններում ենթակա չեն սահմանափակման ՀՀ Սահմանադրության 15, 17-22 և 42-րդ հոդվածներում նշված իրավունքները: Դրանք են՝ կյանքի (հոդ.15), խոշտանգումների չենթարկման (հոդ.17), իրավական պաշտպանության (հոդ.18), խախտված իրավունքների վերականգնման (հոդ.19), իրավաբանական օգնության (հոդ.20), իր, ամուսնու կամ մերձավոր ազգականի վերաբերյալ ցուցմունք չտալու իրավունքներն ու ազատությունները (հոդ.22), անմեղության կանխավարկածը (հոդ.21), և յուրաքանչյուրի ազատությունը կատարելու օրենքով չարգելվածը (հոդ.42): Վերը թվարկվածները մարդու այն բնական, անօտարելի (անքակտելի) իրավունքներն են, որոնք պատկանում են նրան ի ծնե և կազմում են նրա իրավական

կարգավիճակի հիմքը: Իրավունքների անօտարելիությունը արտահայտվում է նրանով, որ պետությունը որևէ պարագայում չի կարող զրկել մարդուն այդ իրավունքներից, հրաժարվել դրանք հարգելուց և պաշտպանելուց<sup>15</sup>:

***Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածի վերլուծությունից բնավ էլ չի բխում, որ բացառության շարքում չնշված հոդվածներում ամրագրված իրավունքներն ու ազատություններն արտակարգ և ռազմական դրության պայմաններում պարտադիր կարգով պետք է սահմանափակվեն: ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածը, ինչպես և 43-րդ հոդվածը, օգտագործում են «կարող է» եզրույթը, որը, առաջին հայացքից, համապատասխան մարմնին, կարծես թե, լայն հայեցողություն է վերապահում, սակայն ՀՀ Սահմանադրության նորմերի համակարգային մեկնաբանության պարագայում պարզ է դառնում, որ այս պարագայում ևս առկա են այնպիսի սահմանափակումներ, ինչպիսիք են իրավական պետության սկզբունքից բխող համաչափության սկզբունքը, միջազգային պարտավորությունները և այլն:***

**Արտակարգ և ռազմական դրության ընթացքում սահմանափակման ենթակա իրավունքներն ու ազատությունները դիտարկելիս անհրաժեշտություն է առաջանում անդրադառնալ արժանապատվության իրավունքի սահմանափակման հիմնահարցին:**

ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածում բացառություններ ներկայացնող հոդվածների շարքում բացակայում է ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածը, համաձայն որի՝ մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից: Ուստի հարց է առաջանում, թե արդյո՞ք արժանապատվության իրավունքը ենթակա է սահմանափակման, թե՛ ոչ:

Եթե առանց արժանապատվության իրավունքի բովանդակության մեջ խորամուխ լինելու փորձենք 44-րդ հոդվածը տառացի մեկնաբանել, ապա կստացվի, որ 14-րդ հոդվածը սահմանված չէ 44-րդ հոդվածում թվարկված բացառություն կազմող հոդվածների շարքում, հետևաբար՝ այն ենթակա է սահմանափակ-

ման, սակայն, մինչ նման, մեր կարծիքով, ոչ հիմնավոր եզրակացություն կատարելը, անհրաժեշտ է անդրադառնալ արժանապատվության իրավունքի բովանդակությանը և այն դիտարկելով համակարգային կապի մեջ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված մյուս իրավունքների հետ՝ պատասխանել այն հարցին, թե արդյո՞ք հնարավոր է սահմանափակել արժանապատվության իրավունքը, թե՛ ոչ, և արդյո՞ք այն բացարձակ է՝ անկախ այն հանգամանքից, թե զետեղված է այն ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածում թվարկված բացառությունների շարքում, թե՛ ոչ:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում նշվում է, որ մարդիկ ծնվում են ազատ ու հավասար իրենց արժանապատվությամբ և իրավունքներով:

ՀՀ Սահմանադրության վերլուծությունը վկայում է, որ մարդու արժանապատվության հասկացությունն օգտագործված է մի քանի ասպեկտով: ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածը մարդու արժանապատվությունը, մարդու հիմնական իրավունքների և ազատությունների հետ միասին հռչակում է որպես բարձրագույն արժեք: Վերոնշյալ դրույթը զետեղված լինելով ՀՀ Սահմանադրության սահմանադրական կարգի հիմունքներ բաժնում՝ ձեռք է բերում, ելակետային, համակարգաստեղծ բնույթ, դրանով իսկ պայմանավորում իրավակարգի գրեթե ողջ էությունը:

ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածում (որն արդեն իսկ ամրագրված է «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներ և ազատություններ» գլխում) սահմանվում է, որ մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից:

Արժանապատվության իրավունքը հանդիսանում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնական աղբյուրը, և որի պաշտպանությունը համարվում է պետության գոյության հիմնական պայմանը<sup>16</sup>: Խնդրահարույց իրավունքում արտահայտվում է արժանապատվության երկակի սահմանադրաիրավական բնույթը՝ որպես սուբյեկտիվ հանրային իրա-

վունքի և որպես հիմնարար օբյեկտիվ սահմանադրական պատվիրանի<sup>17</sup>: **Այսինքն՝ մարդու արժանապատվության իրավունքն այս պարագայում դադարում է միայն սուբյեկտիվ իրավունք լինելուց և ձեռք է բերում ավելի մեծ նշանակություն: Ուստի մարդու արժանապատվության բարձրագույն արժեք լինելը, որպես նրա իրավունքների և ազատությունների անքակտելի հիմք, ինչպես նաև մարդու արժանապատվությունը հարգելու պետության պարտականությունը ենթադրում է արժանապատվության (սուբյեկտիվ) իրավունքին որևէ միջամտության՝ ներառյալ ցանկացած սահմանափակման բացառում: Հակառակ պարագայում ամբողջությամբ կիմաստազրկվի 44-րդ հոդվածում բացառություն հանդիսացող իրավունքների թվարկումը, քանի որ, եթե կարող է սահմանափակվել բոլոր իրավունքների համար հիմք հանդիսացող իրավունքը, հետևաբար կարող են սահմանափակվել բոլոր իրավունքները:** Եթե այլ հիմնական իրավունքների դեպքում որոշակի նախադրյալների առկայությամբ պետությունը կարող է միջամտել դրանց, նաև սահմանափակումներ նախատեսել և իրականացնել, ապա արժանապատվության իրավունքի պարագայում պետության որևէ միջամտություն արդարացված չէ և ոչ մի դեպքում չի կարող համարվել սահմանադրական<sup>18</sup>:

**Այսպիսով, ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածով սահմանվում են մարդու և քաղաքացու առանձին հիմնական իրավունքներ, որոնք ենթակա չեն սահմանափակման անգամ արտակարգ և ռազմական դրության պայմաններում: Թեև անձի արժանապատվության իրավունքը ներառված չէ սահմանափակման չենթարկվող իրավունքների թվում, այնուամենայնիվ մարդու արժանապատվությունը, որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, ենթադրում է արժանապատվության (սուբյեկտիվ) իրավունքին որևէ միջամտության՝ ներառյալ ցանկացած սահմանափակման բացառում:**

**Մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների երաշխիքներն արտակարգ և ռազմական դրության պայմաններում**

Սահմանադրական իրավունքի տեսանկ-

www.lawinstitute.am

յունից մարդու և քաղաքացու իրավունքներին համապատասխանում է պետության պարտականությունը, որի գործնական իրացումը միայն կարող է իրական երաշխիք հանդիսանալ մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների ապահովման համար (հոդված 3)<sup>19</sup>:

Արտակարգ և ռազմական դրության պայմաններում անձի իրավական կարգավիճակի հիմունքների պահպանման երաշխիք են հանդիսանում նաև ՀՀ Սահմանադրության 18,19-րդ հոդվածներով նախատեսված ՀՀ-ում գոյություն ունեցող քաղաքացիների իրավունքների ու ազատությունների պաշտպանության միջոցները, ներառյալ՝ դատարան դիմելու հնարավորությունը («Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 14-րդ և Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 8-րդ հոդվածներ):

Արտակարգ և ռազմական դրության պայմաններում մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների երաշխիքներ են սահմանված նաև «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքում, որում, մասնավորապես, սահմանվում են ռազմական դրության պայմաններում իրականացվող միջոցառումների և ժամանակավոր **սահմանափակումների սահմանները**, այսինքն՝ դրանք այն սահմաններն են, որոնք համարժեք են ռազմական դրություն հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքներին, ինչպես նաև պետք է **համապատասխանեն մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին և բխեն ռազմական դրության պայմաններում (արտակարգ իրավիճակներում) պարտավորություններից շեղվելու վերաբերյալ միջազգային պարտավորություններից** (14-րդ հոդված): Նույն օրենքի 15-րդ հոդվածում ամրագրված է ռազմական դրություն հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքներից կամ դրանց հետևանքների վերացման գործողություններից տուժած ֆիզիկական անձանց կրած նյութական վնասի փոխհատուցումը և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով անհրաժեշտ օգնության տրամադրումը (ՀՀ կառավարության 2007 թվականի օգոստոսի 9-ի N 905-Ն որոշում<sup>20</sup>):

Եվ վերջապես, որպես երաշխիք հարկ է նշել, որ թե՛ արտակարգ դրության և թե՛ դրա բացակայության պարագաներում պետական իշխանությունն իրականացվում է ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Պետական մարմինները և պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են ՀՀ Սահմանադրությամբ և օրենսդրությամբ (ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդված): Կարևոր է նաև, որ հիմնական օրենքը անվերապահորեն սահմանափակում է պետական բոլոր կառույցների, այդ թվում նաև երկրի Նախագահի և Ազգային ժողովի իրավասություններն այնքանով, որքանով դրանք կարող են հակասել մարդու հիմնական իրավունքների և ազատությունների ոլորտում Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին:

Վերոգրյալն ընդհանրացնելով՝ կարելի է արձանագրել, որ արտակարգ և ռազմական դրության պայմաններում մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների հնարավոր սահմանափակումների սահմանումը ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով միևնույն ժամանակ գուցորդվում է այդ իրավունքների ապահովման համար սահմանված երաշխիքներով, որոնք փաստացի հնարավորություն են ընձեռում անձին օգտվելու իր հիմնական իրավունքներից, անարգել իրականացնելու և պաշտպանելու դրանք:

*Իրավական պետության, մարդը՝ որպես բարձրագույն արժեք հանդիսանալու, իշխանությունների բաժանման, տեղական ինքնակառավարման և մարդու իրավունքների այլ երաշխիքները չեն դադարում հատուկ իրավական ռեժիմների ընթացքում իրավունքների և ազատությունների պաշտպանության, անարգել իրականացման երաշխիքներ հանդիսանալ: Ավելին, արտակարգ և ռազմական դրության պայմաններում մարդու իրավական կարգավիճակի հիմունքների պահպանման երաշխիքները սահմանված են հենց ՀՀ Սահմանադրության մեջ: Այս ռեժիմների պայմաններում հա-*

**տուկ երաշխիքներն ըստ էության ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված այն իրավունքներն ու ազատություններն են, որոնք չեն կարող սահմանափակվել:**

**Արտակարգ և ռազմական դրության ժամանակ մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների երաշխիքների թվին իրենց ուրույն տեղն են զբաղեցնում ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորությունները**

Հաշվի առնելով, որ ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածը նախատեսում է սահմանափակումների իրականացումը բացառապես միջազգային պարտավորությունների շրջանակում, ուստի արտակարգ և ռազմական դրության ժամանակ մարդու և քաղաքացու իրավունքները և ազատությունները սահմանափակելիս անհրաժեշտ է հետևել այդ ստանձնած պարտավորություններին: «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 4-րդ հոդվածի և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 15-րդ հոդվածի համաձայն՝ պատերազմական կամ այլ արտակարգ իրավիճակներում, երբ սպառնալիքի տակ է բնակչության կյանքը, պետությունները ձեռնարկում են միջոցներ, որոնք հանդիսանում են շեղում նրանց կողմից ստանձնած իրավունքները երաշխավորող պարտավորություններից: Այդ շեղումները կարող են կիրառվել միայն այն չափով, ինչ չափով պահանջում է իրավիճակի հրատապությունը և պայմանով, որ այդ միջոցառումները համապատասխանեն պետությունների կողմից միջազգային իրավունքով ստանձնած այլ պարտավորություններին: Ծգնաժամը կամ արտակարգ դրությունն այն իրավիճակն է, որը «վերաբերում է ամբողջ բնակչությանը և սպառնալիք է ներկայացնում այն հանրության կազմակերպված կյանքին, որից կազմված է պետությունը»<sup>21</sup>:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի դրույթներից սահմանափակումների և շեղումների մեկնաբանության «Սիրակուզյան սկզբունքները» ամրագրում են, որ ոչ ներքին հակամարտությունն ու խժոժությունները, եթե չեն ներկայացնում լուրջ և անխուսափելի սպառ-

նալիք ազգի գոյությանը, ոչ տնտեսական դժվարությունները չեն կարող արդարացնել 4-րդ հոդվածով նախատեսված շեղումների կիրառումը<sup>22</sup>:

**Վերոգրյալը նշանակում է, որ երկրի ազգային օրենսդրությունը՝ արտակարգ դրության իրավական ռեժիմը սահմանող օրենքը, պետք է համապատասխանի այդ ոլորտում երկրի ստանձնած միջազգային պարտավորություններին, այսինքն՝ օրենքը պետք է երաշխավորի իրավական որոշակիությունը և կամայականությունից արդյունավետորեն պաշտպանելու կարողությունը:**

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 57-րդ հոդվածի հիման վրա պետությունները կարող են այն ստորագրելիս կամ վավերագիրն ի պահ հանձնելիս վերապահում անել Կոնվենցիայի ցանկացած դրույթի վերաբերյալ, միևնույն ժամանակ բացառիկ դեպքերում պարտավորություններից շեղումը պետք է խստորեն համապատասխանի Կոնվենցիայի 15-րդ հոդվածով նախատեսված կարգին (խնդրո առարկա հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ առաջին դրույթը չի կարող հիմք ծառայել շեղվելու 2-րդ հոդվածից՝ կյանքի իրավունքից, բացառությամբ պատերազմական գործողության հետևանքով մարդկային զոհերի կապակցությամբ, 3-րդ հոդվածից՝ խոշտանգումների արգելումից, 4-րդ հոդվածի 1-ին կետից՝ ստրկության կամ անազատ վիճակում պահելն արգելելուց և 7-րդ հոդվածից՝ պատիժը բացառապես օրենքի հիման վրա իրականացնելու իրավունքից): Կոնվենցիան տրամադրելով այսպիսի հնարավորություն՝ միևնույն ժամանակ պահանջում է, որ ցանկացած սահմանափակում, որպես այդպիսի շեղման հետևանք, հիմնավորվի օրինականությամբ և անհրաժեշտությամբ ու հնարավորության սահմաններում լինի կարճաժամկետ, վնաս չպատճառի այդ պետության կողմից իր վրա վերցրած մարդու իրավունքների և ազատությունների ապահովման այլ միջազգային պարտավորություններին<sup>23</sup>:

Համաձայն Կոնվենցիայի 15-րդ հոդվածի և Եվրոպական դատարանի համապատաս-



**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

խան որոշումների վերլուծության՝ մասնակից պետություններին արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու իրավունքի իրացման համար անհրաժեշտ են հետևյալ երեք պայմանները.

ա) արտակարգ իրավիճակը պետք է պայմանավորված լինի պատերազմի կամ ազգի գոյության համար սպառնալիքով,

բ) պետության կողմից Կոնվենցիայով ամրագրված պարտավորություններից շեղվելու հետ կապված ձեռնարկվող միջոցառումները պետք է պայմանավորված լինեն իրավիճակի լրջությամբ,

գ) նման միջոցառումները չպետք է անհամատեղելի լինեն միջազգային իրավունքին համապատասխան պետության ստանձնած այլ պարտավորությունների հետ<sup>24</sup>:

***Վերոգրյալը հիմք ընդունելով՝ կարելի է արձանագրել, որ ամեն դեպքում, թե պետությունը ինչպիսի և ինչ ծավալի սահմանափակումներ է իրականացնում հատուկ իրավական ռեժիմների գործողության պայմաններում, այնուամենայնիվ այն պետք է չհակասի միջազգային չափանիշներին՝ այդ ոլորտում ստանձնած պարտավորություններին, քանի որ ստանձնած պարտավորություններից անհամաչափ շեղվելու արգելքն իր հերթին հանդիսանում է երաշխիքների երաշխիք մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների նկատմամբ կիրառվող սահմանափակումների համար: Արդյունքում ՀՀ Սահմանադրությամբ սահմանված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման հիմքերը, նպատակները պետք է մեկնաբանվեն միջազգային փաստաթղթերին և ՄԻԵԳ նախադեպային իրավունքին համահունչ:***

**Արտակարգ դրության գործողության պայմաններում իրավունքների և ազատությունների սահմանափակումը**

Հայաստանի Հանրապետությունում երկրի բնականոն ռեժիմից տարբերվող արտակարգ դրության իրավական ռեժիմի սահմանման սահմանադրական հիմք է հանդիսանում ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 14-րդ կետը, համաձայն որի՝ Հանրապետության Նա-

խագահը՝ սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում, խորհրդակցելով Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ, հայտարարում է արտակարգ դրություն, իրականացնում է իրավիճակից թելադրվող միջոցառումներ և այդ մասին ուղերձով դիմում է ժողովրդին:

Արտակարգ դրություն հայտարարելու դեպքում իրավունքի ուժով անհապաղ գումարվում է Ազգային ժողովի հատուկ նիստ:

Ինչպես արդեն նշեցինք, թեպետ ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 14-րդ կետը նախատեսում է արտակարգ դրության իրավական ռեժիմը օրենքով սահմանելու պահանջ, սակայն առ այսօր նման օրենք չի ընդունվել:

Այս պահանջի կիրարկումն ապահովելու նպատակով՝ ՀՀ կառավարության 2008 թվականի գործունեության միջոցառումների ծրագրում ընդգրկվել և ներկայումս շրջանառության մեջ է դրվել «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի նախագիծը<sup>25</sup>: Նախատեսվում է, որ արտակարգ դրություն հայտարարելու մասին իրավական ակտում պետք է հստակ նշվի մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների ժամանակավոր սահմանափակումների, կիրառվող միջոցառումների և լրացուցիչ պարտավորությունների շրջանակը, ինչպես նաև արտակարգ դրության պայմաններում իրականացվող միջոցառումներն ու ֆիզիկական անձանց սահմանադրական իրավունքների և ազատությունների սահմանափակումները (տես՝ նախագծի 7-րդ հոդված):

Օրենքի բացակայությունը, սակայն, ՀՀ Սահմանադրության խախտում չէ, քանի որ նույն ՀՀ Սահմանադրության 117-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ մինչև արտակարգ դրության իրավական ռեժիմի սահմանումն օրենքով սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում Հանրապետության Նախագահը, խորհրդակցելով Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ, իրականացնում է իրավիճակից թելադրվող միջոցառումներ և այդ մասին ուղերձով դիմում ժողովրդին:

Կարելի է կարծել, որ արտակարգ դրության պայմաններում իրավունքների և ազա-

www.lawinstitute.am

տությունների սահմանափակման հիմքերը սահմանված են ՀՀ Սահմանադրության մեջ և կարող են սահմանվել նաև Հանրապետության Նախագահի արտակարգ դրության մասին հնարավոր հրամանագրերում: Ընդհանուր առմամբ այս պնդումը հեռու չէ ճշմարտությունից, սակայն ՀՀ օրենսդրության մեջ առկա են որոշ այլ ակտեր, որոնք ևս կարգավորում են այս հարաբերությունները<sup>26</sup>:

Օրենսդրական նման կարգավորումը, երբ նույն առարկային վերաբերվող դրույթները գետեղված են տարբեր իրավական ակտերում, իսկ ՀՀ Սահմանադրության ուղղակի պահանջը, որն ըստ էության պետք է կատարվեր 2005 թվականի սահմանադրական փոփոխություններից հետո երկու տարվա ընթացքում<sup>27</sup> չի կարող բավարար համարվել հարաբերությունների կարգավորվածությունը լիարժեք գնահատելու համար:

Սահմանադրական այդ կարգավորումներից հետո ՀՀ-ում մեկ անգամ է հայտարարվել արտակարգ դրություն:

Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական կարգին սպառնացող վտանգը կանխելու և բնակչության իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու նպատակով, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 14-րդ և 117-րդ հոդվածի 6-րդ կետերով, ՀՀ Նախագահը 2008 թվականի մարտի 1-ին՝ 20 օրով Երևան քաղաքում արտակարգ դրություն հայտարարելու մասին հրամանագիր ստորագրեց<sup>28</sup>: 2008 թվականի մարտի 10-ի ՀՀ Նախագահի հրամանագրով փոփոխություններ արվեցին մարտի 1-ին արտակարգ դրություն հայտարարելու մասին հրամանագրի 4-րդ կետում՝ մասնակիորեն վերացնելով նախատեսված սահմանափակումները:

Միևնույն ժամանակ, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 4-րդ հոդվածի համաձայն՝ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին ուղղված նամակով սույն դաշնագրի մյուս պետություններին անհապաղ տեղեկացվեց այն դրույթների մասին, որոնցից պետությունը շեղվել է՝ հայտարարելով արտակարգ դրություն, ինչպես

նաև հետագա փոփոխությունների և հրամանագրի դադարեցման մասին: 1990 թվականի Կոպենհագենի փաստաթղթի 24,25-րդ պարբերությունների և 1991 թվականի Մոսկվայի փաստաթղթի 28-րդ պարբերության համաձայն՝ նմանատիպ նամակներ փոխանցվեցին նաև ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 15-րդ հոդվածի համաձայն՝ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին:

Վերը նշված հրամանագրի 4-րդ կետով արտակարգ դրություն հայտարարված տարածքում սահմանվում էր հետևյալ ժամանակավոր սահմանափակումները՝

- 1) ժողովների, հանրահավաքների, ցույցերի, երթերի և այլ զանգվածային միջոցառումների իրականացման արգելում,
- 2) գործադուլների և կազմակերպությունների գործունեությունը դադարեցնող կամ կասեցնող այլ միջոցառումների արգելում,
- 3) իրավապահ մարմինների կողմից, անհրաժեշտության դեպքում, անձանց, տրանսպորտային միջոցների տեղաշարժի սահմանափակում և զննության իրականացում,
- 4) զանգվածային լրատվության միջոցների կողմից պետական և ներքաղաքական հարցերի առնչությամբ հրապարակումները կարող են իրականացվել բացառապես պետական մարմինների պաշտոնական տեղեկատվության սահմաններում,
- 5) առանց համապատասխան պետական մարմինների թույլտվության՝ թուղիկների և այլ ձևով քաղաքական քարոզչության իրականացման արգելում,
- 6) արտակարգ դրություն հայտարարելու համար հիմք ծառայող հանգամանքների վերացմանը խոչընդոտող կուսակցությունների և այլ հասարակական կազմակերպությունների գործունեության ժամանակավոր կասեցում,
- 7) արտակարգ դրության իրավական ռեժիմը խախտած և տվյալ տարածքում չբնակվող անձանց վտարում՝ նրանց միջոցների հաշվին, իսկ միջոցներ չլինելու դեպքում՝ Հայաստանի

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ կատարված ծախսերի հետագա փոխհատուցման պայմանով:

Մարտի 13-ին Հանրապետության Նախագահի հրամանագրով Հրամանագրի 4-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրվեց հետևյալ խմբագրությամբ. արգելվում է զանգվածային լրատվության միջոցների կողմից պետական և ներքաղաքական հարցերի առնչությամբ ակնհայտ սուտ կամ իրավիճակը ապակայունացնող տեղեկատվություն կամ առանց իրազեկման (ապօրինի) միջոցառումների մասնակցության կոչեր, ինչպես նաև նման տեղեկատվություն կամ կոչեր որևէ այլ եղանակով և ձևով հրապարակելը կամ տարածելը, իսկ 5-րդ ենթակետը ուժը կորցրեց<sup>29</sup>:

Հրամանագրում վիճահարույց էր 4-րդ կետի 6-րդ ենթակետը, քանզի ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ միավորումների գործունեությունը կարող է կասեցվել կամ արգելվել միայն օրենքով նախատեսված դեպքերում՝ դատական կարգով: Կուսակցությունների գործունեության կասեցման հիմքերը ՀՀ որևէ օրենքով սահմանված չեն, ուստի այն ՀՀ Նախագահի հրամանագրով չէր կարող սահմանափակվել<sup>30</sup>:

Այս հիմնախնդրին անդրադարձ է կատարված նաև Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի 2008 թվականի փետրվարի 19-ի նախագահական ընտրությունների և հետընտրական զարգացումների վերաբերյալ արտահերթ հրապարակային զեկույցում, որում մարդու իրավունքների պաշտպանը նաև մի շարք իրավական գնահատականներ է տվել:

**Իրավունքների և ազատությունների սահմանափակումը ռազմական դրության գործողության պայմաններում**

Ի տարբերություն արտակարգ դրության իրավական ռեժիմի՝ ռազմական դրության իրավական ռեժիմը սահմանված է օրենքով, այսինքն՝ ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 13-րդ կետի 4-րդ մասի պահանջը, այն է՝ «Ռազմական դրության իրավական ռեժիմը սահմանվում է օրենքով», կատարված է: Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին ՀՀ

օրենքն ընդունվել է 2006 թվականի դեկտեմբերի 6-ին<sup>31</sup>, մինչ այդ ռազմական դրության հետ կապված հարաբերությունները կարգավորված էին «Ռազմական դրության մասին» ՀՀ օրենքով<sup>32</sup>:

Եվ ի տարբերություն արտակարգ դրության՝ ռազմական դրություն Հայաստանի Հանրապետությունում երբեք չի հայտարարվել: Ռազմական դրության պարագայում ևս որոշ իրավունքների սահմանափակումը նախատեսված են այլ օրենքներով, սակայն դրանց հիմնական մասը զետեղված է հենց «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքում:

Օրենքի 8-րդ հոդվածը, որը վերնագրված է «Ռազմական դրություն հայտարարելու դեպքում իրականացվող միջոցառումները և ժամանակավոր սահմանափակումները», թվարկում է, թե ռազմական դրություն հայտարարվելու դեպքում ռազմական դրության ամբողջ ժամկետի ընթացքում որ միջոցառումները և ժամանակավոր սահմանափակումները կարող են իրականացվել:

ՀՀ Սահմանադրությամբ սահմանված մի շարք իրավունքներ, որոնք նշված չեն ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածի բացառությունների շարքում, բացակայում են նաև օրենքի 8-րդ հոդվածում: Մասնավորապես՝ 14.1-րդ հոդվածում ամրագրված խտրականության արգելքը, 16-րդ հոդվածում ամրագրված անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը, անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը (23-րդ հոդված), կարծիքն ազատ արտահայտելու և խոսքի ազատության իրավունքը (27-րդ հոդված), քաղաքացիության իրավունքը (30.1-րդ հոդված), ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու իրավունքը (30.2 հոդված), սոցիալական ապահովության իրավունքը (37-րդ հոդված), բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը (38-րդ հոդված), կրթության իրավունքը (39-րդ հոդված), ազգային և էթնիկական ինքնությունը պահպանելու իրավունքը (41-րդ հոդված) և այլն: Ուստի հարց է առաջանում, թե արդյո՞ք վերը նշված իրավունքները կարող են սահմանափակվել ռազմական դրության պայ-

www.lawinstitute.am

մաններում, քե՛ ոչ: ՀՀ Սահմանադրության 44-րդ և օրենքի 8-րդ հոդվածների վերլուծությունից կարելի է եզրակացություն կատարել, որ վերը նշված հոդվածներում ամրագրված իրավունքները ևս ռազմական դրության պայմաններում չեն կարող սահմանափակվել: ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածը չի սահմանում, որ բացառություն չհանդիսացող հոդվածներում նշված իրավունքները պարտադիր կարգով պետք է սահմանափակվեն, այլ սահմանում է, որ նրանք օրենքով սահմանված կարգով **կարող են** սահմանափակվել: Եթե վերջինիս ավելացնում ենք նաև այն, որ ռազմական դրության իրավական ռեժիմը հենց ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով է սահմանվում, իսկ օրենքը վերը նշված իրավունքների սահմանափակում չի նախատեսել, ապա եզրահանգումն այն է, որ Հանրապետության Նախագահը կարող է սահմանափակել բացառապես օրենքի 8-րդ հոդվածում սահմանված իրավունքները:

**ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածում սահմանված բացառությունները, կարծում ենք, լիարժեք չեն: Ինչպես արդեն ասացինք, բացառությունների շարքում բացակայում է նաև հավասարության և խտրականության արգելքի սկզբունքը, և վերոնշյալ նորմերի տառացի մեկնաբանության պարագայում ստացվում է, որ այն ևս օրենսդիրը կարող է սահմանափակել, սակայն ինչպես արժանապատվության իրավունքն էր, խտրականության արգելքի սկզբունքը մարդու իրավական կարգավիճակի անկյունաքարային տարրերից է և իրավական պետության բաղադրիչ, ուստի և սահմանափակման ոչ ենթակա:**

Օրենսդիրը ռազմական դրության ռեժիմի ընթացքում սահմանափակվող իրավունքների շարքը սահմանելիս կաշկանդված է ոչ միայն ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածով, այլ նաև իրավական պետության և սահմանադրական կարգի հիմունքներ գլխում ամրագրված այլ սկզբունքներով:

Այսպիսով, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված են մարդու և քաղաքացու առանձին իրավունքների սահմանափակում և նրանց լրացուցիչ պարտականությունները արտակարգ և ռազմական դրության պայմաններում: Այստե-

ղից հետևում է, որ քաղաքացիների իրավական դրությունը այդ ռեժիմների գործողության ժամանակահատվածում ունի իր բնութագրական գծերը և հատուկ առանձնահատկություններ, որոնք կայանում են այն բանում, որ արտակարգ և ռազմական դրության ռեժիմ ապահովող մարմինների կողմից օրենսդրությամբ սահմանված հիմքերով և այդ մարմիններին վերապահված լիազորությունների շրջանակներում կարող է սահմանափակվել առանձին իրավունքներն ու ազատությունները<sup>33</sup>:

Դրա հետ մեկտեղ, օրենսդրությունը նախատեսում է մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների սահմանափակում ռազմական դրության գործողության ժամանակահատվածում միայն այն չափով, որով դա անհրաժեշտ է երկրի պաշտպանությունը և պետության անվտանգությունն ապահովելու համար, և այն շրջանակներում, որը պահանջում է ստեղծված իրադրության սրությունը: Ավելին, միջազգային-իրավական նորմերը հաշվի առնելով՝ այդ կապակցությամբ ձեռնարկվող միջոցները չպետք է առաջացնեն առանձին-անձանց կամ խմբերի նկատմամբ խտրականությունը՝ բացառապես սեռի, ռասայի, ազգության, լեզվի, ծագման, գույքային և պաշտոնային դրության, բնակության վայրի, կրոնի, համոզմունքներին վերաբերվելու հասարակական միավորումներին պատկանելու հատկանիշներով, ինչպես նաև այլ հանգամանքներով<sup>34</sup>:

Նշված հանգամանքները կարևոր նշանակություն ունեն ընդհանուր առմամբ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների բնագավառում ՀՀ օրենսդրության զարգացման հեռանկարները որոշելու համար:

Այսպես կոչված «բացառիկ ռեժիմների» գործողության ժամանակահատվածում մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների սահմանափակման հիմնահարցի լուծումը հնարավոր է օրենսդրության կատարելագործման շրջանակներում՝ առանց ՀՀ Սահմանադրության նորմերի բովանդակության «ռեկվիզիտ»:

**Վերոգրյալը հիմք ընդունելով՝ հարկ է նշել, որ հատուկ իրավական ռեժիմները բնութագրվում են հակասական և երկակի բնույթով.**

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

մի կողմից կոչված են պահպանելու սահմանադրական կարգը, իրավակարգը և օրինականությունը, մյուս կողմից, ազգային անվտանգության, սոցիալական համերաշխության, օրինականության և իրականացման ծավալը:

<sup>1</sup> Տե՛ս Конституционное (государственное) право зарубежных стран: Учеб. / Под ред. Страшуна В.А. М., 1995.

<sup>2</sup> Տե՛ս Пчелинцев С.В. Проблемы ограничения прав и свобод граждан в условиях особых правовых режимов. М., 2006. С. 198.

<sup>3</sup> Տե՛ս Европейское право. Право Европейского Союза и правовое обеспечение защиты прав человека: Учебник для вузов / Отв. ред. Энтин Л.М. 2-ое издание. М., 2005. С. 296-298.

<sup>4</sup> Տե՛ս Пчелинцев С.В. Об ограничении прав и свобод граждан в условиях военного положения / Журнал Российского права, N 2. 2002.

<sup>5</sup> Տե՛ս Հարությունյան Գ. Գ. Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, Եր.: Նժար, 2005, էջ 188-193:

<sup>6</sup> Տե՛ս Մարդու իրավունքների սահմանափակման չափանիշները սահմանադրական արդարադատության պրակտիկայում, Միջազգային խորհրդաժողովի նյութերի համառոտ ամփոփում, Երևան, 2005, էջ 13-14:

<sup>7</sup> Տե՛ս Դանիելյան Գ. 44-րդ հոդվածի մեկնաբանություններ, ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ /ընհանուր խմբագրությամբ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Եր: «Իրավունք», 2010, էջ 520:

<sup>8</sup> Տե՛ս Դանիելյան Գ. 44-րդ հոդվածի մեկնաբանություններ, նույն տեղում, էջ 518-526:

<sup>9</sup> Տե՛ս Рыбкин И.П. К безопасности через согласие и доверие. М., 1997. Строев Е. Становление России завтрашней: опасности и шансы. Полис, 1996. N 4. С. 6-15.

<sup>10</sup> Տե՛ս Оскар Арес. Безопасность человека - наша общая ответственность. Разоружение. Т. XIX, N 3. Нью-Йорк: ООН, 1996. С. 16-17.

<sup>11</sup> Տե՛ս Станкевич З.А., Безопасную жизнь нам никто не подарит // Национальные интересы. 2004. N 3. С. 34-35.

<sup>12</sup> Տե՛ս Родионов И.Н. Государство сильно обороной // Ориентир. 1995. N 7.

<sup>13</sup> Տե՛ս Коротков А.П., Соковых Ю.Ю. Правовые средства управления кризисными ситуациями: сравнительный анализ международно-правового и внутригосударственного регулирования // Государство и право. N 10. 1997. С. 70.

<sup>14</sup> Տե՛ս VIII Ереванская международная конференция. Основные критерии оценки ограничений прав человека в практике конституционного правосудия (Альманах 2003).

<sup>15</sup> Տե՛ս Баглай М.В. Конституционное право РФ. М., 1998. С. 167.

<sup>16</sup> Տե՛ս Այվազյան Վ. Մարդու իրավունքներ և ազատություններ: Ուս. ձեռնարկ. Եր.: Տիգրան Մեծ, 2007, 590 էջ:

<sup>17</sup> Տե՛ս Հարությունյան Ա. 14-րդ հոդվածի մեկնաբանություններ, ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ /ընհանուր խմբագրությամբ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Եր: «Իրավունք», 2010:

<sup>18</sup> Տե՛ս Հարությունյան Ա. 14-րդ հոդվածի մեկնաբանություններ, ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ /ընհանուր խմբագրությամբ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Եր: «Իրավունք», 2010:

<sup>19</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրական իրավունք, դասագիրք բուհերի համար, Երևան, 2008, էջ 315:

<sup>20</sup> Տե՛ս ՀՀ ՊՏ 2007/42 (566) 22.08.07:

<sup>21</sup> Տե՛ս Լոուլեսն ընդդեմ Իռլանդիայի գործով (1961), կետ 28: Questiaux Principles: Nicole Questiaux “Study of the implications for human rights of recent developments concerning situations known as states of siege or emergency” UN Doc. E/CN.4/Sub.2/1982/15, 27 Jul 1982:

<sup>22</sup> Տե՛ս Սիրակուզյան սկզբունքներ, կետ 40-41: Հավելված, UN Doc./E/CN.4/1984/4 (1984)5:

<sup>23</sup> Տե՛ս «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների մեկնաբանություն: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունք: Եր.: Տիգրան Մեծ, 2005, 528 էջ:

<sup>24</sup> Տե՛ս «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների մեկնաբանություն: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունք, նույն տեղում, էջ 422:

- <sup>25</sup> Տե՛ս «Արտակարգ դրության իրավական ռեժիմի միասին» ՀՀ օրենքի լրամշակված տարբերակ Կ-057-31.07.2007, 21.10.2009-ՊԱ-010/0. <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=18501>:
- <sup>26</sup> Տե՛ս ՀՀ աշխատանքային օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ մաս, «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մաս, «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մաս:
- <sup>27</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, հոդված 117, մաս 1. (Ազգային ժողովը երկու տարվա ընթացքում համապատասխանեցնում է գործող օրենքները ՀՀ Սահմանադրության փոփոխություններին):
- <sup>28</sup> Տե՛ս ՀՀ Նախագահի «Արտակարգ դրություն հայտարարելու մասին» 01.03.2008 թվականի հրամանագիր:
- <sup>29</sup> Տե՛ս ՆՀ 38-ն հրամանագիր:
- <sup>30</sup> Տե՛ս 22 դեկտեմբերի 2006 թվականի թիվ ՍԳ-Ո-669 որոշում («Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 31 հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը):
- <sup>31</sup> Տե՛ս ՀՀ ՊՏ 2007/4 (528) 17.01.07:
- <sup>32</sup> Տե՛ս ՀՀ ՊՏ 1997/15 (528) 26 07.97:
- <sup>33</sup> Տե՛ս Путин В.В. Через исцеление прошлого– к совместному строительству безопасного гуманного будущего // Право и безопасность, 2005, N 3. С. 8-12.
- <sup>34</sup> Տե՛ս Левашов В.К. Глобализация, социальная безопасность и национальная стратегия развития // Национальные интересы. 2001. N 5-6.

#### РЕЗЮМЕ

##### *Правомерность ограничения прав и свобод человека и гражданина в условиях действия чрезвычайного и военного положений*

В статье представлена одна из актуальных проблем конституционного права, относящаяся к правомерности ограничения прав и свобод человека и гражданина в условиях действия чрезвычайного и военного положений. Придана важность опасности злоупотребления властью в этих условиях и необходимости действия соответствующих конституционных гарантий.

Проведен разносторонний анализ положений ст. 44 Конституции РА, указав на различия по сравнению с ограничениями, предусмотренными ст. 43 Конституции РА.

#### SUMMARY

##### *The legitimacy of limitation on human and civil rights and freedoms in conditions of emergency and martial law*

The article presents one of the actual problems of constitutional law relating to the legitimacy of limitation on human and rights and freedom in conditions of emergency and martial law. In the article is highlighted the danger of abuse of authority in these conditions and the necessity for action by appropriate constitutional guarantees.

It is comprehensively analyzed the provisions of Art.44 the differences compared with the limitations determined by Art. 43 of the RA Constitution.

### ԿԱՐԱՊԵՏ ՀԱԿՈՒՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ



## ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՆՐԱ ԴԵՐԸ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՉԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Կայուն քաղաքացիական հասարակության առկայությունը Հայաստանի Հանրապետությունում հնարավոր է միայն այն դեպքում, երբ այն պետության հետ գտնվում է կայուն իրավական կապի և գործընկերային հավասար հարաբերությունների մեջ: Կախված այն հանգամանքից, թե այդ համագործակցությունը ինչ ճանապարհով կընթանա, վերջին հաշվով պայմանավորված է Հայաստանի Հանրապետության՝ զարգացած և կայուն քաղաքացիական հասարակությամբ իրավական-ժողովրդավարական պետություն լինելու կամ չլինելու փաստը: Չնայած որոշ խնդիրների առկայությանը՝ պետական կառույցների բյուրոկրատիզմ, ժողովրդավարական որոշ կառույցների ձևական բնույթ, շուկայական հարաբերությունների զարգացման ցածր մակարդակ, որոնք խոչընդոտներ են ստեղծում մեր երկրում իրավական պետության և քաղաքացիական հասարակության ձևավորման համար, այնուամենայնիվ կատարվել է շատ կարևոր մի քայլ քաղաքացիական հասարակության դիրքերի ամրապնդման տեսանկյունից, ստեղծվել է համալիր ինստիտուտ՝ Հանրային խորհուրդը, որը կորդինացնում է քաղաքացիական հասարակության բազմաթիվ ինստիտուտների հույսերն ու գործունեությունը:

Հայաստանի Հանրապետությունում Հանրային խորհրդի ստեղծման գաղափարը 2008թ. մայիսին առաջ է քաշվել ՀՀ նորընտիր Նախագահ Սերժ Սարգսյանի կողմից: Կառույցը ՀՀ Նախագահի նախաձեռնությունն էր՝ ի պատասխան երկրի առջև ծառայած մի շարք մարտահրավերների: Այն պիտի ապահովի հասարակության բոլոր հատվածների՝ հատկապես քաղաքական, էթնիկ, կրոնական և այլ փոքրամասնությունների կարիքների ու շահերի ներառումը քաղաքականության մշակման գործընթացում, նրանց իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը որոշումների

կայացման գործընթացում, պիտի նպաստի հասարակության ակտիվ մասնակցությանը հանրային կառավարման տարբեր ոլորտներում:

Իրենց իրավական բնույթով քաղաքացիական հասարակությանը անմիջականորեն չառնչվող, սակայն նրա տեսական ոլորտում գործող ինստիտուտների շարքում կարելի է առանձնացնել պետական կազմավորումների որոշակի կատեգորիա, որոնք նպաստում են քաղաքացիական հասարակության կառուցվածքային տարրերի ձևավորմանն ու կայացմանը: Այդպիսի հիմնարար ինստիտուտ կարելի է համարել Հանրային խորհուրդը, որի ձևավորման կարևորագույն նպատակներից մեկը պետական իշխանության մարմիններին ժողովրդի, բնակչության խնդիրների ու հոգսերի իրազեկման հարցի լուծումն է, ինչը հատկապես կարևորվում է նրանով, որ ցանկացած երկրում քաղաքացիական հասարակության ձևավորումը զուգորդվում է հասարակությունում տարբեր (զերազանցապես ապաքաղաքականացված) հանրային կառույցների ստեղծմամբ, որոնք իրենցից ներկայացնում են քաղաքացիների և նրանց գործունեության ձևերի ամենատարբեր միավորումներ: Հասարակության բարեկեցությունը նախևառաջ ենթադրում է անձի և քաղաքացու պահանջմունքների և շահերի առավելագույն բավարարման հնարավորությունների առկայություն<sup>1</sup>: Ամեն դեպքում քաղաքացիական հասարակությունը ձևավորվում ու զարգանում է իրավական պետությանը զուգահեռ, այդ պատճառով նրա հիմնական համակարգային տարրերը ստանում են իրավական, իսկ հաճախ նաև սահմանադրաիրավական ամրագրում՝ արտահայտված քաղաքական կուսակցությունների, կրոնական կազմակերպությունների, հասարակական միավորումների, զանգվածային լրատվամիջոցների և այլ հիմնարար ինստիտուտների տեսքով, և մարդկային կացութաձևի ձևավորման տեսանկյունից հանդի-

www.lawinstitute.am

սանում է որոշակի միջանկյալ իրավիճակ անհատի մասնավոր կյանքի և Հանս Քելզենի դիպուկ բնութագրմամբ՝ պետություն հորջորջված քաղաքական հասարակության միջև:

Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական հասարակության ձևավորումը ընթանում է այսպես կոչված կառավարվող ժողովրդավարության ճանապարհով, քաղաքացիական հասարակության տարրերի արհեստական ներմուծմամբ՝ արտահայտված դրա հիշատակմամբ առանձին իրավական ակտերում, օրինակ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում<sup>2</sup>, «Կրթության մասին» ՀՀ օրենքում<sup>3</sup>, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում<sup>4</sup> և այլն:

Բացառություն չի նաև ՀՀ Նախագահի կողմից խորհրդակցական մարմնի կարգավիճակով կազմավորվող «Հանրային խորհուրդը», որը ստեղծվել է ոչ թե քաղաքացիների կամ նրանց միավորումների նախաձեռնությամբ, այլ պետական իշխանության մարմինների ակտիվ (այդ թվում նաև ֆինանսական) աջակցության շնորհիվ: Այս մարմինը իր գործունեությամբ դեռ պետք է ապացուցի իր կենսունակությունը՝ քաղաքացիական հասարակության դիրքորոշումն արտահայտող որոշումների ընդունման միջոցով, որոնք չնայած ունեն խորհրդատվական բնույթ, սակայն կարող են կարևոր նշանակություն ունենալ պետական իշխանության տարբեր մարմինների կողմից այս կամ այն խնդրի լուծման համար:

Հայաստանի Հանրապետության «Հանրային խորհրդի» կազմավորման և գործունեության գաղափարի հիմքում ընկած է ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդվածում ամրագրված ՀՀ քաղաքացիների՝ ինչպես անմիջականորեն, այնպես էլ կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը մասնակցելու իրավունքը: ՀՀ «Հանրային խորհրդի» գործունեությունն իրականացվում է ՀՀ Սահմանադրության, օրենքների, ՀՀ Նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Հանրային խորհրդի կանոնադրության և նորմատիվ իրավական այլ ակտերի հիման վրա:

Հանրային խորհրդի ինստիտուտը տարածված է աշխարհի մի շարք երկրներում, այդ թվում՝ Ֆրանսիայում, Ռուսաստանում, Ղազախստանում, որոշ յուրահատկությամբ Մեծ Բրիտանիայում և այլն: Ցանկացած երկրում այս ինստիտուտի կա-

յացման մեջ մեծ դերակատարում ունի ինքը՝ հասարակությունը: Հանրությունն իր հերթին կարող է ապահովել իր դերակատարումը, եթե առաջին հերթին տեղեկացված է կառույցի առօրյա գործունեության առաջնահերթությունների, աշխատածների և ունեցած արդյունքների վերաբերյալ:

Հանրային խորհուրդը հանդիսանում է յուրօրինակ միջնորդ իշխանության և սոցիալական տարբեր խմբերի միջև: Այն երկխոսության, քաղաքացիական նախաձեռնությունների քննարկման ինքնատիպ հարթակ է, որի կարևորագույն խնդիրներից է հանրային հնչեղություն ունեցող խնդիրների, օրենքների և որոշումների նախագծերի, ինչպես նաև այլ առաջարկությունների ու նախաձեռնությունների հասարակական փորձաքննության իրականացումը և եզրակացության ներկայացումը ՀՀ Նախագահին, ինչպես նաև հասարակական վերահսկողության իրականացումը՝ նպաստելով պետական կառավարման համակարգի նկատմամբ հասարակության վստահության աճի բարձրացմանը<sup>5</sup>:

Հանրային խորհրդի կարգավիճակն ամրագրված է ՀՀ Նախագահի՝ «Հանրային խորհուրդ ստեղծելու մասին» 2008թ. հունիսի 13-ի թիվ ՆՀ-157-Ա հրամանագրով, համաձայն որի՝ այն ունի խորհրդակցական մարմնի կարգավիճակ<sup>6</sup>: Ի տարբերություն քաղաքացիական հասարակության մյուս սուբյեկտների, որոնք արտահայտում են առանձին մասնագիտական կամ սոցիալական խմբերի (կանանց, թոշակառուների, երիտասարդների, փաստաբանների, գործարարների և այլն) շահերն ու դիրքորոշումները, Հանրային խորհուրդը, ըստ էության, ներկայացնում է հայ հասարակության բոլոր շերտերի շահերն ու խնդիրները՝ «քաղաքացիներ» ընդհանուր տերմինի օգտագործմամբ: Ընդհանուր առմամբ այս արտահայտությունն անհաջող է, քանի որ ձևական իմաստով հնարավորություն չի տալիս ներկայացնել ՀՀ տարածքում գտնվող, սակայն ՀՀ քաղաքացի չհանդիսացող անձանց շահերը:

Հանրային խորհրդի գործունեության բովանդակությունը ընդհանուր առմամբ կարելի է բնութագրել որպես համագործակցային: Տվյալ դեպքում խոսքը գնում է այսպես կոչված հակադարձ կապի ստեղծման մասին, այսինքն՝ տեղեկատվության փոխանակման քաղաքացիների և ՀՀ Նախագահի՝ «Հանրային խորհրդի կանոնադրու-

www.lawinstitute.am



թյունը հաստատելու և Հանրային խորհրդի անդամներ նշանակելու մասին» 2009թ. մարտի 11-ի թիվ ՆԿ-36-Ն կարգադրությամբ հաստատված Հանրային խորհրդի կանոնադրության մեջ նշվող պետական իշխանության մարմինների միջև:

Ըստ էության Հանրային խորհրդի խնդիրներով պայմանավորված նրա գործունեությունը կարելի է բաժանել մի քանի ուղղությունների. նախ՝ ՀՀ քաղաքացիների, հասարակական միավորումների շահերի ներկայացումը պետական քաղաքականության մշակման և իրականացման գործում՝ վերջիններիս կողմից արված առաջարկությունների և բողոքների ուսումնասիրման, վերլուծության ու դրանց ծագման պատճառների մասին ՀՀ Նախագահին եզրակացությունների ներկայացման ճանապարհով: Երկրորդ՝ ՀՀ օրենքների, նորմատիվ իրավական այլ ակտերի (այդ թվում՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերի) նախագծերի հասարակական փորձաքննության իրականացումը, և երրորդ կարևորագույն ուղղությունը՝ հասարակական վերահսկողության իրականացումը՝ նպաստելով պետական կառավարման համակարգի նկատմամբ հասարակության վստահության աճի բարձրացմանը: Նշված հիմնարար խնդիրների լուծումը նախևառաջ պայմանավորված է հասարակական վերահսկողության իրականացման արդյունավետ մեխանիզմների ու համակարգերի ստեղծմամբ ու կիրարկմամբ:

ՀՀ Նախագահի՝ «Հանրային խորհրդի կանոնադրությունը հաստատելու և Հանրային խորհրդի անդամներ նշանակելու մասին» 2009թ. մարտի 11-ի թիվ ՆԿ-36-Ն կարգադրությամբ հաստատված Հանրային խորհրդի կանոնադրության առաջին գլխի 3-րդ կետով սահմանվում է քաղաքացիական հասարակության սուբյեկտների շրջանակը, որոնց կամավոր մասնակցության սկզբունքի վրա հիմնվում է Հանրային խորհրդի գործունեությունը: Դրանք են՝ ՀՀ քաղաքացիները, հասարակական միավորումները և սփյուռքի ներկայացուցիչները:

«ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի են սույն օրենքին համապատասխան Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերած անձինք: Նույն օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը հաստատող փաստաթղթերն են Հայաստանի Հանրապե-

տության քաղաքացու անձնագիրը, իսկ մինչև 16 տարին լրանալը՝ նաև ծննդյան վկայականը կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը հաստատող վկայականը: Ընդհանուր ճանաչում ստացած սահմանման համաձայն՝ քաղաքացիությունը պետության հետ անձի կայուն իրավական կապն է՝ հիմնված պետության կողմից տվյալ անձին որպես իր քաղաքացի իրավաբանական ճանաչման վրա, որն օրենքով նախատեսված դեպքերում պետության և քաղաքացու համար առաջ է բերում փոխադարձ իրավունքներ, պարտականություններ և պատասխանատվություն<sup>7</sup>: Պետք է նշել, որ Հանրային խորհրդի ձևավորմանը մասնակցելու իրավունքից օգտվում են ոչ բոլոր քաղաքացիները, այլ միայն նրանք, որոնց ընտրում և նշանակում է ՀՀ Նախագահը (12 անդամ) և նրանք, որոնք առաջադրվում են համապատասխան ոլորտների կազմակերպությունների, միավորումների, հայրենակցական և ստեղծագործական միությունների, երիտասարդական ու ուսանողական կազմակերպությունների, զանգվածային լրատվության միջոցների, վետերանների միությունների, գիտակրթական կազմակերպությունների, սպառողների իրավունքների պաշտպանության, գործարարների ու արդյունաբերողների միությունների, կրոնական կազմակերպությունների, սփյուռքի կառույցների, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կառույցների կողմից:

Ինչ վերաբերում է հասարակական միավորումներին, ապա պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում գոյություն չունի «Հասարակական միավորումների» մասին առանձին իրավական ակտ, որում հստակ սահմանված կլինի հասարակական միավորման բնորոշումը: Սակայն նրանց իրավական կարգավիճակը կարգավորվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, առանձին տեսակի հասարակական միավորումների իրավական կարգավիճակը սահմանող իրավական ակտերով («խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքով, «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով և «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքով): Նշված իրավական ակտերի տեսական վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ հասարակական միավորումները շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի

կարգավիճակ ունեցող կամ չունեցող, պետական գրանցում ստացած կամ չստացած կազմավորումներ են: Իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող և պետական գրանցում պահանջող հասարակական միավորումների թվին դասվում են բացառապես կրոնական կազմակերպությունները, կուսակցությունները, արհեստակցական միությունները և հասարակական կազմակերպությունները: Իսկ ինչ վերաբերում է այն հասարակական միավորումներին, որոնք չունեն պետական գրանցում, դրանք չունեն նաև իրավաբանական անձի կարգավիճակ, և նրա վրա չեն տարածվում դրանից բխող իրավունքներն ու պարտականությունները: Սակայն եթե գրանցում չունեցող հասարակական միավորումը ցանկանում է ստանալ իրավաբանական անձի կարգավիճակ, այն կարող է պետական գրանցում ստանալ միայն հիշատակված կազմակերպատիրական ձևերի շրջանակներում:

Հանրային խորհրդի գործունեության մեջ շատ կարևոր է նաև սփյուռքի ներկայացուցիչների մասնակցության սկզբունքը: Սփյուռքը հսկայական դեր և ներդրում ունի Հայաստանի Հանրապետության կայացման ու սոցիալ-տնտեսական զարգացման գործում: Հայկական սփյուռք ասելով հասկացվում է օտարերկրյա պետություններում գործող բոլոր հայկական մշակութային, բարեգործական, հայրենակցական, երիտասարդական, կրթական, գիտական, արհեստակցական, գաղափարական, կոմիտեական կազմակերպությունները, տարբեր հոգևոր միաբանությունները, հաստատությունները, կառույցները, միությունները, հիմնադրամները կամ միավորումները, զանգվածային լրատվության միջոցները և այլ մարմինները, անհատները: Հանրային խորհրդի կանոնադրության մեջ նշված սփյուռքի ներկայացուցիչներ արտահայտությունը բնականաբար հնարավորություն է տալիս Հանրային խորհրդի աշխատանքներին մասնակցել նշված բոլոր մարմիններին և անհատներին:

Հանրային խորհրդի կանոնադրության մեկնաբանվող կետը սահմանում է Հանրային խորհրդի աշխատանքներին մասնակցելու միայն մեկ սկզբունք՝ կամավորությունը, ինչը նշանակում է, որ անձը, ստանալով առաջարկ՝ անդամակցել Հանրային խորհրդին, իրավունք ունի ընդունել կամ մերժել առաջարկը:

Հանրային խորհրդի կանոնադրության 3-րդ

գլխի 10-րդ կետը սահմանում է, որ Հանրային խորհրդի անդամ կարող է լինել 18 տարին լրացած յուրաքանչյուր անձ՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից: Իհարկե, կանոնադրությունը, սահմանելով 18 տարին լրացած յուրաքանչյուր անձի՝ Հանրային խորհրդին անդամակցելու հնարավորությունը, բնականաբար նախատեսում է սահմանափակումներ որոշակի կատեգորիայի անձանց համար: Այսպես, Հանրային խորհրդի անդամ չեն կարող լինել ՀՀ Նախագահը, Ազգային ժողովի պատգամավորները, ՀՀ կառավարության անդամները, սահմանադրական դատարանի անդամները, դատավորները, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարները, զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության և դատախազության մարմինների ծառայողները, դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձինք, հանցագործության համար դատապարտված անձինք, որոնց դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից խուսափած անձինք:

Ակնհայտ է, որ Հանրային խորհուրդն առավել անկախ դարձնելու համար անհրաժեշտ է նրա ձևավորման ավելի արդյունավետ կառուցակարգ՝ քաղաքացիների կողմից թեկնածուներ առաջադրելու և քվեարկելու ճանապարհով:

Պետք է նշել, որ անհատը սուբյեկտիվ էակ է, այդ պատճառով ցանկացած հասարակարգում գոյություն ունեն բազմաթիվ և նույնիսկ հակասական կարծիքներ, և որքան ժողովրդավարական է տվյալ հասարակարգի քաղաքական (պետական) ռեժիմը<sup>8</sup>, այնքան ավելի շատ դիրքորոշումներ են կենտրոնանում նրանում, ինչը բնականաբար մեծացնում է քաղաքացիական հասարակության տարբեր անդամների շահերի բախման հավանականությունը: Ըստ էության այդ շահերի կարգավորիչն ու ուղղորդողը հենց պետությունն է՝ ի դեմս իր մարմինների: Սակայն դա չի բացառում ոչ պետական կառույցների կողմից այդ շահերի վերհանման ու ներկայացման հնարավորությունը:

Բնականաբար ո՛չ պետությունը, ո՛չ առավել ևս Հանրային խորհուրդը ի վիճակի չեն ապահովել նույնիսկ սոցիալ-տնտեսական մեծ զարգացում ու-

նեցող հասարակության բոլոր անդամների շահերի բավարարումը: Այդ պատճառով որպես վերհանման ենթակա խնդիրների չափորոշիչ՝ Հանրային խորհրդի կանոնադրությունը համարում է դրանց հանրային կարևորությունը: Այլ կերպ ասած, որքան շատ է տվյալ խնդրով շահագրգռված հասարակության անդամների քանակը, այնքան պետք է բարձր լինի տվյալ հարցի լուծման հավանականությունը:

Պետք է նաև նշել, որ հասարակության անդամների շահերը ոչ միշտ են համընկնում պետության հանրային իշխանության մարմինների շահերի հետ: Օրինակ, հազիվ թե քաղաքացին անմիջականորեն շահագրգռված լինի ազգային անվտանգության կամ սահմանադրական կարգի ապահովման գործում: Նրանց շահերը ավելի մասնավոր են և անձնական, այդ պատճառով էլ և՛ քաղաքացիների, և՛ պետության շահերը համաձայնեցման անհրաժեշտություն ունեն, ինչն էլ հենց կոչված է ապահովելու Հանրային խորհուրդը:

Հանրային խորհուրդը ստեղծվել է ՀՀ Նախագահի՝ «Հանրային խորհուրդ ստեղծելու մասին» 2008թ. հունիսի 13-ի թիվ ՆՀ-157-Ա հրամանագրով: ՀՀ Նախագահի՝ «Հանրային խորհրդի կանոնադրությունը հաստատելու և Հանրային խորհրդի անդամներ նշանակելու մասին» 2009թ. մարտի 11-ի թիվ ՆԿ-36-Ն կարգադրությամբ հաստատված Հանրային խորհրդի կանոնադրության համաձայն՝ Հանրային խորհուրդը կազմավորվում է չորս տարի ժամանակով:

Հանրային խորհուրդը նպաստում է ժողովրդավարական համակարգի զարգացմանը, մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքների և ազատությունների ապահովմանը, հասարակության մեջ անհանդուրժողականության մթնոլորտի առաջացման կանխարգելմանը և քաղաքացիական հասարակության կայուն զարգացմանն ու ամրապնդմանը, պետական իշխանության մարմինների և քաղաքացիների, հասարակական այլ միավորումների (քաղաքացիական ինստիտուտների) միջև փոխադարձ վստահության կայացմանը, հասարակության և իշխանության միջև երկխոսության ու վստահելի գործընկերային հարաբերությունների ձևավորմանը, պետական կառավարման մեջ նրանց ներգրավվածության աստիճանի բարձրացմանը, ինչպես նաև հասարակական վերահսկողության իրականացմանը:

Հանրային խորհրդի գործունեության առաջնահերթ ուղղություններից են ՀՀ օրենքների, նորմատիվ իրավական այլ ակտերի (այդ թվում տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերի) նախագծերի հասարակական փորձաքննության իրականացումը, Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական հասարակության ամրապնդման և զարգացման ուղղությամբ պետական քաղաքականության առաջնահերթությունների հստակեցումը, վերլուծությունը և պետական իշխանության մարմիններին առաջարկությունների ներկայացումը, հասարակական վերահսկողության իրականացումը՝ նպաստելով պետական կառավարման համակարգի նկատմամբ հասարակության վստահության աճի բարձրացմանը:

Նորաստեղծ Հանրային խորհուրդը իր գործունեության ընթացքում անդրադարձել է հանրային հնչեղություն ունեցող այնպիսի խնդիրների, ինչպիսիք են Երևանի «Մոսկվա» կինոթատրոնի ամառային դահլիճի ապամոնտաժման հարցը, ՀՀ տարածքում օտարալեզու հանրակրթական ուսումնական հաստատություններ հիմնելու հարցը, համաներմանն առնչվող խնդիրը և այլ հարցեր ու համապատասխան առաջարկություններ ներկայացրել ՀՀ կառավարությանը և ՀՀ Նախագահին<sup>9</sup>:

2009թ. Հանրային խորհուրդը հայցով դիմել է Տնտեսական և սոցիալական խորհուրդների և համանման կառույցների միջազգային ասոցիացիային (այսուհետ՝ ՏՄԽՄԱ), նախ ասոցիատիվ անդամի կարգավիճակով, իսկ հետո նաև լիարժեք անդամ դառնալու ցանկությամբ: Հայաստանի Հանրապետության Հանրային խորհրդի անդամակցությունը ՏՄԽՄԱ-ին շատ արդյունավետ կարող է դառնալ ինչպես այլ երկրների ՏՄԽ-ների հետ փորձի փոխանակման և գործունեության բարելավման, այնպես էլ հենց Հայաստանում դրա դերի բարձրացման տեսանկյունից:

Հանրային խորհուրդը կազմված է 36 անդամներից: Կազմավորված Հանրային խորհրդի կազմում ընդգրկված են 30 տղամարդ և 6 կին, որոնք բոլորն էլ ունեն բարձրագույն կրթություն: Հանրային խորհրդի անդամները հասարակական-քաղաքական գործիչներ են, գիտնականներ, արվեստի և մշակույթի ներկայացուցիչներ, լրագրողներ, իրավաբաններ, գործարարներ և այլն:

Հանրային խորհրդին կից ձևավորվում և

գործում է 12 հանձնաժողով: Դրանք են՝

- 1) գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի հանձնաժողով,
- 2) պետաիրավական հարցերի հանձնաժողով,
- 3) քաղաքացիական հասարակության կայացման հարցերի հանձնաժողով,
- 4) ֆինանսատնտեսական-բյուջետային հարցերի հանձնաժողով,
- 5) գյուղատնտեսական և բնապահպանական հարցերի հանձնաժողով,
- 6) առողջապահության և սոցիալական հարցերի հանձնաժողով,
- 7) տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի հանձնաժողով,
- 8) պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի հարցերի հանձնաժողով,
- 9) ձեռնարկատիրական գործունեության և սպառողների հարցերի հանձնաժողով,
- 10) ազգային փոքրամասնությունների հարցերի հանձնաժողով,
- 11) ժողովրդագրական և գենդերային հարցերի հանձնաժողով,
- 12) կրոնի, սփյուռքի և միջազգային ինտեգրման հանձնաժողով:

Հանրային խորհրդի հանձնաժողովների կազմում կարող են ստեղծվել ենթահանձնաժողովներ, որոնց ցանկը ընդունվում է համապատասխան հանձնաժողովի նիստում և հաստատվում է Հանրային խորհրդի կողմից: Հանրային խորհրդի հանձնաժողովն իրավունք ունի տվյալ հանձնաժողովի ոլորտին առնչվող հարցերը քննարկելու համար ստեղծել աշխատանքային խմբեր:

Այսպիսով, Հանրային խորհուրդը ստեղծվել է որպես իշխանության և հասարակության համագործակցությունն ապահովող քաղաքացիական հասարակության նոր ինստիտուտ, որի կարևորագույն խնդիրներից մեկը երկրի պետական քաղաքականության մշակման գործին հասարակության ներգրավումն է: Ներկայումս Հանրային խորհուրդը դեռ կայացման փուլում է, դեռևս չեն մշակվել նրա գործունեության արդյունավետ կառուցակարգեր, դեռևս չեն սահմանվել պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների և նրանց պաշտոնատար անձանց հետ համագործակցության հստակ մեխանիզմներ:

Ներկա փուլում անհրաժեշտ է մշակել հասարակության և պետության միջև երկխոսության արդյունավետ մեխանիզմներ՝ ներառյալ քաղաքացիական միավորումների մասնակցությունը որոշումների ընդունմանը և քաղաքացիական վերահսկողությունը պետական կառույցների նկատմամբ: Հանրային խորհրդի ձևավորման նախադրյալները մեկ օրում չեն ստեղծվել: Հանրային խորհրդի ձևավորման անհրաժեշտությունը, որը կազմված կլինի քաղաքացիական ակտիվ դիրքորոշմամբ, հասարակությունում բարձր հեղինակություն ունեցող և հասարակական տարբեր խմբերի շահերը իրապես ներկայացնող անձանցից, ակնհայտ է:

Ներկայումս Հանրային խորհրդի կոնցեպցիայի հռչակումը հստակեցման կարիք ունի, քանի որ իշխանության համակարգում նրա գործառույթային նշանակությունը օրենսդրորեն որոշված չէ: Այսպիսի պայմաններում թվում է, թե Հանրային խորհուրդը իր գործունեությունն իրականացնում է հասարակական միավորման կարգավիճակով, որի որոշումները իշխանությունները կարող են և հաշվի չառնել:

<sup>1</sup> Տե՛ս Իմաստասիրական անդրադարձներ: Գիտական հոդվածների ժողովածու: ԵՊՀ հրատ., 2004թ., Երևան, էջ 33:  
<sup>2</sup> Տե՛ս «Փաստաբանության մասին» 14.12.2004թ. ՀՀ օրենքը:  
<sup>3</sup> Տե՛ս «Կրթության մասին» 14.09.1999թ. ՀՀ օրենքը:  
<sup>4</sup> Տե՛ս «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» 09.10.2000թ. ՀՀ օրենքը:  
<sup>5</sup> Տե՛ս Панов А. А. Общественная палата Российской Федерации как новый субъект гражданского общества // СПС КонсультантПлюс, 2006.  
<sup>6</sup> Տե՛ս «Հանրային խորհուրդ ստեղծելու մասին» ՀՀ Նախագահի 2008թ. հունիսի 13-ի թիվ ՆՀ-157-Ա հրամանագիրը:  
<sup>7</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական իրավունք: ԵՊՀ, Երևան, 2003թ., էջ 299:

<sup>8</sup> Տե՛ս Ներսեսյանց Վ. Ս. Իրավունքի և պետության տեսություն: Երևան, Նաիրի, 2001թ., էջ 84:

<sup>9</sup> Տե՛ս Հանրային խորհրդի պաշտոնական կայքը՝ [www.publiccouncil.am](http://www.publiccouncil.am):

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

**Նորմատիվ-իրավական ակտեր**

1. ՀՀ Սահմանադրություն (ընդունված համաժողովրդական քվեարկությամբ 1995թ. հուլիսի 5-ին):
2. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք՝ ընդունված 05.05.1998թ.:
3. «Փաստաբանության մասին» 14.12.2004թ. ՀՀ օրենք:
4. «Կրթության մասին» 14.04.1999թ. ՀՀ օրենք:
5. «ՀՀ քաղաքացիության մասին» 06.11.1995թ. ՀՀ օրենք:
6. «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» 17.06.1991թ. ՀՀ օրենք:
7. «Կուսակցությունների մասին» 03.07.2002թ. ՀՀ օրենք:
8. «Հասարակական կազմակերպությունների մասին» 04.12.2001թ. ՀՀ օրենք:
9. «Արհեստակցական միությունների մասին» 05.12.2000թ. ՀՀ օրենք:
10. «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» 09.10.2000թ. ՀՀ օրենք:
11. «Հանրային խորհուրդ ստեղծելու մասին» ՀՀ Նախագահի 2008թ. հունիսի 13-ի թիվ ՆՀ-157-Ա հրամանագիր:
12. «Հանրային խորհրդի կանոնադրությունը հաստատելու և Հանրային խորհրդի անդամներ նշանակելու մասին» ՀՀ Նախագահի՝ 2009թ. մարտի 11-ի թիվ ՆԿ-36-Ն կարգադրություն:
13. «Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 11.09.2008թ. թիվ 1049-Ն որոշում:

**Գրականություն և պաշտոնական կայքեր**

1. Հանրային խորհրդի պաշտոնական կայք՝ [www.publiccouncil.am](http://www.publiccouncil.am):
2. Իմաստասիրական անդրադարձներ: Գիտական հոդվածների ժողովածու: ԵՊՀ հրատ., 2004թ., Երևան, 198 էջ:
3. ՀՀ սահմանադրական իրավունք: ԵՊՀ հրատ.: Երևան 2003թ., 608 էջ:
4. Ներսեսյանց Վ. Ս. Իրավունքի և պետության տեսություն: Երևան, Նաիրի, 2001թ., 300 էջ:
5. Панов А. А. Общественная палата Российской Федерации как новый субъект гражданского общества // СПС КонсультантПлюс, 2006.
6. Дмитриев Ю.А., Шапкин М.А. Правоохранительные органы Российской Федерации. Учебник. 3-е изд., изм. и доп. М., Эксмо, 2006.

**РЕЗЮМЕ**

***Правовое положение Общественного совета и его роль в формировании гражданского общества***

В данной работе теоретическому анализу подвергаются важнейшие вопросы, касающиеся правового статуса созданного в последнее время Общественного совета, основных принципов его деятельности, направлений, задач и порядка его формирования. Представляется степень участия государства в вопросе формирования Общественного совета, его роль и значение. Правовой статус Общественного совета представляется не только в рамках правовых актов, лежащих непосредственно в основе его формирования, но и в контексте правовых актов не касающихся его непосредственно. Необходимость формирования Общественного совета проявляется в важности его посреднической миссии между обществом и государством.

**SUMMARY**

***Legal status of Public council and its role in composing of civil society***

This article provides theoretical analysis of important issues concerning the recently organized legal status of Public council, the main concepts, directions and issues of its functions and establishment of its rules. In this article is described the level of state participation, its role and meaning in composing the Public council. The legal status of Public council is described not only within the legal norms directly set in the basis of its composition but also within the context of other legal norms concerned to it indirectly. In the article is seen the necessity of composition of Public council as well as the important mediating mission between public and state.

**ԼԻԼԻԹ ԵՐԵՄՅԱՆ**

ՀՀ ԱԺ պատգամավորի օգնական, Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավաբանական ֆակուլտետի, սահմանադրական և մունիցիպալ իրավունքի ամբիոնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի

**ԿԱԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՈՐՈՇ  
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
(ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ  
ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ)**

Քրեական դատավարությունում կալանավորման ինստիտուտի վերաբերյալ առանձնահատուկ հետաքրքրությունը պայմանավորված է դրա այնպիսի կարգավորմամբ և գործնականում այնպիսի կիրառմամբ, որը, կարծում ենք, պատճառ կարող է հանդիսանալ մարդու ազատության և անձնական անձեռնմխելիության անբախտելի իրավունքի խախտման:

Առկա պրակտիկայի ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ Հայաստանում կալանավորումը որպես խափանման միջոց շատ հաճախ է կիրառվում: Գրավը որպես կալանավորման այլընտրանքային միջոց կիրառվում է չափազանց հազվադեպ: Միևնույն ժամանակ այլ՝ ավելի թեթև խափանման միջոց կիրառելու հնարավորության հարցը որպես կանոն անտեսվում է:

Մինչդեռ, համընդհանուր տարածում ստացած միջազգային իրավական դիրքորոշումների համապատասխան՝ կալանավորումը որպես խափանման միջոց կարող է կիրառվել միայն բացառիկ դեպքերում և դրա կիրառումը գործնականում չպետք է դառնա օրինաչափություն<sup>1</sup>:

Նման պայմաններում ակնհայտ է կալանավորման կիրառման վերաբերյալ իրավական կարգավորումների ինչպես նաև առկա արատավոր պրակտիկայի վերանայման անհրաժեշտությունը:

ՀՀ Սահմանադրության համաձայն՝ վավերացված միջազգային պայմանագրերը հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե նրանցում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են պայմանագրի նորմերը: Այդ

դրույթի ուժով ՀՀ ներպետական օրենսդրության կարգավորումը պետք է համապատասխանի միջազգային գործիքներում ամրագրված պահանջներին:

Մարդու իրավունքներին վերաբերող կարևորագույն միջազգային փաստաթղթերը ամրագրում են ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ) համաձայն «Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք»<sup>2</sup>:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը սահմանում է, որ «Յուրաքանչյուր ոք ունի ապրելու, ազատության ու անձի անձեռնմխելիության իրավունք»<sup>3</sup>:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի համաձայն՝ «Ոչ ոք չի կարող ենթարկվել կամայական ձերբակալման կամ կալանավորման: Ոչ ոք չպետք է գրկվի ազատությունից այլ կերպ, քան այնպիսի հիմքերով և այնպիսի ընթացակարգին համապատասխան, որոնք սահմանված են օրենքով»<sup>4</sup>:

ՀՀ ազգային օրենսդրությունում մարդուն ազատությունից գրկելու կամ ազատությունը սահմանափակելու հիմքերն ու մեխանիզմներն ամրագրված են ՀՀ Սահմանադրությանը, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում (այսուհետ՝ ՔԳՕ): Սահմանադրաիրավական դրույթի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն չի կարելի ձերբակալել, խուզարկել այլ կերպ, քան օրենքով սահմանված կարգով: Նա կարող է կալանավորվել միայն

www.lawinstitute.am

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով»<sup>5</sup>։ ՔԳՕ-ում մասնավորապես նշվում է. «Ոչ ոք չի կարող արգելանքի վերցվել և պահվել անազատության մեջ այլ կերպ, քան օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով։ Կալանավորելը, կալանքի տակ պահելը թույլատրվում է միայն դատարանի որոշմամբ»<sup>6</sup>։

Մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից առաջնահերթ նշանակություն ունի խափանման միջոց կիրառելու պատշաճ հիմքերի ամրագրումը։ Դրանց ոչ պատշաճ ձևակերպումը կարող է հանգեցնել մարդու ազատության և անձեռնմխելիության անբախտելի բնական իրավունքի խախտման։

ՀՀ ՔԳՕ-ի համաձայն՝ խափանման միջոցներն են՝ կալանավորումը, գրավը, ստորագրությունը չհեռանալու մասին, անձնական երաշխավորությունը, կազմակերպության երաշխավորությունը, հսկողության հանձնելը, հրամանատարության հսկողության հանձնելը<sup>7</sup>։

Կալանավորումը սահմանվում է որպես օրենքով նախատեսված տեղերում և պայմաններում անձին կալանքի տակ պահելը<sup>8</sup>։

ՀՀ ՔԳՕ-ի 135-րդ հոդվածի առաջին մասում սահմանված են կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կիրառելու հիմքերը. դատարանը, դատախազը, քննիչը կամ հետաքննության մարմինը խափանման միջոց կարող են կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝

- 1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից,
- 2) խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով,
- 3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք,
- 4) խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց,

5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը։

Նախատեսված են նաև կալանավորումը և դրա այլընտրանքային խափանման միջոց գրավը մեղադրյալի նկատմամբ նշանակելու առանձնահատկությունները։

Կալանավորումը (գրավը) կարող է կիրառվել բացառապես.

- ա) դատարանի որոշմամբ,
- բ) դատախազի կամ քննիչի նախաձեռնությամբ կամ դատարանի սեփական նախաձեռնությամբ՝ դատարանում քրեական գործը քննելիս,

գ) մեղադրյալի նկատմամբ հետևյալ իրավական հիմքերից *ցանկացածի* առկայության պարագայում,

- երբ մեղսագրվող հանցագործության համար նախատեսվող ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը գերազանցում է մեկ տարին,

- բավարար հիմքեր կան ենթադրելու, որ մեղադրյալը կարող է կատարել ՔԳՕ-ի 135-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված գործողությունները։

Այս համատեքստում ծագում են հետևյալ հարցերը.

- նախատեսված է, արդյոք, ՀՀ օրենսդրությամբ դատարանի պարտականություն՝ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու հարցը քննարկելիս անդրադառնալ նաև այն հարցին, թե կան բավարար հիմքեր ենթադրելու, որ անձը հնարավոր է, որ կատարել է իրեն մեղսագրվող արարքը,

- ինչպե՞ս է պետք հասկանալ «երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ մեղադրյալը կարող է...» արտահայտությունը ՔԳՕ-ի 135-րդ հոդվածի համատեքստում։

**Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու հարցը քննարկելիս մեղսագրվող արարքին անդրադառնալու դատարանի իրավասության վերաբերյալ**

ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի իմաստից հետևում է, որ անձին ազատությունից զրկելու համար անհրաժեշտ է նրա կողմից հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայություն։ Դա անհրաժեշտ է անձի ազա-

www.lawinstitute.am

տությունը սահմանափակելու օրինականությունը և պատճառաբանվածությունը ապահովելու համար:

Վերոհիշյալ խնդրի մեկնաբանմանն է վերաբերում Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Արգելանք կիրառելու, դրա կիրառման պայմանների և չարաշահումների դեմ երաշխիքներ տրամադրելու մասին» թիվ (2006)13 առաջարկը, որի համաձայն՝ անհատները արգելանքի տակ են պահվում հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

ա) ողջամիտ կասկած առ այն, որ անձը կատարել է հանցանքը,

բ) հիմնավոր պատճառներ կան ենթադրելու, որ եթե անձն ազատ արձակվի, ապա (I) կթաքնվի կամ (II) կկատարի լուրջ հանցանք, կամ (III) կմիջամտի արդարադատության իրականացման գործընթացին, կամ (IV) լուրջ սպառնալիք կհանդիսանա հասարակական կարգի համար,

գ) անհնար է բավարարել «բ» կետում նշված մտահոգությունները՝ կիրառելով այլընտրանքային միջոցներ,

դ) այս քայլը հանդիսանում է քրեական արդարադատության համակարգում իրականացվող վարույթի մասը<sup>9</sup>:

«Ողջամիտ կասկած» եզրույթը՝ որպես անձին ձերբակալելու կամ կալանավորելու նվազագույն չափանիշ, ՄԻԵԴ-ի մեկնաբանությամբ հիմնվում է «փաստերի կամ տեղեկությունների առկայության վրա, որոնք կբավականացնեն անաչառ դիտորդին համոզելու, որ տվյալ անձը հնարավոր է կատարել է հանցանք: Սակայն փաստերը, որոնք կասկած են հարուցում, պարտադիր չէ, որ լինեն այնքան համոզիչ, որքան անհրաժեշտ է անձի դատապարտումը կամ նույնիսկ անձի դեմ մեղադրանք առաջադրելն արդարացնելու համար, որոնք կարող են հայտնաբերվել ավելի ուշ՝ քրեական գործի քննության փուլում»<sup>10</sup>:

Կալանավորման կիրառման հիմքերի օրենսդրական մեխանիզմները վերլուծվել են նաև Բուլղարիայի, Սլովենիայի, Սերբիայի և Էստոնիայի օրինակով:

Այսպես, Բուլղարիայի ՔԴՕ-ով սահմանված է. «Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառվում է դատարանի կողմից, երբ

հիմնավոր կասկած կա առ այն, որ մեղադրյալը կատարել է իրեն մեղսագրվող ազատագրկամաբ պատժվող արարքը, և ապացույց հանդիսացող գործով ձեռք բերված նյութերը վկայում են այն մասին, որ առկա է կալանավորման ենթակա անձի փախուստի կամ նրա կողմից նոր հանցագործություն կատարելու իրական սպառնալիք»<sup>11</sup>:

Այսպիսով, որպես կալանավորման հիմքերի կիրառման նախապայման՝ ուղղակիորեն նշված է կալանավորվող անձի կողմից հանցագործությունը կատարելու վերաբերյալ «ողջամիտ կասկածի» առկայության անհրաժեշտությունը:

Սլովենիայի քրեադատավարական օրենսդրության համաձայն կալանավորումը որպես խափանման միջոց կիրառվում է, երբ առկա է տվյալ անձի կողմից իրեն մեղսագրվող հանցագործությունը կատարելու վերաբերյալ հիմնավոր կասկածի նախապայմանը և միաժամանակ առկա է օրենսգրքով նախատեսված կալանավորման հիմքերից առնվազն մեկը<sup>12</sup>: Այսպիսով, որպես կալանավորման հիմքերի կիրառման նախապայման ուղղակիորեն նշված է կալանավորվող անձի կողմից հանցագործությունը կատարելու վերաբերյալ «ողջամիտ կասկածի» առկայության անհրաժեշտությունը:

Սերբիայում էլ կալանավորումը կարող է կիրառվել բացառապես այն դեպքում, երբ հիմնավոր կասկած կա առ այն, որ անձը կատարել է իրեն մեղսագրվող արարքը<sup>13</sup>: Միայն այս նախապայմանի առկայության պարագայում է դատարանը քննարկում ՔԴՕ-ով նախատեսված կալանավորման կիրառման հիմքերը և որպես խափանման միջոց կալանավորման կիրառման հարցը:

Այսպիսով, Սերբիայում, ինչպես Բուլղարիայում և Սլովենիայում, «ողջամիտ կասկածի» առկայության անհրաժեշտությունը ուղղակիորեն նախատեսված է քրեական դատավարության օրենսդրությամբ որպես կալանավորման հիմքերի կիրառման նախապայման:

Թեև Էստոնիայի օրենսդրությամբ որպես կալանավորման հիմքերի կիրառման նախապայման «ողջամիտ կասկածի» առկայության անհրաժեշտությունը ուղղակիորեն նշված չէ, այնուամենայնիվ այն բխում է ՔԴՕ-ում տեղ գտած

www.lawinstitute.am



ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կարգավորումների ընդհանուր տրամաբանություննից: Այսպես, օրինակ, Էստոնիայի ՔԴՕ-ի համաձայն՝ անձի նկատմամբ կալանավորումը կիրառելիս նախաքննության նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնողն ուսումնասիրում է քրեական գործի նյութերը և հարցաքննում է կալանավորման ենթակա անձին՝ պարզելու, թե արդյոք կալանավորման մասին միջնորդությունը պատճառաբանված է: Դատախազը, ինչպես նաև կալանավորման ենթակա անձի միջնորդությամբ իր պաշտպանը, հարցաքննվում են նախաքննության նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնող անձի կողմից, և նրանց արտահայտած դիրքորոշումը ենթակա է գնահատման<sup>14</sup>:

Անհրաժեշտ է ոչ միայն վերլուծել մեղադրյալի և արարքի միջև կապի առկայությունը, այլև բացահայտել այն ծանրակշիռ հանգամանքները, որոնք հիմք են տալիս եզրակացնել, որ մեղադրյալը հենց այն անձն է, ով ենթադրաբար կատարել է մեղսագրվող արարքը<sup>15</sup>:

ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված է, որ մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Օրենքը կարող է նախատեսել ազատությունից զրկում, երբ առկա է հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ, երբ դա անհրաժեշտ է անձի կողմից հանցագործության կատարումը, կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով<sup>16</sup>:

Հարկ է նշել, որ ՀՀ ՔԴՕ-ի որևէ դրույթով ուղղակիորեն սահմանված չէ դատարանի պարտականությունը՝ մինչդատական վարույթում կալանավորման հարցը որոշելիս ստուգել կալանավորվող անձի կողմից հանցագործությունը կատարելու վերաբերյալ «ողջամիտ կասկածի» առկայությունը: ՔԴՕ-ով, սակայն, նախատեսված է, որ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշումը պետք է լինի պատճառաբանված, բովանդակի մեղադրյալին վերագրվող հանցագործության մասին նշումներ և համապատասխան խափանման միջոցն ընտրելու անհրաժեշտության մասին հիմնավորում<sup>17</sup>: Գործնականում, որպես վերագրվող հանցագործության մասին նշումներ են ընդունվում, օրինակ, քրեական գործ հարուցելու մասին որոշու-

մը, անձին որպես կասկածյալ ներգրավելու մասին որոշումը, եթե անձի գտնվելու վայրն անհայտ է, ապա նրա նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին որոշումը, անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը: Ամեն դեպքում վերագրվող հանցագործության մասին նշումների առկայությունը անպայմանորեն չի նշանակում, որ առկա է «հիմնավոր կասկած» առայն, որ մեղադրյալը, հավանաբար, կատարել է իրեն վերագրվող հանցագործությունը: Պետք է նշել, որ եթե կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հարցը քննարկելիս դատարանները բարեխղճորեն ցուցաբերեն պատշաճ ջանասիրություն (due diligence), ապա օրենսդրական բարեփոխումների խնդիր չի առաջանա: Այս պարագայում դատարաններն, առաջնորդվելով ՔԴՕ-ի վերը նշված դրույթով, կալանավորման հարցը քննարկելիս կանդադառնան նաև «հիմնավոր կասկածի» առկայությանն առայն, որ մեղադրյալը, հավանաբար, կատարել է իրեն վերագրվող հանցագործությունը: Սակայն դատական պրակտիկան վկայում է այն մասին, որ դատարանները որպես կանոն չեն անդրադառնում կալանավորման համար անհրաժեշտ «ողջամիտ կասկածի» առկայությանը. «դատավորները ստուգում են, թե արդյոք ձերբակալված անձը պետք է մնա արգելանքի տակ՝ առանց առաջին հերթին ստուգելու, թե արդյոք առկա էին անձին ձերբակալելու հիմքեր, մեծ մասամբ հիմնվելով այն կանխավարկածի վրա, որ ոստիկանության կողմից իրականացված ձերբակալությունն օրինական է: Եթե դատավորը չի պարզում ձերբակալության համար անհրաժեշտ ողջամիտ կասկածի առկայությունը, ապա նման դատական վերահսկողությունը չի համապատասխանում արդար դատաքննության միջազգային չափանիշներին»<sup>18</sup>:

Այսպիսով, հաշվի առնելով անհստակ օրենսդրական կարգավորման արդյունք հանդիսացող այս հարցի վերաբերյալ Հայաստանում ձևավորված արատավոր դատական պրակտիկան, որն ակնհայտորեն չի համապատասխանում միջազգային նվազագույն չափանիշներին, և դրա հետևանքով տեղի ունեցող մարդու ազատության և անձի անձեռնմխելիության իրավունքի խախտումները՝ կարծում ենք, որ խնդրի լուծումը օրենսդրության բարելավվումն է: Մասնա-

վորապես, խնդիրը կարող է իր դրական լուծումը ստանալ, եթե որպես կալանավորման հիմքերի կիրառման նախապայման ուղղակիորեն նշված լինի դատարանի կողմից «ողջամիտ կասկածի» առկայության ստուգման անհրաժեշտությունը:

*Այլ կերպ ասած՝ նպատակահարմար կլինի ԶԳՕ-ով հստակ սահմանել դատարանների կողմից «ողջամիտ կասկածի» առկայության ստուգումը՝ որպես կալանավորման մասին հարցը քննելիս դատարանների պարտականություն:*

**Խափանման միջոց կիրառելու հիմքերի հիմնավորվածությունը**

ՀՀ ԶԳՕ-ի 135-րդ հոդվածում սպառնիչ թվարկված են այն հանգամանքները, որոնք հիմք են ծառայում խափանման միջոց, ներառյալ կալանավորում կիրառելու համար: Նշված է նաև, որ այդ հիմքերը կարող են կիրառվել, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ մեղադրյալը հնարավոր է կատարի հոդվածում թվարկված արարքներից մեկը: Պրակտիկան վկայում է այն մասին, որ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդության մեջ դատախազը կամ քննիչը բավարարվում են, որպես կանոն, շարադրելով 135-րդ հոդվածում թվարկված հիմքերի օրենսդրական տեքստը: Այլ կերպ ասած՝ այդ միջնորդություններում չեն ներառվում քրեական գործով ձեռք բերված այնպիսի նյութեր, որոնք բավարար կլինեին ենթադրելու, որ մեղադրյալը կարող է կատարել որևէ արարք, որն օրենքով նախատեսված կալանավորման հիմք է:

«Իրենց որոշումներում դատավորներն օգտագործում էին ստանդարտ արտահայտություններ և հղումներ օրենսդրական դրույթներին, իսկ տարբեր դատարանների որոշումները գարմանալիորեն նման էին միմյանց: Ստանդարտ, ձևանմուշ որոշումների ընդունումը և կալանավորումն արդարացնող համոզիչ հիմքեր ապահովելու պարտականությունը չկատարելը, հիմնվելով ձևանմուշների և վերացական արտահայտությունների վրա, հանդիսանում են մարդու իրավունքներին առնչվող միջազգային նորմերով ամրագրված ազատության իրավունքի լուրջ սահմանափակումներ»<sup>19</sup>:

ՀՀ վճռաբեկ դատարանը Ասլան Ավետիսյանի իր նախադեպային որոշման մեջ նշել է,

որ գործի շրջանակում «բավարար չէր օրենքով նախատեսված հիմքերի պարզ շարադրանքը, այլ անհրաժեշտ էր կիրառել դատական ակտի պատճառաբանվածության առավել բարձր չափանիշ՝ դատարանի հետևությունները հիմնավորել գործի փաստական տվյալներով»: Վճռաբեկ դատարանն իր հետևություններն ամրապնդել է՝ հղում կատարելով Եվրոպական դատարանի Յագսինն ու Մաժինն ընդդեմ Թուրքիայի (8 հունիսի 1995 թ. գանգատ թիվ 16419190, կետ 52) գործին, որի վճռում նշված է, որ դատարանն, անշուշտ, ոչ մի դեպքում թույլատրելի չի համարի որևէ դատական որոշում, որը հիմնված կլինի ստանդարտ ձևակերպումների վրա, առանց արդարադատությունից թաքնվելու վտանգի առկայության պատճառների որևիցե պարզաբանման:

Մինչդեռ ՀՀ ԶԳՕ-ով հստակ սահմանված է, որ խափանման միջոց կիրառելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված և բովանդակի կոնկրետ խափանման միջոցն ընտրելու անհրաժեշտության մասին հիմնավորում<sup>20</sup>: Սահմանված է նաև, որ դատախազի կամ քննիչի՝ անձին կալանավորելու մասին միջնորդության որոշմանը կցվում են այդ միջնորդության հիմնավորվածությունը հաստատող նյութերը: Գատավորը միջնորդությունը քննարկելիս իրավունք ունի պահանջել այն հիմնավորող լրացուցիչ նյութեր, բացատրություններ<sup>21</sup>:

Անդրադառնալով հարցին՝ իրավակիրառ պրակտիկայում պետք է տարանջատվեն «հիմք», «հիմնավորում» և «հիմնավորվածություն» եզրույթների բովանդակությունը: Այս համատեքստում հիմքը նախատեսված պայմանն է, հիմնավորումը՝ հիմքի կիրառման անհրաժեշտության պատճառաբանվածությունն է, իսկ հիմնավորվածությունը՝ հիմքի և հիմնավորման գնահատման արդյունքում արված հետևությունն է:

Գնահատելով ձևավորված իրավակիրառ պրակտիկան և օրենսդրությունը՝ եզրահանգումն այն է, որ պատշաճ ջանասիրությամբ օրենսդրության կիրառման դեպքում հնարավոր կլինի խուսափել անօրինական կալանավորումներից: Այս դեպքում արդյունավետ կլինեն իրավապահ մարմինների և արդարադատությունն իրականացնող մարմինների համար կազմակերպել հատուկ ծրագրով ուսումնական դասընթաց-

www.lawinstitute.am

ներ: Դրան զուգահեռ արդյունավետ կլինի կալանավորման գործընթացում մարդու ազատություններին և իրավունքներին վերաբերող չափորոշիչների ակնհայտ և կոպիտ խախտումներ թույլ տվող պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառել կարգապահական տույժեր, եթե նրանց

արարքը չի պարունակում քրեական հանցագործության հատկանիշներ: Նման հատկանիշների առկայության դեպքում անհրաժեշտ է հետևողականորեն կիրառել պատասխանատվության անխուսափելիության սկզբունքը:

<sup>1</sup> Տե՛ս Michael and Brian Hill v. Spain, Communication No. 526/1993, U.N. Doc. CCPR/C/59/D/526/1993 (2 April 1997), para 12.3. – see at: <http://www1.umn.edu/humanrts/undocs/html/VWS526.HTM>; Office for Democratic Institutions and Human Rights, Warsaw: March 8, 2010, Final Report - Trial Monitoring Project in Armenia (April 2008 – July 2009), p. 16.

<sup>2</sup> Տե՛ս ՄԻԵԿ, հոդված 5(1):

<sup>3</sup> Տե՛ս ՄԻՀՀ, հոդված 3:

<sup>4</sup> Տե՛ս ՔՔԻՄԴ, հոդված 9(1):

<sup>5</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, հոդված 16:

<sup>6</sup> Տե՛ս ՀՀ ՔԳՕ, հոդված 11 (1-3):

<sup>7</sup> Տե՛ս Ibid., հոդված 134 (2):

<sup>8</sup> Տե՛ս Ibid., հոդված 137 (1):

<sup>9</sup> Տե՛ս Recommendation (2006)13 of the Committee of Ministers, adopted on 27 September 2006 by the Committee of Ministers, points 3(1), 3(3) and 7.

<sup>10</sup> Տե՛ս K. F. v. Germany, Judgement of 27 November 1997, para 2 (a) - see at:

[http://www.cwsl.edu/content/brooks/K\\_F\\_Germany.pdf](http://www.cwsl.edu/content/brooks/K_F_Germany.pdf) See also: Fox, Campbell and Hartley v. the United Kingdom, Judgement of 30 Aug 1990, para 32.

<sup>11</sup> Տե՛ս Criminal Procedure Code of Bulgaria, article 63 (1) .

<sup>12</sup> Տե՛ս Criminal Procedure Code of Slovenia, article 201.

<sup>13</sup> Տե՛ս Criminal Procedure Code of Serbia, article 174 (1).

<sup>14</sup> Տե՛ս Criminal Procedure Code of Estonia, article 131 (3).

<sup>15</sup> Տե՛ս “Precedents and Commentaries to the 5th article of the European Convention on Human Rights”, Monica Makovey and S.A. Razumov, Moscow 2002, p. 45.

<sup>16</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, հոդված 16 (1.4):

<sup>17</sup> Տե՛ս ՀՀ ՔԳՕ, հոդված 136:

<sup>18</sup> Տե՛ս Office for Democratic Institutions and Human Rights, Warsaw: March 8, 2010, Final Report - Trial Monitoring Project in Armenia (April 2008 – July 2009), p. 18.

<sup>19</sup> Տե՛ս Office for Democratic Institutions and Human Rights, Warsaw: March 8, 2010, Final Report - Trial Monitoring Project in Armenia (April 2008 – July 2009), p. 19.

Տե՛ս Mansur v. Turkey, Judgement of 8 June 1995, para 55.

<sup>20</sup> Տե՛ս ՀՀ ՔԳՕ, հոդված 136 (1):

<sup>21</sup> Տե՛ս Ibid, հոդված 285:

### Օգտագործված գրականություն

1. ՀՀ Սահմանադրություն:
2. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք:
3. Մարդու իրավունքների եվրոպական կոնվեցիա:
4. Մարդու իրավունքներ համընդհանուր հռչակագիր:
5. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիր:
6. Բուլղարիայի քրեական դատավարության օրենսգիրք:
7. Սլովենիայի քրեական դատավարության օրենսգիրք:
8. Սերբիայի քրեական դատավարության օրենսգիրք:
9. Էստոնիայի քրեական դատավարության օրենսգիրք:
10. Recommendation (2006)13 of the Committee of Ministers, adopted on 27 September 2006 by the Committee of Ministers.

11. Office for Democratic Institutions and Human Rights, Warsaw: March 8, 2010, Final Report - Trial Monitoring Project in Armenia (April 2008 – July 2009).
12. Lazareva V. A. “Problems of Theory and Practice of Judicial Defense in Criminal Proceedings”. – Samara, pub. University of Samara, 1999.
13. Գլխավորի Ս. ՀՀ քրեական դատավարության օրենսդրության համապատասխանությունը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 5-րդ, 6-րդ, 13-րդ հոդվածներին և 7-րդ արձանագրության 2-րդ, 3-րդ, 4-րդ հոդվածներին (համեմատախրավական ուսումնասիրություն), Եր., Ասողիկ, 2001:
14. “ЕКЧП статья 5: прецеденты и комментарии”. Моника Маковей и Разумов С.А. Москва 2002.

#### Նախադեպեր

1. *Michael and Brian Hill v. Spain*, Communication No. 526/1993, U.N. Doc. CCPR/C/59/D/526/1993 (2 April, 1997).
2. *K. F. v. Germany*, Judgement of 27 November 1997.
3. *Fox, Campbell and Hartley v. the United Kingdom*, Judgement of 30 Aug 1990.
4. *Mansur v. Turkey*, Judgement of 8 June 1995.
5. ՀՀ վճռաբեկ դատարան, Ասլան Ավետիսյանի գործը (ԱՎԳ /0022/06/08), 31 հոկտեմբեր, 2008:

#### РЕЗЮМЕ

##### *Некоторые проблемы, связанные с институтом ареста (соотношение права и практики)*

В статье обсуждается вопрос относительно обоснованности оснований применения мер пресечения, а также необходимости законодательного закрепления обязанности суда, при применении меры пресечения, рассматривать наличие достаточных оснований предположить, что лицо, возможно, совершило вменяемое ему деяние.

#### SUMMARY

##### *On some issues of the institution of detention (correlation of law and practice)*

In the article is raised the question concerning justification of the grounds for applying restraint measures, and the issue of the necessity to stipulate in the RA legislation the obligation of the court, when applying detention, to consider if there are sufficient grounds to assume that the person might have carried out the deed ascribed to him.

### ՀԱՅԿ ԱՐԱՄՅԱՆ

Երևանի քաղաքապետարանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ



## ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Հայաստանի նորանկախ հանրապետության ձևավորումից ի վեր զգալի տեղաշարժեր են տեղի ունեցել ինչպես տնտեսության, այնպես էլ մարդկային գործունեության ամենատարբեր ոլորտներում, ինչով էլ պայմանավորված՝ ի հայտ են եկել մարդկային գործունեության այնպիսի ձևեր, որոնք վտանգ են ներկայացնում մարդու կյանքի և առողջության, հասարակության և պետության անվտանգության, այլ անձանց իրավունքների և շահերի պաշտպանության համար: Հաշվի առնելով նշված զարգացումները՝ օրենսդրի կողմից գործունեության նման ձևերը դիտարկվել են որպես հանցավոր և ամրագրվել են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում: Հարկ է նշել նաև, որ պայմանավորված հանրապետության սոցիալ-տնտեսական կյանքում անընդհատ տեղի ունեցող անկայուն փոփոխություններով՝ նկատվել է նաև որոշ հանցագործությունների կատարման տոկոսային աճ: Որպես նշված բացասական միտումների կանխարգելիչ գործոն՝ պետք է դիտարկել օրենսդրության «ճկունությունը», որի տակ անհրաժեշտ է հասկանալ օրենսդրության այնպիսի հետևողական կատարելագործումը, որն առավելագույնս պատշաճ ձևով կարձագանքի հասարակությունում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական փոփոխություններին և թույլ կտա ճիշտ իրավական գնահատականի արժանացնել մարդու կողմից դրսևորվող վարքագիծը: Օրենսդրության կատարելագործումը քրեական դատավարության բնագավառում հատկապես զգույշ և լուրջ մոտեցում է պահանջում, քանի որ անհրաժեշտություն է առաջանում համադրելու երկու կարևոր խնդիրներ՝ 1) արդյունավետ պայքարը հանցագործությունների դեմ և 2) մարդու իրավունքների խախտումների բացառումն ու այդ իրավունքների իրականացման սահմանների հնարավորինս քիչ չափով սահմանափակումը: Նշված խնդիրների լուծումների միջակայքում է գտնվում օպերատիվ հետախուզական գործունեությունը, որի արդ-

յունքները կարող են մի կողմից օգտագործվել հանցագործությունների կանխարգելման և բացահայտման նպատակով, իսկ մյուս կողմից դրանք կարող են խոչընդոտներ չստեղծել անձանց իրավունքների ազատ իրականացման առումով:

Այսօր քրեական դատավարությունում օպերատիվ հետախուզական գործունեության արդյունքների (այսուհետև՝ ՕՀԳ) օգտագործման, ընդհուպ դրանց դատավարական սպառնալուծների նշանակություն տալու գաղափարը լայնորեն զարգանում է տեսաբանների շրջանում: Այդ կապակցությամբ առաջնահերթ նշանակություն են ձեռք բերում տեսության կողմից մշակված գաղափարների ներմուծումը քրեական դատավարությունում և ՕՀԳ արդյունքների օգտագործման իրավական հիմնավորվածությունը: Կազմակերպված հանցավորության առկայության պայմաններում արևմտյան առաջադեմ իրավական պետություններում յուրովի մոտեցում է ցուցաբերվում օպերատիվ հետախուզական գործունեության արդյունքների օգտագործման նկատմամբ: Օրինակ՝ ԱՄՆ-ում ոստիկանական օպերատիվ գործունեության արդյունքները դատարանների մեծամասնությունը դիտարկում է որպես սպառնալուծ: Իսկ օրինակ, Անգլիայում քրեական գործերով օպերատիվ հետախուզական միջոցառումների ժամանակ կիրառվում են ժամանակակից ձայնակլանիչ տեսանկարահանման ազդանշանային համակարգեր, որոնց կիրառման համար դատարանի թույլտվությունը չի պահանջվում<sup>1</sup>:

Համաձայն «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ Հայաստանի Հանրապետությունում օպերատիվ-հետախուզական գործունեությունը մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, պետական ու հասարակական անվտանգությունը հակաիրավական ոտնձգություններից պաշտպանելու նպատակով՝ օրենքով նախատեսված համապատաս-

www.lawinstitute.am

խան մարմինների կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացումն է<sup>2</sup>։

ՕՀԳ-ը պետական գործունեության ինքնուրույն տեսակ է, որն իրականացվում է համապատասխան պետական մարմինների օպերատիվ ստորաբաժանումների կողմից, որոնք լիազորված են կատարելու որոշակի գործողություններ և կրելու պարտականություններ։ Ըստ Վ.Պ. Խոմկովի՝ օպերատիվ-հետախուզական մարմինների գործունեությունը հանցագործության դեմ պայքարի անհրաժեշտ միջոց է՝ պայմանավորված քողարկման տարբեր միջոցների կիրառմամբ, որոշակի տեսակի հանցագործությունների նախապատրաստմամբ և կատարմամբ<sup>3</sup>։ ՕՀԳ բովանդակությունը կազմում է օպերատիվ աշխատակիցների կողմից օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների (այսուհետև ՕՀՄ) իրականացումը։ ՕՀԳ-ն իրականացվում է առավելապես ոչ հրապարակային և գաղտնի կերպով, ինչը դրա արդյունավետ գործունեության ծավալման կարևոր երաշխիք է։ Օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակների մեջ իրենց կարևորությամբ առանձնանում են այն խնդիրները, որոնք առնչվում են հանցագործությունների հետ, և որոնց արդյունավետ լուծումը բխում է քրեական դատավարության շահերից։ Այդ խնդիրների թվին են պատկանում հանցագործությունների հայտնաբերումը, բացահայտումը, կանխումը և խափանումը, հանցագործությունը նախապատրաստող, կատարող կամ կատարած անձանց հայտնաբերումը։ ՕՀԳ և քրեական դատավարության խնդիրների համեմատական վերլուծությունը ի հայտ է բերում վերջիններիս միջև գոյություն ունեցող օրգանական կապը։ ՕՀԳ և քրեական դատավարության կապն արտահայտվում է նրանում, որ ՕՀԳ-ն՝ որպես պետական գործունեության ինքնուրույն տեսակ, կոչված է աջակցելու քննչական և դատախազության մարմիններին՝ հանցագործությունների բացահայտման և խափանման գործում։ Այս մոտեցումը մանրամասնորեն հիմնավորվում է իրավաբանական գրականության մեջ ՕՀԳ- խնդիրների վերաբերյալ արտահայտված տեսակետներում։ ՕՀԳ արդյունքների հասկացության վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ իրենց տեսակետներն են արտահայտել այնպիսի հեղինակներ, ինչպիսիք են Վ.Մ. Սեչկովը, Վ.Լ. Պոպովը, Ե.Ա. Դոլյանը, որոնք առաջարկում են ՕՀԳ-ի արդյունքներն ընկալել որպես ՕՀՄ-ի շրջանակներում օրենքով նախատեսված կարգով ձեռք

բերված տեղեկություններ, փաստական տվյալներ<sup>4</sup>։ Իսկ Վ.Գ. Սամոյլովը նշում է, որ ՕՀԳ-ը նպաստում է քրեական իրավունքի նորմերի և քրեադատավարական գործունեության արդյունավետ իրականացմանը<sup>5</sup>։

Ինչպես բխում է արտահայտված տեսակետներից, ՕՀԳ արդյունքների օգտագործման գաղափարը ստեղծում է օպերատիվ հետախուզական միջոցառումների իրականացման համապատասխան իրավական մեխանիզմ, որի անհրաժեշտությունը պայմանավորված է հանցագործությունների (մասնավորապես լատենտային հանցագործությունների և կազմակերպված խմբավորումների կողմից կատարվող հանցագործությունների) բացահայտմամբ և խափանմամբ։

ՕՀԳ արդյունքները, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, ձեռք բերված տեղեկություններն են նախապատրաստվող, կատարվող կամ ավարտված հանցագործության հատկանիշների, անձանց վերաբերյալ, որոնք նախապատրաստում, կատարում կամ կատարել են հանցագործություններ և թաքնվում են հետաքննության, քննչական, դատական մարմիններից։ ՕՀԳ արդյունքները դատավարական առումով իրենցից ներկայացնում են օպերատիվ ճանապարհով ստացված տվյալների միասնության վրա հիմնված տեղեկատվություն։

Միաժամանակ, համաձայն ՀՀ քր. դատ. օր-ի 124-րդ հոդվածի՝ սպացուցումը՝ գործի օրինական հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ բացահայտելու նպատակով սպացույցներ հավաքելը, ստուգելը և գնահատելն է։ Քրեական գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի, հանգամանքների հաստատումը անհնար է պատկերացնել առանց ՕՀՄ իրականացնելու և ՕՀԳ արդյունքների կիրառման։ ՕՀԳ արդյունքները կարող են հիմք ծառայել բազմապիսի սպացույցների ձևավորման համար<sup>6</sup>։ Քրեական գործով սպացուցման նպատակով ներկայացված օպերատիվ տվյալները պետք է նպաստեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջներին համապատասխանող սպացույցների ձևավորմանը։ Իրավաբան գիտնականների մի խումբ հակված է ՕՀԳ արդյունքները ճանաչել որպես սպացույց միայն որոշակի պայմանների պահպանման դեպքում։ Այսպես՝ Ս.Ա. Շեյֆերը տեսականորեն ընդունում է վերաբերելիության և թույլատրելիության հատկանիշներ

www.lawinstitute.am

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

րով օժտված ՕՀԳ արդյունքների՝ որպես ապացույց օգտագործումն այն դեպքերում, երբ ՕՀԳ սուբյեկտը, որպես հետաքննության մարմին, քրեական դատավարության շրջանակներում օրենքով օժտված է իրավագործությամբ՝ իրականացնելու օպերատիվ հետախուզական միջոցառումներ: Ըստ Ս.Ա. Շեյֆերի՝ օրենքով սահմանված մարմնի կողմից օրենքի շրջանակներում և դրան խիստ համապատասխան կատարված օպերատիվ հետախուզական միջոցառումների արդյունքում ստացված տվյալները հետագայում կարող են դառնալ իրեղեն ապացույցներ<sup>7</sup>:

Գ.Ն. Կոզակը և Ե.Բ. Միզուլիանան, հետևելով Ն.Ս. Կիպլենսին, ևս հակված են կարծելու, որ օպերատիվ հետախուզական միջոցառումների արդյունքում ձեռք բերված տվյալները կարող են հանդես գալ որպես ապացույց, եթե դրանք ձեռք բերելիս պահպանվել են տվյալ ոլորտը կարգավորող օրենսդրական ակտի դրույթները: Վերջինիս կարծիքով, եթե օպերատիվ հետախուզական միջոցառումները կատարվել են օրենսդրության դրույթների խախտմամբ, ապա նմանատիպ գործունեության արդյունքում ստացված առարկաները և փաստաթղթերը չեն կարող կցվել քրեական գործին և հանդես գալ որպես ապացույց<sup>8</sup>: Ի հակադրություն արտահայտված կարծիքների՝ Կ.Բ. Կալինովսկին այդպիսի եզրակացությունը միանշանակ չի համարում: Ըստ նրա, օպերատիվ հետախուզական միջոցառումների իրականացման կարգի խախտումը միշտ չէ, որ հանգեցնում է դրանց արդյունքների՝ որպես ապացույցի կիրառման անթույլատրելիությանը: Իր կարծիքը հիմնավորելու համար Կ.Բ. Կալինովսկին օրինակ է բերում աշխատանքից հեռացված օպերատիվ աշխատակցի կողմից կատարված հանցագործության նկարահանման դեպքը: Ըստ նրա, թեև նյութերը ձեռք են բերվել օպերատիվ միջոցառում իրականացնելու իրավասություն չունեցող սուբյեկտի կողմից, այդուհանդերձ, այդ նյութերը կարող են կցվել գործին և ծառայել որպես ապացույց<sup>9</sup>:

Կարծում ենք, որ քրեական գործերով ապացուցման նպատակով ներկայացված ՕՀԳ արդյունքները պետք է նպաստեն քրեադատավարական օրենսդրության պահանջներին համապատասխանող ապացույցների ձևավորմանը: Միանալով Գ.Ն. Կոզակի, Ե.Բ. Միզուլիանայի և Ս.Ա. Շեյֆերի կարծիքներին և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները՝ մենք ևս աջակցում ենք այն տեսակետին, որ օպերատիվ հետախուզական եղանակով ձեռք բերված փաստական տվյալներն

ինքնին առանց քրեադատավարական կարգով հաստատման ապացույց համարվել չեն կարող:

Օպերատիվ հետախուզական միջոցառումների իրականացման ժամանակ բացակայում են դատավարական երաշխիքները տեղեկատվության հավաստիության վերաբերյալ: Այդ պատճառով, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը որոշակի վերապահումներով նշում է, որ, օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքները, որոնք ձեռք են բերվել օրենքով սահմանված կարգով, հանդիսանում են ապացույցներ, բացառությամբ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 6-րդ և 9-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքների (օպերատիվ հարցում, օպերատիվ տեղեկությունների ձեռքբերում, իրերի և փաստաթղթերի հետազոտում, անձի նույնացում): Այսպիսով՝ օրենսդրությունն ընդհանուր առմամբ թույլ է տալիս օգտագործել ՕՀԳ արդյունքներն ապացուցման գործընթացում՝ միևնույն ժամանակ սահմանելով բացառություններ:

Ներկայիս պրակտիկայում հանցագործությունների քննության գործում ձևավորվել են ՕՀԳ արդյունքների կիրառման որոշ ուղղություններ՝ ՕՀԳ արդյունքների օգտագործումը քրեական գործ հարուցելու հարցի լուծման ժամանակ, քննչական գործողությունների նախապատրաստման և իրականացման համար առավել նպատակահարմար տակտիկական մեթոդների կիրառման շրջանակը որոշելիս, քրեական գործով ապացուցման գործընթացում ՕՀԳ արդյունքների՝ որպես փաստական տվյալների աղբյուր օգտագործելիս: ՕՀԳ արդյունքները, որոնք ներկայացվել են քրեական գործ հարուցելու հարցի լուծման համար, պետք է բավականաչափ տեղեկություններ պարունակեն այն մասին, թե երբ, որտեղ և ինչ հանգամանքներում է կատարվել արարքը և այն ինչ հանցագործության հանցանշաններ է պարունակում, տեղեկություններ անձի (անձանց) վերաբերյալ, ով (որոնք) կատարել այն (եթե հայտնի է), հանցագործության ականատեսների վերաբերյալ (դրանց առկայության դեպքում), հանցագործության հետքերի առարկաների գտնվելու վայրի մասին: Քննչական և դատական գործողությունների նախապատրաստման և իրականացման համար ներկայացված ՕՀԳ արդյունքները պետք է պարունակեն տվյալներ այն անձի մասին, ով թաքնվում է նախնական քննությունից և դատարանից, կամ տիրապետում է քրեական գործի համար նշանա-

www.lawinstitute.am

կուրսում ունեցող փաստերի և հանգամանքների, հանցագործության կատարման միջոցների գտնվելու վայրի, հանցավոր ճանապարհով ձեռք բերված գումարի և թանկարժեք իրերի վերաբերյալ տեղեկատվության: Քրեական գործով ապացուցման նպատակով ներկայացված ՕՀԳ արդյունքները պետք է թույլ տան ձևավորելու քրեադատավարական օրենսդրության պահանջներին բավարարող ապացույցներ: Օրենսդրությամբ սահմանված կարգով ապացույցի վերածված ՕՀԳ արդյունքները կարող են օգտագործվել ցանկացած հանգամանքի ապացուցման գործում: Պրակտիկայի ուսումնասիրությունները բերում են այն եզրահանգման, որ ՕՀԳ միջոցով ստացված տվյալները կարող են հիմք ծառայել հետևյալ ապացույցների ձևավորման համար՝ վկայի ցուցմունքների, իրեղեն ապացույցների և այլ ապացույցների: ՕՀՄ ժամանակ օպերատիվ աշխատակիցը կարող է տեղեկություններ հավաքել ինչպես անձամբ, այնպես էլ՝ անուղակիորեն՝ այլ անձանց միջոցով: Դա կարող է պատահել, օրինակ, կեղծ ապրանքի իրացման նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս, հսկիչ գնման, հանցավոր խմբավորումների մեջ օպերատիվ ներդրման և այլ նմանատիպ գործողությունների ժամանակ: Օպերատիվ հետախուզական միջոցառումների իրականացման շրջանակներում ստացված արդյունքները կարող են նաև ամրագրվել նյութական կրիչների՝ տեսաերկրագրերի, լազերային սկավառակների, ֆոտոթղթերի վրա: Նման եղանակներով ստացված տեղեկությունները նախ ամրագրվում են ՕՀՄ արդյունքում կազմված արձանագրություններում, ինչպես նաև օպերատիվ աշխատակցի հարցաքննության արձանագրությունում: Հարցաքննության ենթարկված անձանց ցուցմունքներում առկա փաստական տվյալները դառնում են գործով ապացույց, իսկ հարցաքննության արձանագրությունը՝ ապացույցի աղբյուր:

Օպերատիվ ծառայողական փաստաթղթերը, կազմված հանցագործություն կատարելու մտադրություն ունեցող անձանց գործողությունների հսկման, հսկիչ գնման, լուսանկարման արդյունքում, կարող են օգտագործվել քրեական դատավարությունում այնպիսի ապացույցների ձևավորման համար, ինչպիսիք են քննչական և դատական գործողությունների արձանագրությունները:

Օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքների արտացոլման պահանջը արձանագրություններում հանդիսանում է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքի պահանջ: Մասնավորապես համաձայն վերոնշյալ օրենքի 40-րդ հոդվածի՝ «օպերատիվ-հետախուզական միջոցառումներն արձանագրում է դրանք անցկացնող պաշտոնատար անձը»: Արձանագրությունում պետք է նշվեն օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման տեղը, ժամանակը, հանգամանքները, օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացնող օպերատիվ աշխատակցի, օպերատիվ-հետախուզական միջոցառման այլ մասնակիցների անունները, ազգանունները, պաշտոնները, ինչպես նաև այն անձանց (կամ նրանց օրինական ներկայացուցիչների) անունները և ազգանունները, որոնց վրա տարածվում են օպերատիվ-հետախուզական միջոցառման ընթացքում ձեռնարկված բոլոր գործողությունները այն հաջորդականությամբ, ինչպես որ դրանք կատարվել են, կիրառված գիտատեխնիկական մեթոդները և միջոցները, ինչպես նաև միջոցառման հետևանքով ձեռք բերված տեղեկությունները, նյութերը և փաստաթղթերը<sup>10</sup>: Այստեղ հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ ՕՀՄ արձանագրության իրավական բնույթը տարբերվում է քննչական և դատական գործողությունների արձանագրություններից: ՕՀՄ արձանագրության բովանդակային հիմքում ընկած է քրեական դատավարության մասնակիցների կողմից քրեական գործի համար նշանակություն ունեցող փաստերի և հանգամանքների անմիջական ընկալումը: Թերևս անհրաժեշտ է նշել, որ ՕՀԳ արձանագրությունն ինքնին չի կարող օգտագործվել ապացուցման գործընթացում որպես ապացույց, ինչն ուղղակիորեն բխում է ՀՀ քր. դատ. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասից, ըստ որի՝ քրեական դատավարությունում որպես ապացույց դիտարկվում են միայն քրեական դատավարությունում քննչական և դատական գործողությունների արձանագրությունները, մինչդեռ նույն հոդվածում չի հիշատակվում ՕՀՄ արձանագրությունը:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է նշել, որ օպերատիվ-հետախուզական գործունեության իրավական կարգավորվածությունը կարևոր նշանակություն ունի մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների պահպանման հարցում: Մարդու կյանքի, առողջության, իրավունքների և ազատությունների հասարակության անվտանգության պահպանման երաշխիքների իրացումը մեծամասամբ որոշվում են իրավական կարգավորվածությամբ, որի ուղղությամբ լուրջ քայլերի ձեռնարկման անհրաժեշտություն է նկատվում:



- <sup>1</sup> Տե՛ս Գրոմով Н. Человек и закон. zakon.kuban.ru spec5html .
- <sup>2</sup> Տե՛ս «Օսյերաաիվ-հետախույզական գործունեության մասին» ՀՀ օրենք, հոդված 3:
- <sup>3</sup> Տե՛ս Хомколов В.П. Организация управления оперативно-розыскной деятельностью // Закон и право. М., 1999. С. 56.
- <sup>4</sup> Տե՛ս Доля Е.А. Использование в доказывании результатов оперативно-розыскной деятельности. М., 1996. С. 77.
- <sup>5</sup> Տե՛ս Самойлов В.Г. Правовые, морально-этические основы и принципы ОРД ОВД. М., 1984. С. 145.
- <sup>6</sup> Տե՛ս Проблемы теории и практики оперативно-розыскной деятельности: Материалы научно-практ. конференции / Под ред. Горяинова К.К., Климова И.А. М.: ВНИИ МВД России, 2002. С. 53.
- <sup>7</sup> Տե՛ս Шейфер С.А. Использование не процессуальных познавательных мероприятий в доказывании по уголовному делу // Государство и право. 1997. № 9. С. 59.
- <sup>8</sup> Տե՛ս Козак Д.Н., Мизулина Е.Б. Комментарий к Уголовно-процессуальному кодексу Российской Федерации. М., 2002. С. 235.
- <sup>9</sup> Տե՛ս Калиновский К.Б. К вопросу об использовании результатов оперативно-розыскной деятельности в качестве доказательств по уголовным делам // Актуальные проблемы борьбы с преступностью в современных условиях. Матер. межвуз. научно-практ. конф. Санкт-Петербург, 22 мая 1997 года / Под ред. Латышева О.М., Сальникова В.П.. СПб.: Санкт-Петербургская академия МВД России, 1997. С. 186-189.
- <sup>10</sup> Տե՛ս «Օսյերաաիվ հետախույզական գործունեության մասին» ՀՀ օրենք, հոդված 40:

#### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Օսյերաաիվ-հետախույզական գործունեության մասին» ՀՀ օրենք: Ընդունվել է Ազգային ժողովի կողմից 22.10.2007թ.:
2. Գրոմով Н. Человек и закон. zakon.kuban.ru spec5html.
3. Хомколов В.П. Организация управления оперативно-розыскной деятельностью // Закон и право. М., 1999.
4. Самойлов В.Г. Правовые, морально-этические основы и принципы ОРД ОВД. М., 1984.
5. Доля Е.А. Использование в доказывании результатов оперативно-розыскной деятельности. М., 1996.
6. Проблемы теории и практики оперативно-розыскной деятельности: Материалы научно-практ. конференции / Под ред. Горяинова К.К., Климова И.А. М.: ВНИИ МВД России, 2002.
7. Шейфер С.А. Использование не процессуальных познавательных мероприятий в доказывании по уголовному делу // Государство и право. 1997. № 9.
8. Козак Д.Н., Мизулина Е.Б. Комментарий к Уголовно-процессуальному кодексу Российской Федерации. М., 2002.
9. Калиновский К.Б. К вопросу об использовании результатов оперативно-розыскной деятельности в качестве доказательств по уголовным делам // Актуальные проблемы борьбы с преступностью в современных условиях. Матер. межвуз. научно-практ. конф. Санкт-Петербург, 22 мая 1997 года / Под ред. Латышева О.М., Сальникова В.П.. СПб.: Санкт-Петербургская академия МВД России, 1997.
10. Комментарий к федеральному закону от 12 августа 1995 г. № 144-ФЗ „Об оперативно-розыскной деятельности“ (Постатейный) Вагин О.А., Исиченко А.П., Чечетин А.Е.

#### РЕЗЮМЕ

##### *Некоторые основополагающие проблемы использования в уголовном процессе результатов оперативно-розыскной деятельности*

Основываясь на юридической литературе, законодательстве Республики Армении, некоторых международно-правовых документах, в рамках статьи проведено изучение и объемный анализ ряда вопросов, касающихся результатов оперативно-розыскной деятельности.

В статье также рассмотрен ряд вопросов о направлении внедрения механизмов защиты государством прав и свобод человека и гражданина.

#### SUMMARY

##### *Some problems concerning the results of operational investigation activities in criminal procedure.*

Being based on legal literature, legislation of RA, certain international-legal documents, within the scope of the study made research and volumetric analysis of wide-ranging issues concerning the results of operational search activities.

The article also deals with number of questions on directions of implementation of citizens' rights and freedoms mechanisms by the state.

### ՄԱՐԹԱ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության անչափահասների գործերով բաժանմունքի տեսուչ, ոստիկանության կապիտան, Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավաբանական ֆակուլտետի քրեական և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ



### ԱՆՉԱՓԱՀԱՍԸ ԵՎ ՄԵՌԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ

Բռնությունը հասարակության բարեկեցությանը սպառնացող հիմնական վտանգներից մեկն է: Երբ խոսքը վերաբերում է բռնությանը, երեխաները միանշանակ հանդիսանում են բնակչության ամենաանպաշտպան կատեգորիան: Նրանք առավել խոցելի են այն պատճառով, որ ֆիզիկապես չեն կարող պաշտպանվել, և նրանց գոյատևումը կախված է չափահասներից. նրանք ընդունակ չեն անմիջականորեն պաշտպանել սեփական իրավունքները: Դրա հետ կապված՝ երեխաները հաճախ են դառնում իրենց անձին և զարգացմանը հասցվող տարբեր ոտնձգությունների զոհ:

Հիմնախնդրի արդիականությունը հաստատվում է երեխաների նկատմամբ սեքսուալ բռնության, այդ թվում՝ անչափահասներին պոռնկության ներգրավվելու դեպքերի աճով:

Հայաստանում 2005-2009 թթ. գրանցվել է երեխաների նկատմամբ սեռական բռնության 99 դեպք, ինչը այլ երկրների համեմատ ցածր ցուցանիշ է, սակայն Հայաստանի համար՝ բարձր, ընդ որում՝ սրանք պաշտոնական տվյալներ են<sup>1</sup>:

Աշխարհում անհավանական մասշտաբների է հասել մանկական սեքս-բիզնեսը: Գոյություն ունեն հանցավոր խմբեր, ընկերակցություններ, որոնք զբաղվում են մանկական պոռնկագրական տեսաֆիլմերի, նյութերի արտադրությամբ, իրացմամբ, տարածմամբ, ինչպես նաև անչափահասներին պոռնկության ներգրավմամբ՝ հաճախ նրանց դուրս տեղափոխելով երկրի սահմաններից դուրս: Շատ դեպքերում այս երեխաների ճակատագիրը անհայտ է մնում: Սրա հետ կապված երեխաներին սեքսուալ շահագործումից պաշտպանելու անհրաժեշտություն է ծագում, որն իր մեջ պետք է ներառի իրավապահ մարմինների և հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվամիջոցների և կրթական համակարգի համատեղ գոր-

ծունեությունը: Նախ և առաջ այդպիսի աշխատանքը պետք է ընդգրկի անչափահասների իրավական տեղեկացումը բռնության տարբեր ձևերի մասին: Այս նպատակով էլ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության տարածքային մարմինների անչափահասների գործերով տեսչությունը տարեկան երկու անգամ անցկացնում է զրույց-զեկույցներ միջնակարգ հանրակրթական դպրոցներում, ինչը, մեր կարծիքով, պետք է նաև ընդգրկվի ուսումնական ծրագրի շրջանակներում: Սակայն սա բավական չէ, և վերոհիշյալ տեսչությունը պրոֆիլակտիկ և դաստիարակչական աշխատանքներ է կազմակերպում ռիսկի խմբին պատկանող անչափահասների հետ՝

1. նախկինում բռնության ենթարկվածների,
2. հանցագործություն կատարած, բայց վարչական կամ հասարակական ներգործության ենթարկվելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատվածների,
3. համաներման հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատվածների,
4. մինչև քրեական պատասխանատվության տարիքի հասնելը հասարակության համար վտանգավոր արարքներ կատարածների,
5. թմրանյութեր կամ հոգեմետ նյութեր օգտագործողների,
6. ոգելից խմիչքներ օգտագործող անչափահասների,
7. վարչական կամ հասարակական ներգործության ենթակա իրավախախտումներ կատարողների,
8. ընտանիքից մինչև 16 տարեկանը լրանալը ինքնակամ հեռացող երեխաների,
9. մոլխաաղերով, մուրացկանությամբ կամ թափառաշրջիկությամբ զբաղվող և այլ հակահա-

սարակական կյանք վարող անչափահասների<sup>2</sup> :

Այսպիսով, երեխաների սեքսուալ անձեռնմխելիության պաշտպանությունը բարդ սոցիալ-իրավական խնդիր է: Երբ խոսքը վերաբերվում է չափահասներին, իրավական պետությունը պարտավորվում է պաշտպանել նրանց սեռական ազատությունը: Եթե չափահասների միջև սեքսուալ հարաբերությունները ատիպիկ են և արտասովոր, սակայն տեղի են ունենում երկկողմանի համաձայնությամբ և չեն խախտում երրորդ անձանց օրինական իրավունքները՝ պետությունը միջամտելու իրավունք չունի: Երեխաների հետ իրավիճակը այլ է.

1. նրանք կախում ունեն չափահասներից,
2. հաճախ երեխաները չեն գիտակցում նրանց հետ կատարվող գործողությունների իմաստը և նրանց «համաձայնությունը» կարող է ֆիկտիվ լինել,
3. հասարակությանը անտարբեր չեն վաղ սեքսուալ կոնտակտների երկարաժամկետ հետևանքները:

Այս իսկ պատճառով էլ, եթե օրենքը չափահասին պաշտպանում է սեռական հարկադրանքից, ապա անչափահասներին այն պաշտպանում է ցանկացած սեռական ոտնձգություններից և չափահասների կողմից շահագործումից:

Երեխայի սեռական անձեռնմխելիությունը օրենսդրությամբ պաշտպանված է: Անչափահասների սեռական անձեռնմխելիության դեմ հանցագործությունների թվին են պատկանում բռնաբարությունը, սեքսուալ բնույթի բռնի գործողությունները, սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը տասնվեց տարին չլրացած անձի հետ և անառակաբարո գործողությունները, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված տասնութ տարին չլրացած անձին պռնկությամբ զբաղվելու նպաստելը և պռնկագրական բնույթի համակարգչային ծրագրերի, կինոյի կամ տեսաֆիլմերի, նյութերի, պատկերների կամ պռնկագրական բնույթի այլ առարկաների ստեղծմանն անչափահասներին մասնակից դարձնելը (ՀՀ քրեական օրենսգրքի 263-րդ հոդվածի 2 մաս):

ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ (Բռնաբարություն) և 139-րդ (Սեքսուալ բնույթի բռնի գործողություններ) հոդվածներով անչափահասների նկատմամբ սեռական բռնության ցանկացած ակտի կատարումը հանդիսանում է պատիժը ծան-

րացնող հանցանամբ: ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է սահմանում տասնվեց տարին չլրացած անձի սեքսուալ բնույթի գործողությունների կատարման համար և դրանով իսկ սահմանում է սեռական կյանքի սկզբի օրինական տարիքը: ՀՀ քրեական օրենսգրքի 142-րդ հոդվածի ընդլայնված մեկնաբանությունը, բացի հիմնական հասկացությունների անորոշությունից, ենթադրում է, որ մանկական «սեքսուալ հետաքրքրասիրությունը» անառողջ երևույթ է, որը առաջանում է միայն արտաքին ներգործությունների արդյունքում: Այս կարծիքը միանշանակ հակասում է ինչպես առօրյա փորձին, այնպես էլ հոգեբանության հիմունքներին: Ինչ վերաբերվում է անչափահասներին պռնկագրական բնույթի համակարգչային ծրագրերի, կինոյի կամ տեսաֆիլմերի, նյութերի, պատկերների կամ պռնկագրական բնույթի այլ առարկաների ստեղծմանը մասնակից դարձնելուն, ապա պետք է փաստել, որ վերջին տասնամյակում համաշխարհային համակարգչային ցանցի զարգացման արագությունը խոչընդոտում է այս պատժատեսակի դեմ պայքարին, և գրանցված դեպքերի թիվը աճում է, ինչի մասին վկայում են անչափահասների մասնակցությամբ պռնկագրական բնույթի էլեկտրոնային կայքերի բազմազանությունն ու ազատ մուտքը:

Քանի որ վերոհիշյալ հանցագործությունների մի մասը ոչ միշտ է ուղեկցվում բռնության գործադրմամբ, ապա ճիշտ կլիներ խոսել այնպիսի անօրինական գործողությունների մասին, ինչպիսին է սեռական չարաշահումը:

Համաձայն Մ.Գ.Շեխտերի՝ սեռական չարաշահումը՝ կախում ունեցող և անհաս երեխաներին հասարակությունում ընդունված նորմերը խախտող սեռական գործողություններին ներգրավվելն է, որոնք լիարժեք չեն հասկանում այդ գործողությունների նշանակությունը, ինչի հետևանքով ընդունակ չեն դրանց կատարմանը իմաստավորված համաձայնություն տալ<sup>3</sup>:

Փաստացի ինչ է հայտնի այս հսկայական խնդրի մասին: Ո՞վ է հաճախ կատարում սեռական ոտնձգություններ երեխաների նկատմամբ: Ինչպիսի՞ն է երեխայի դերը այդ հանցագործություններում: Ինչպե՞ս պետք է արձագանքեն ծնողներն ու մանկավարժները նմանատիպ դեպքերին: Գիտության ոչ մի առանձին ճյուղ չի կարող միանշանակ պատասխաններ տալ այս հարցերին, առավել ևս

որ գոյություն ունեն մի շարք կեղծ պատկերացումներ և միջեր:

Միջ առաջին. սեռական ոտնձգությունները երեխաների նկատմամբ բացառիկություն են և հանդիսանում են հասարակության բարոյական փլուզման հատկանիշ: Իրականում այդ երևույթները միշտ գոյություն են ունեցել և հնագույն օրենսդրությունները փորձել են դրանց վերջ դնել հսկայական դրամային տուգանքների և այլ պատժատեսակների կիրառման միջոցով: Ներկայումս սեռական ոտնձգությունները երեխաների նկատմամբ բարոյական և իրավական տեսակետից քննադատվում են, բայց համաձայն վիճակագրական տվյալների՝ հաճախ են տեղի ունենում:

Միջ երկրորդ. սեռական ոտնձգությունների մեծամասնությունը կատարվում է անծանոթների կողմից: Իրականում դրանց մեծ մասը կատարվում են երեխային ծանոթ անձի կողմից, հաճախ՝ սեփական ընտանիքի ավագ անդամների կողմից:

Միջ երրորդ. բոլոր չափահասները, ովքեր սեռական ոտնձգություններ են կատարում երեխաների նկատմամբ, տառապում են հոգեկան խանգարումներով: Իրականում մանկամուլների (մարդիկ, որոնք հակված են երեխաների հետ սեռական հարաբերությունների) թիվը այդքան էլ մեծ չէ: Տարօրինակ է, բայց դրանց մեծ մասը կայուն հոգեկան կառուցվածք ունեցող, ամուսնացած և երեխաներ ունեցող տղամարդիկ են:

Միջ չորրորդ. երեխաների նկատմամբ սեռական ոտնձգությունները մեծամասամբ կատարվում են սոցիալապես անապահով, կրթության ցածր մակարդակ ունեցող և ոչ լիարժեք ընտանիքներում: Իրականում դրանք տեղի են ունենում հասարակության կրթության և եկամուտների տարբեր մակարդակ ունեցող շերտերում:

Միջ հինգերորդ. պատմելով իրենց նկատմամբ կատարած սեռական ոտնձգությունների մասին՝ երեխաները ստում են և ցանկալի են ներկայացնում որպես իրականություն: Իրականում մանկական պատմությունները իրականության և երևակայության բարդ «ձուլում» են, դրանք արհամարվելը նույնքան անխելամիտ է, ինչքան ամբողջովին, իբրև իրականություն, ընդունելը:

Միջ վեցերորդ. երեխաներն ու դեռահասները չափահասների կողմից սեռական գալթակղման անմեղ զոհեր են և պասիվ օբյեկտներ: Իրականում որոշ վաղ զարգացած երեխաներ իրենք են դրդում

և խրախուսում չափահասներին սեռական կոնտակտի կատարմանը: Երբեմն դա տեղի է ունենում ենթագիտակցաբար, երբեմն էլ՝ բավականին գիտակցված:

Այսպիսով, վերլուծելով վերոգրյալը՝ երեխաների և անչափահասների նկատմամբ կատարվող սեռական ոտնձգությունները կանխելու նպատակով պետք է մշակել անհրաժեշտ կանխարգելիչ և պրոֆիլակտիկ միջոցառումների ցանկ, որը բաղկացած է 2 մասից.

1. քրեախրավական պրեկենցիա (քրեական օրենսդրության փոփոխությունները),
2. պրոֆիլակտիկ միջոցառումների իրականացում:

**Քրեական օրենսդրությունը որպես անչափահասների դեմ ուղղված հանցագործությունների հետ պայքարի միջոց**

Անհրաժեշտ է հետևել Ռուսաստանի Դաշնության օրինակին և խստացնել անչափահասների նկատմամբ սեռական ոտնձգությունների կատարման համար քրեական պատասխանատվությունը:

Մասնավորապես՝ ՌԴ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետը (բռնաբարություն, որը կատարվել է ակնհայտ անչափահասի նկատմամբ) փոփոխությունների արդյունքում վերածվել է նույն հոդվածի 3 մասի «ա» կետի, որի համար նախկինում չորսից տասը տարի ազատազրկման փոխարեն նախատեսվում է ութից տասնհինգ տարի ժամկետով ազատազրկում: Ինչպես նաև նախկինում 3-րդ մասի «վ» կետը (բռնաբարություն, որը կատարվել է 14 տարին չլրացած անձի նկատմամբ) վերածվել է նույն հոդվածի 4-րդ մասի «բ» կետի, որը նախատեսում է ազատազրկում տասներկուսից քսան տարի ազատազրկում՝ որոշակի պաշտոններ կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից քսան տարի ժամկետով զրկելով:

ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածով նախատեսված բռնաբարության կատարումը անչափահասի նկատմամբ պատժվում է ազատազրկմամբ չորսից տասը տարի ժամկետով, իսկ 14 տարին չլրացած անձի նկատմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով ազատազրկմամբ:

Նույն ձևով վերակառուցվել է նաև ՌԴ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածը:

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

141-րդ հոդվածին, ապա ակնհայտ 16 տարին չլրացած անձի հետ սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի այլ գործողություններ կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրհիսունապատիկի չափով կամ ազատագրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, իսկ ծանրացուցիչ հանգամանքները հոդվածում իսպառ բացակայում են:

ՌԳ օրենսդիրը 2009 թ-ի հուլիսի 27-ի փոփոխություններով քրեական օրենսգրքի 134-րդ հոդվածը համարել է 3 մասերով և խստացրել պատժատեսակները: Հարկ է նշել նաև այն, որ ո՛չ նախկին, ո՛չ էլ գործող օրենսգրքը այս հանցագործության կատարման համար որպես պատժատեսակ տուգանք չի նախատեսել: Նոր փոփոխությամբ՝ ծանրացուցիչ հանգամանքներ է համարվում սեռական հարաբերությունը սեքսուալ բնույթի այլ գործողությունների կատարումը ակնհայտ 14 տարին չլրացած անձի հետ, որը պատժվում է երեքից յոթ տարի ժամկետով ազատագրկմամբ, մինչև տասը տարի ժամկետով որոշակի պաշտոններ կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով կամ առանց դրա, կամ մինչև երկու տարի կալանքով կամ առանց դրա: Նույն հոդվածի 3-րդ մասը՝ յոթից տասնհինգ տարի ժամկետով ազատագրկում, մինչև տասնհինգ տարի ժամկետով որոշակի պաշտոններ կամ որոշակի գործունեությամբ զնաղվելու իրավունքից զրկելով կամ առանց դրա, կամ մինչև երկու տարի կալանքով կամ առանց դրա պատիժ է սահմանում ակնհայտ տասներկու տարին չլրացած անձի հետ սեռական հարաբերության մեջ մտնելու և սեքսուալ բնույթի այլ գործողություններ կատարելու համար: 4-րդ մասը՝ տասներկուսից քսան տարի ժամկետով ազատագրկում, մինչև քսան տարի ժամկետով որոշակի պաշտոններ կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով կամ առանց դրա, կամ մինչև երկու տարի կալանքով կամ առանց դրա պատիժ է սահմանում 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված արարքների կատարման համար մի խումբ անձանց կողմից, նախնական համամաձայնության գալով կամ կազմակերպված խմբի կողմից:

Հոդվածը նախատեսում է նաև անձին քրեական պատասխանատվությունից ազատման հանգամանքը, եթե նա կատարել է տվյալ հոդվածի

առաջին մասով նախատեսված արարքը և պարզվել է, որ այդ անձն ու իր կողմից կատարած հանցագործությունը այլևս դադարել են հանրության համար վտանգավոր լինելուց՝ տուժողի հետ ամուսնություն հաստատելու միջոցով:

Մեր կարծիքով՝ ՀՀ օրենսդիրը ևս պետք է գնա այս ճանապարհով և խստացնի պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածով նախատեսված արարքի համար:

ՌԳ քրեական օրենսգրքի 135-րդ հոդվածը վերակառուցվել է 134-րդի անալոգիայով, և խստացվել է քրեական պատասխանատվությունը անառակաբարո գործողություններ կատարելու համար, և բացակայում է անձին քրեական պատասխանատվությունից ազատելու որևէ հիմք: ՀՀ քրեական օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասը՝ ակնհայտ տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ անառակաբարո գործողություններ կատարելը, օրենսգրքի 140-րդ կամ 141-րդ հոդվածով նախատեսված հանցանքների հատկանիշների բացակայության դեպքում, պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ ազատագրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, իսկ երկրորդ մասը առավելագույնը երեք տարի ժամկետով ազատագրկում է նախատեսում առաջին մասով նախատեսված գործողությունների բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կատարելու համար:

ՌԳ քրեական օրենսգրքում կատարված փոփոխությունները անչափահասների մասնակցությամբ պոռնկագրական բնույթի նյութերի և առարկաների պատրաստման, տարածման համար նախատեսել են պատիժ ազատագրկման տեսքով՝ երկուսից ութ տարի ժամկետով, իսկ նույն արարքի կատարումը երեխայի ծնողների, կամ մինչև 14 տարին լրացած անձի նկատմամբ կամ մի խումբ անձանց կողմից, կամ նախնական համամայնությամբ պատժվում է երեքից տասը տարի ժամկետով՝ մինչև տասնհինգ տարի ժամկետով որոշակի պաշտոններ կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով:

2009 թ-ի դեկտեմբերի 27-ի թիվ 377 ՌԳ օրենքով նախատեսվում է ևս մեկ փոփոխություն, այն է՝ անչափահասների սեռական անձեռնմխելիության դեմ կատարած հանցագործության համար դատապարտված անձի նկատմամբ պայմանա-

www.lawinstitute.am

կան վաղաժամկետ ազատումը կարող է կիրառվել նրան նշանակված պատժի 3/4 փաստացի կրումից հետո:

Այսպիսով, քրեական պատասխանատվության խստացումը կարելի է դիտել որպես անչափահասների դեմ ուղղված սեռական հանցագործությունների կանխման միջոց:

Հայաստանի Հանրապետությունը 1992 թ-ին միացել է «Երեխաների իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիային և, խիստ մտահոգված լինելով մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի նպատակներով երեխաների միջազգային մաքսանենգ փոխադրման նշանակալի և աճող ծավալներով, 2005 թ. փետրվարի 28-ին վավերացրել է 2000 թ-նի մայիսի 25-ին Նյու-Յորք քաղաքում ստորագրված «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ «Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին» կամընտրական արձանագրությունը:

Անչափահասների դեմ ուղղված սեռական հանցագործությունների կանխման և պայքարի գործում մեծ է «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի դերը, որը բացվել է ստորագրման համար 2007թ. հոկտեմբերի 25-ին և ուժի մեջ է մտել 2010 թ. հուլիսի 7-ին. այն հանդիսանում է երեխաների նկատմամբ սեռական բռնության դեմ պայքարում ԵԽ կարևոր իրավական գործիքներից մեկը: Հայաստանը 8-րդ երկիրն է, որ ստորագրել է այս կոնվենցիան: Կոնվենցիայի նպատակներն են՝

- ա) երեխաների սեռական շահագործման և սեռական բնույթի բռնությունների կանխարգելումը և դրանց դեմ պայքարը,
- բ) սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից տուժած երեխաների իրավունքների պաշտպանությունը,
- գ) երեխաների սեռական շահագործման և սեռական բնույթի բռնությունների դեմ ներպետական և միջազգային համագործակցության խթանումը<sup>4</sup>:

Կոնվենցիան ևս նախատեսում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցների ձեռնարկումը՝ ապահովելու, որ երեխաները տարրական և միջնակարգ կրթության ընթացքում ստանան սե-

ռական շահագործման ու սեռական բնույթի բռնությունների հետ կապված վտանգների, ինչպես նաև ինքնապաշտպանության միջոցների մասին տեղեկություններ, որոնք հարմարեցված են նրանց զարգացող կարողություններին: Անհրաժեշտության դեպքում, պետք է ծնողների հետ համագործակցությամբ տրամադրված այդ տեղեկությունները տրվեն սեռական բնույթի հարցերի վերաբերյալ տեղեկատվության առավել լայն համատեքստում, և հատուկ ուշադրություն դարձվի վտանգավոր, հատկապես նոր տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործման հետ կապված իրավիճակներին<sup>5</sup>:

Սեռական հանցագործությունների կանխմանն ուղղված պրոֆիլակտիկ աշխատանքում հիմնական խնդիրը հասարակության գիտակցության, բռնության աղբյուրի գիտակցման բարձրացումն է, կրթական ծրագրերի անցկացումը, ինչպես նաև՝ երեխաների պաշտպանությունն ու օգնությունը ճգնաժամային իրավիճակներում: Լիարժեք պրոֆիլակտիկ գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ է մանկավարժների, հոգեբանների, ծնողների և իրավապահ մարմինների համատեղ և համաձայնեցված աշխատանք: Ինչպես վերը նշվել էր, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության տարածքային մարմինների անչափահասների գործերով տեսչությունը պրոֆիլակտիկ դաստիարակչական աշխատանքներ է իրականացնում ռիսկի խմբին պատկանող անչափահասների հետ, ինչպես նաև սեռական ոտնձգությունները վերջիններիս նկատմամբ կանխելու նպատակով շատ կարևորում է պաշտպանությունը երկրորդական դեպքերից՝ հայտնաբերման և բացահայտման միջոցով:

Որպես անչափահասների նկատմամբ սեռական բռնության գործադրման կանխման մեթոդ՝ կարելի է դիտել նաև վիկտիմիոլոգիական (գոհաբանական) պրոֆիլակտիկան՝ միջոցներ, որոնք ուղղված են անչափահասների անվտանգ կենսակերպին և հանցագործության գոհ դառնալու ռիսկի նվազմանը: Անչափահասների դեմ ուղղված սեռական ոտնձգությունների ռիսկի նվազման համար նշանակություն ունի հասարակական կարգի ապահովումը այն վայրերում և այն ժամերին, որտեղ և երբ դրանց կատարման հավանականությունը մեծ է:

Վիկտիմիոլոգիական պրոֆիլակտիկայի

հիմքում առաջնային դեր են խաղում վիկտիմիոլոգիական և սեռական դաստիարակությունը: Վիկտիմիոլոգիական դաստիարակությունը կայանում է հավանական գոհի ինքնապաշտպանման տեսական և գործնական հիմունքներում, էքստրենալ իրավիճակների գնահատման և խուսափման որոշակի հմտությունների զարգացման մեջ և այլն<sup>6</sup>:

Սեռական դաստիարակությունը գործընթաց է, որը ուղղված է անձի հատկանիշների մշակմանը, որը թույլ է տալիս անցկացնել սեփական սեռական նույնացում և մշակել մարդու անհրաժեշտ վարքը հակառակ սեռի ներկայացուցչի հետ կենսագործունեության բոլոր փուլերում<sup>7</sup>: Այսպիսով,

վիկտիմոլոգիական պրոֆիլակտիկական երկարատև գործընթաց է, որն իր մեջ ներառում է սոցիալական, տնտեսական, բժշկական դաստիարակչական և կոմպլեքսային միջոցների փոխգործություն:

Այսպիսով, կարելի է փաստել, որ անչափահասների նկատմամբ սեռական բռնության գործադրումը և շահագործումը, անչափահասների մարմնավաճառությունը, մանկական պոռնոգրաֆիան չնվազող երևույթներ են և որոշակի սահմաններ չեն ճանաչում ո՛չ աշխարհագրական, ո՛չ մշակութային կամ սոցիալական տեսակետներից, ինչով և պայմանավորված է այս հիմնախնդրի արդիականությունը:

<sup>1</sup> Տե՛ս <http://hetq.am/am/society/serakan-brnutyun/>.

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ՆԳՆ 08.08.1996թ. թիվ 633 հրաման:

<sup>3</sup> Տե՛ս Детство идеальное и настоящее. Под ред. Слободской Е. Р. Новосибирск: Сибирский Хронограф, 1994. С. 189.

<sup>4</sup> Տե՛ս «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա

<sup>5</sup> Տե՛ս «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա

<sup>6</sup> Տե՛ս Волкова Т. Виктимологическая профилактика. Требуется обучение правилам безопасного поведения.

Российская юстиция. 2003. №1. С. 69.

<sup>7</sup> Տե՛ս Резер Т. М. Медико-социальные подходы к организации полового воспитания и сексуального образования. Социологические исследования. 2003. №1. С. 104.

## РЕЗЮМЕ

### *Несовершеннолетний и сексуальное насилие*

Статья посвящена проблеме сексуального насилия над детьми, вовлечения последних в занятие проституцией, изготовлению материалов и предметов с порнографическими изображениями несовершеннолетних, мерам предотвращения и предупреждения совершения половых преступлений в отношении последних, ужесточению уголовной ответственности за их совершение. Представлены некоторые мероприятия, совершаемые отделом по делам несовершеннолетних полиции РА, с целью предотвращения повторных случаев половых посягательств в отношении несовершеннолетних. Также в качестве меры предотвращения применения сексуального насилия над детьми рассмотрена виктимологическая профилактика.

## SUMMARY

### *Infants and sexual violence*

The Article is devoted to a problem of sexual violence over children, involving it in engaging in prostitution, to manufacturing of materials and subjects with pornographic images of infants, to measure of prevention and the prevention of fulfillment of sexual crimes concerning the following, to toughening of a criminal liability for their fulfillment. Some actions made by department on affairs of infants of police RA, for the purpose of prevention of repeated cases of sexual encroachments concerning infants are presented. Also as a measure application prevention of sexual violence over children preventive maintenance is considered victimology.

### ՄՀԵՐ ՄԱՍԱԶԱՆՅԱՆ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավաբանական ֆակուլտետի սահմանադրական և մունիցիպալ իրավունքի ամբիոնի ասպիրանտ

### ՄԻՔԱՅԵԼ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավաբանական ֆակուլտետի քաղաքացիական և քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի ասպիրանտ

## ՈՐՈՇ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԽՄԲԱՅԻՆ ՀԱՅՅԻ ՄԱՍԻՆ

Խմբային հայցը հայրենական իրավական համակարգի համար դեռևս օտար ինստիտուտ է և իրավագիտության մեջ գրեթե չուսումնասիրված: Սակայն, Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում այդպիսի ինստիտուտն անհրաժեշտ է, քանի որ, ինչպես նշում է Գ.Վ. Մակարյանը, դատավարության բազմաքանակության, բազմազանության (множественности) ցանկացած ձև քաղաքացիական դատավարությունը դարձնում է առավել օպերատիվ և արդյունավետ՝ ի տարբերություն սովորական կարգի<sup>1</sup>:

Խմբային հայցի ինստիտուտն առաջացել է Անգլիայում՝ քաղաքացիների մեծ խմբերի շահերը պաշտպանելու նպատակով, որոնց իրավունքները խախտվել են նույն անձի գործունեության հետևանքով: Այնուհետև, այդ ինստիտուտը լայն տարածում է ստացել ԱՄՆ-ում՝ որպես դասային հայց (class action)<sup>2</sup>:

Բնութագրելով դասային հայցը որպես ամերիկյան իրավունքում ձևավորված հայցի տեսակ՝ կարելի է առանձնացնել նրա բնորոշ հետևյալ հատկանիշները.

1. Այս հայցի օգտագործումը նախատեսվում է այն դեպքերում, երբ առաջանում է անձանց մեծ խմբի շահերի պաշտպանության անհրաժեշտություն, երբ դժվար է որոշել այդ խմբի կոնկրետ կազմը, իսկ գործին յուրաքանչյուրի մասնակցությունը նպատակահարմար չէ: Գրականության մեջ նշվում է, որ խմբի թվաքանակը կարող է լինել ցանկացած չափի (հարյուրավոր, հազարավոր), բայց 10 մասնակցից պակասը չի կարող դաս համարվել և հիմք հանդիսանալ դասային հայցի համար:

2. Դասային հայցերը հնարավոր են միայն այն պայմաններում, երբ խմբում ընդգրկված անձանց իրավունքները խախտվել են միևնույն հանգամանքի ուժով, և նրանց հայցային պահանջը հիմնվում է միևնույն հիմքի վրա, այսինքն՝ հիմնված է միևնույն փաստական

հիմքի և իրավական հիմնավորվածության վրա:

3. Դասային հայցով որպես հայցվոր է հանդես գալիս տվյալ խմբի առաջին ինքնական դիմած մասնակիցը կամ մասնակիցները, ով (ովքեր), գործելով իր (իրենց) նախաձեռնությամբ, առանց մյուսների հանձնարարության ներկայացնում է խմբի բոլոր անդամների շահերը: Այսինքն՝ դասային հայցի դատավարության ժամանակ որպես հայցվոր անմիջականորեն մասնակցում են խմբի մեկ կամ մի քանի անդամներ, այսպես կոչված ներկայացուցչական հայցվորներ, այն դեպքում, երբ խմբի մնացած անդամները, թեև համարվում են հայցվորներ, դատավարությանը չեն մասնակցում: Հաճախ դատավարությանը մասնակցում է ինքնական փաստաբանը, որը մասնակցում է խմբի մեկ կամ մի քանի անդամների հանձնարարությամբ: Ինքնական փաստաբանը ներկայացուցչական հայցվորից ստանալով իր լիազորությունները, գործին մասնակցում է առանց խմբի մյուս անդամների լիազորության՝ իր վրա վերցնելով գործի դատական բոլոր ծախսերը:

4. Ներկայացուցչական հայցվորի կողմից ներկայացրած դասային հայցի պահանջներն իր մեջ ընդգրկում է խմբի բոլոր անդամների պահանջները:

5. Ամերիկյան իրավունքում մշակված են դասային հայցերի դատավարական հատուկ մեխանիզմներ: Մասնավորապես, նախատեսվում է, որ դատարանը պետք է որոշի հայցին դասային հայցի կարգավիճակ տալու հարցը: Միայն այդ որոշումը կայացնելուց հետո է հայցը համարվում դասային: Դատական ծանուցագիրն ուղարկվում է միայն ներկայացուցչական հայցվորին, սակայն դատական ակտը պարտադիր է բոլոր հայցվորների համար, միաժամանակ նրանք գրկված չեն դատական ակտը բողոքարկելու իրավունքից, այդ թվում նաև այն պատճառաբանությամբ, որ իրենց իրավունքները արդյունավետ պաշտպանու-



թյուն չեն ստացել:

Խմբային հայցերի ինստիտուտը, ի տարբերություն անգլո-սաքսոնական իրավական համակարգի, մայրցամաքային իրավական համակարգում լայն տարածում չի ստացել: Վերջին տասնամյակում մայրցամաքային Եվրոպայում այս հարցի վերաբերյալ նկատվում են նշանակալի փոփոխություններ: Ընդունվել են համապատասխան օրենսդրական ակտեր, որոնք կարգավորում են խմբային հայցերը ներկայացնելու հետ կապված դատավարական իրավահարաբերությունները: Թեև, ի տարբերության ԱՄՆ-ի, մայրցամաքային Եվրոպայում այն հարցերը, ինչի վերաբերյալ կարելի է խմբային հայց ներկայացնել և այդպիսի հայց ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտների կազմը զգալիորեն սահմանափակված է:

Խմբային հայցերի ինստիտուտը գերմանական իրավունքում ընդհանուր առմամբ մինչև վերջերս չէր ընդունվում: Այստեղ տարածված էր առանձին հայցերը մեկ վարույթում միավորելու պրակտիկան, և ընդհանուր շահերի պաշտպանության հարցը կարգավորվում էր հանրային իրավունքի ճյուղերով: Սակայն գերմանական օրենսդիրը որոշ դատական գործերի ճնշման տակ ստիպված եղավ 2004թ. ընդունելու «Խմբային հայցերի մասին» օրենքը, որը տարածվում է արժեթղթերի վերաբերյալ խմբային գործերին: Օրենքը գործելու էր 5 տարի ժամկետով մինչև 2010թ. հոկտեմբերը, այդ փորձաշրջանից հետո կորոշվի՝ տարածել այն նաև այլ ոլորտների վրա, թե՛ ոչ:

Ֆրանսիայում, չնայած այս ինստիտուտի վերաբերյալ տարածված բացասական կարծիքին, նախագահը կարգադրություն է ստորագրել, որի համաձայն՝ կառավարությունը պետք է հետազայում զարգացնի խմբային հայցերի ինստիտուտը՝ դրանով բարձրացնելով արդարադատության մատչելիությունը: 2006թ. նոյեմբերին Ֆրանսիայի ֆինանսների նախարարությունը շրջանառության մեջ դրեց օրենքի մի նախագիծ, որով թույլատրվում է մինչև 2000 եվրո հայցագնով խմբակային հայցերը, իսկ խմբակային հայցերով դատարան դիմելու իրավունք ունեն ազգային սպառողական միավորումները:

Իտալիայում այս ինստիտուտն իր ամրագրումն է ստացել սպառողների օրենսգրքում, սակայն, ինչպես Ֆրանսիայում, այստեղ էլ խմբային հայցերը ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտների կազմը սահմանափակված է միայն գրանցված սպառողական միություններով. միայն դրանք կարող են դիմել դատարան և որոշակի խմբի շահերը ներկայացնել դա-

տարանում: Շվեյցարիայում, որոշ վերապահումներով նույնպես ներդրվել է այս ինստիտուտը: Իսպանիայում խմբային հայցի ինստիտուտը ներդրվել է 2001թ.: Այդպիսի հայցով դատարան դիմելու իրավունք ունեն թե՛ ֆիզիկական, թե՛ իրավաբանական անձիք (սպառողների միություններ): Նիդեռլանդներում քաղաքացիական օրենսգիրքը խմբակային գործողությունների հնարավորություն է նախատեսում օրենքի խախտումներից վնաս կրած անձանց համար:

Եվրամիությունում նույնպես փորձեր են արվում փոխառել ամերիկյան դասային հայցի ինստիտուտը՝ հատկապես նպատակ ունենալով հայցեր ներկայացնել մեծ կազմակերպությունների դեմ: Չնայած Եվրամիության 27 երկրներից 10-ում դասային հայցի ինստիտուտն առկա է, սակայն եվրոպացիներն այն չեն ընդունում, հատկապես Ֆրանսիայում՝ գտնելով, որ ԱՄՆ-ում դասային հայցի ինստիտուտն հեղինակագրվել է, քանի որ այդ հայցերը հրաշալի «գիզնես» են դարձել փաստաբանների համար:

ՌԴ- իրավական համակարգում խմբային հայցն այն տեսքով, ինչպիսին ամերիկյան իրավունքում է, մինչև վերջերս բացակայում էր: ՌԴ- օրենսդրությունը նախատեսում է մարդկանց մեծ խմբերի շահերի պաշտպանություն հատուկ հայցերով, որոնք ստացել են «կոլեկտիվ հայցեր» կամ «անորոշ շրջանակների անձանց պաշտպանության մասին» հայցեր:

Կոլեկտիվ հայցով դատարան դիմելու համար ՌԴ- քաղաքացիական դատավարության օրենսգիրքը համապատասխան հոդվածներ է նախատեսում՝ 4, 45, 46 հոդվածները: Կոլեկտիվ հայցերի ներկայացման հնարավորությունը նախատեսված է նաև 1992թ. փետրվարի 7-ին ընդունված «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին», 2001թ. նոյեմբերի 29-ին ընդունված «Ներդրումային հիմնադրամների մասին», 2001թ. օգոստոսի 8-ին ընդունված «Պետական վերահսկողության ժամանակ իրավաբանական անձանց և Անհատ ձեռնարկատերերի իրավունքների պաշտպանության մասին» ՌԴ- օրենքներով:

Կոլեկտիվ հայցեր ՌԴ-ում կարող են ներկայացնել տեղական ինքնակառավարման մարմինները, դատախազությունը, սպառողների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող գրանցված կազմակերպությունները և այլն: Ինչպես արդեն նշվեց, ՌԴ- օրենսդրությունը չի նախատեսում քաղաքացու կողմից խմբային հայցով դատարան դիմելու հնարավորություն: Օրենքը միայն պետական մարմիններին և որոշ կազմակերպություններին է հնարավորություն տալիս

կողեկտիվ հայցերով դիմել դատարան. օրինակ՝ պետական վերահսկողության ժամանակ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի իրավունքների խախտման դեպքում կողեկտիվ հայցով դատարան կարող են դիմել իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի միավորումները, կամ ոչ առևտրային այլ կազմակերպություններ: Նման մոտեցումը խիստ տարբերում է կողեկտիվ հայցը դասային հայցից, քանի որ կողեկտիվ անդամները որպես հայցվորներ չեն մասնակցում դատավարությանը, և հայցի մասնաշաղկապությունը կրում է ձևական բնույթ:

Խմբային հայցի էությունը նրանում է, որ պետք է պաշտպանի տվյալ խմբի բոլոր անդամների շահերը: Սակայն ՌԴ կողեկտիվ հայցի նպատակը հարցի միջանկյալ լուծումն է, այն ուղղված է դադարեցնելու պատասխանողի անօրինական գործողությունները, իսկ վնաս կրած անձանց փոխհատուցման հարցը չի էլ քննարկվում, այսինքն՝ այն ունի ավելի շատ հանրային-իրավական, քան մասնավոր-իրավական բնույթ, իսկ վնասի հատուցում ստանալու համար վնաս կրած խմբի յուրաքանչյուր անդամ պետք է առանձին հայցով դատարան դիմի: Սակայն կողեկտիվ հայցն ապացուցողական հիմք է ստեղծում հետագայում խմբի անդամներին առանձին-առանձին դատարան դիմելու համար:

2009թ. հոկտեմբերի 21-ին ուժի մեջ է մտել ՌԴ արբիտրաժային դատավարության օրենսգիրքը՝ նոր խմբագրությամբ:

ՌԴ արբիտրաժային դատավարական օրենսգրքի 225.6. հոդվածը պարունակում է մի շարք նորմեր, որոնք հնարավորություն են տալիս օգտագործելու խմբային հայցն արբիտրաժային դատարան դիմելու համար՝

- վեճի կողմ հանդիսացող մասնավոր անձի իրավունքը դիմել արբիտրաժային դատարան այլ անձանց շահերը պաշտպանելու համար՝ նրանց խնդրանքով,
- այլ անձանց խնդրանքի գրավոր պարտադիր առկայությունը,
- այլ անձանց անունից դատարան դիմած անձն իրավունք ունի մասնակցել դատավարությանը, նույնիսկ ձևակերպել հայցային պահանջները,
- արբիտրաժային դատարան դիմող անձն իրավունք ունի հրապարակայնորեն առաջարկել միանալ հայցին, այդ մասին հանդես գալով զանգվածային լրատվամիջոցներով և այլ միջոցներով, ինչպես նաև կոնկրետ հասցեներով տեղեկատվություն ուղարկել,

– շահագրգիռ անձը կարող է գրավոր դիմումով հայտնել հայցին միանալու իր ցանկության մասին:

Այսպիսով, խմբային հայցը կարելի է դիտել որպես անորոշ անձանց շահերի պաշտպանության համար հայցի տարատեսակ: Խմբային հայցի ներկայացման ժամանակ պատասխանողից միատեսակ պահանջ ունեցող մարդկանց խումբը դեռևս հստակեցված չէ, իսկ դատարանի որոշմամբ պահանջների բավարարումը՝ անհատականացված: Միաժամանակ, յուրաքանչյուր անձ իրավունք ունի անհատապես պաշտպանելու իր շահերը դատարանում՝ միանալով խմբային հայցին:

Խմբային հայցին բնութագրող չափանիշները հետևյալն են.

- պատասխանողի կողմից խախտված իրավունքների մասնակիցների բազմաթիվությունը,
- քաղաքացիական իրավունքների պաշտպանության օգտագործվող միջոցների ընդհանրությունը,
- մարդկանց խմբի կողմից պահանջվող հիմքի և առարկայի միատեսակությունը,
- հայցվորների ընդհանուր պատասխանողի առկայությունը:

Խմբային հայցերը հատկապես ձեռնառու են փոքր պահանջ ունեցող հայցվորներին, որոնք դատավարության ընթացքում ստանում են արդյունավետ պաշտպանության հնարավորություն: Նման հայցն օգտակար է նաև դատական ակտի կատարման ժամանակ: Խմբային հայցը նվազեցնում է տարբեր դատարանների կողմից հակասական որոշումներ կայացնելու հնարավորությունը:

Խմբային հայցի ինստիտուտը պետք է տարանջատել մեկ վարույթում հայցերի միավորման և համահայցվորների ինստիտուտներից:

Խմբային հայցը մի վարույթում միավորվող հայցերից տարբերվում է նրանով, որ հայցերի մեկ վարույթում միավորումը կատարվում է դատարանի վարույթում արդեն գտնվող հայցերով, դրա համար էլ նման գործերը չեն միավորում բոլոր այն անձանց, ում շահերը խախտվել են պատասխանողի կողմից: Ոչ հայցերը մեկ վարույթում միավորելը, ոչ համատեղ հայց ներկայացնելը չեն կարող փոխարինել խմբային հայցին, քանի որ վերջինս կարող է ներկայացնել հսկայական թվով անձանց:

Խմբային հայցի ինստիտուտը տարբերվում է համահայցվորի ինստիտուտից նրանով, որ խմբային հայցը լիազորված մարմնի հայց է, որն ուղղված է պաշտպանելու որոշակի խմբի շահերը, իսկ համա-

հայցվորի ինստիտուտը, դա համատեղ հայց ներկայացնելն է:

Այսպիսով, երկու դեպքերում էլ դատարան են դիմում առավել գրագետ և նյութապես ապահովված անձիք, իսկ վերջինիս դեպքում կարող է վերականգնվել բավականին մեծ թվով այնպիսի մարդկանց իրավունքներ, որոնք նյութական հնարավորություն չունեն դատարան դիմելու<sup>3</sup>:

Խմբային հայցերի առավելություններն ակնհայտ են և կարելի է առանձնացնել հետևյալ առավելությունները.

– ինչպես հանրային-իրավական շահերի, այնպես էլ մասնավոր-իրավական շահերի միաժամանակյա պաշտպանություն,

– մեկ դատավարությունում պատասխանողից

միատեսակ պահանջներ ունեցողներին հավաքելու հնարավորություն,

– դատարան դիմելու իրական հնարավորություն չունեցող փոքր պահանջներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանություն,

– միաժամանակ բոլոր հայցվորների համար դատական ակտի կատարման իրականացում,

– նույն պատասխանողի համար տարբեր դատական վճիռներով վարքագծի «իրարամերժ չափորոշիչների» սահմանման բացառում:

Խմբային հայցի առավելությունները կայանում են նաև դատավարական ռեսուրսների տնտեսման և ֆինանսների խնայողության մեջ:

<sup>1</sup> Տե՛ս Макарян Д. В. Процессуальное соучастие в российском арбитражном судопроизводстве и другие формы процессуальной множественности. Адвокатская практика. 2005. N 3.

<sup>2</sup> Տե՛ս Рожкова М. А. И вновь о групповых и косвенных исках/  
<http://www.law.edu.ru/article/article.asp?articleID=1348191>

<sup>3</sup> Տե՛ս Лукашова М.Д. Проблемы исков в защиту интересов неопределенного круга лиц и групповых исков /  
<http://www.legist.ru/conf/Lukashova.htm>

## РЕЗЮМЕ

### *Некоторые соображения по поводу группового иска*

Статья посвящена институту группового иска, сложившегося в зарубежной юриспруденции. Данный институт является не только чуждым правовой системе РА, но и абсолютно не изученным. Сложившийся в правовой системе США как вид иска, групповой иск получил распространение также во Франции, Италии и в других государствах Европейского союза. В РФ также, правда с некоторыми изменениями, предпринимаются попытки по заимствованию американского института классового иска. Преимуществами группового иска являются защита интересов истцов с небольшими исковыми требованиями, исключение принятия отдельными судами разных решений по сходным делам, эффективное исполнение судебных актов, а также экономия процессуальных и финансовых ресурсов.

Так как преимущество группового иска является очевидным, считаем, что данный институт необходим и настало время внедрить его в правовую систему РА.

## SUMMARY

### *Some views about class action*

The article is concerned to the institution of class action prevailing in the foreign law. This institution is not only alien to the legal system of RA, but it is also absolutely unstudied. Formed in the US legal system as a type of an action class-action has been extended also to France, Itali and other European Union Member States. Attempts to borrow the american Institute of class action, though with some modifications, are being made in Russia too. The advantages of a class action is the protection of the interests of plaintiffs with small claims, exception for the adoption by individual courts of different decisions on similar cases, effective enforcement of judicial decisions, as well as saving procedural and financial resources.

Since the advantage of a class action is obvious, this institution is considered to be needed and it is the time to implement it in the legal system of the RA.

### ԼԻԼԻԹ ԽԱՌԱՏՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

## ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԽՐԱՎԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Խոսքի ազատությունը մարդու իրական հնարավորությունն է ստանալ, իրացնել և տարածել շրջապատող աշխարհի մասին պատկերացումները խոսքի միջոցով: Առավել նեղ իմաստով խոսքի ազատությունը դիտվում է որպես իրավաբանորեն ճանաչված և նորմատիվ ամրագրված մարդու հնարավորություն ինքնուրույն ընտրել իր ճարտասանական վարքագծի տեսակն ու ձևը, ունենալ և կարողանալ արտահայտել սեփական մտքերը, կարծիքներն ու գաղափարները, ինչպես նաև տարածել դրանք գրավոր կամ բանավոր, ամբողջ ծավալով կամ մասնակիորեն, որևէ հարցով և որևէ թեմայի առնչությամբ, սակայն պայմանով, որ այն չի վտանգում իրավապահական արժեքները: Ըստ էության սա անհատի հոգևոր անձեռնմխելիության ոլորտն է: Ծանաչելով մարդու խոսքի ազատության իրավունքը՝ պետությունը դրանով իսկ պարտավորվում է չխոչընդոտել այլ սուբյեկտների իրավունքները և ազատությունները, չսահմանափակել մտքերի և գաղափարների ազատ փոխանակումը, որոնք վտանգ չեն ներկայացնում իրավական պաշտպանության այլ օբյեկտներին: Այս իրավունքի իրականացման և կիրառման համար անհրաժեշտ են միջազգային մեխանիզմներ, ինչպես նաև սահմանադրական երաշխիքներ, մասնավորապես. «մարդու իրավունքը սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից»<sup>1</sup>: Սահմանադրական երաշխիքներն են՝ ազատ փնտրել, ստանալ, փոխանցել և տարածել տեղեկություններ օրինական ճանապարհով՝ մարդու անձնական և ընտանեկան կյանքի իրավունքի հարգումը, անձի նամակագրության, փոստային, հեռագրական, հեռախոսային խոսակցությունների և այլ հաղորդումների գաղտնիության ապահովումը<sup>2</sup>, անձի պատվի, արժանապատվության, գործարար և բարի համբավի պաշտպանությունը և այլն: Այսպես, ՌԳ-ում երաշխավորվում է ՉԼՄ ազատու-

թյունը, արգելվում է գրաքննությունը, արգելվում է թշնամանք և ատելություն սերմանող քարոզչությունը ըստ սոցիալական, ցեղային, ազգային կամ կրոնական պատկանելության, արգելվում է նաև առանց անձի իմացության և համաձայնության նրա մասնավոր կյանքի վերաբերյալ տեղեկություններ տարածելը, որը սահմանափակված է դաշնային օրենսդրությամբ<sup>3</sup>:

Խոսքի իրավունքի ազատության գործողության սահմանները վերապահվում են երկու կատեգորիաների: Առաջին՝ օրենսդրական՝ խոսքի իրավունքի արտահայտման և սահմանափակումների նորմատիվ ամրագրումը, երկրորդ՝ փաստական՝ ոչ այնքան տարածված, քանի որ այստեղ ենթադրվում են մարդու կամքից անկախ գործոններ, օրինակ խոսքի պաթոլոգիա:

Ժամանակակից իրավաբանական գրականությանում, մեծ մասամբ օրենսդրական պրակտիկայում, դեռևս մշակված և ընդունված չէ միասնական մոտեցում խոսքի իրավունքի և տեղեկատվության ազատության, և դրանց հարաբերակցության մասին: Այսպես, մի քանի հեղինակների պնդմամբ, խոսքի ազատությունը համարվում է մարդու հիմնարար իրավունքներից մեկը՝ տեղեկատվության ազատության հիմնական բաղկացուցիչ մասը՝ որպես այս երկու տարրերի համակցություն: Վ.. Մակլակովը և Բ. Ստրաշունը տեղեկատվության ազատությանը վերագրում են իրավունքների և ազատությունների մի ամբողջ խումբ, այդ թվում նաև խոսքի ազատությունը, կարծիքների արտահայտման ազատությունը, մամուլի և ՉԼՄ-ի ազատությունը, տեղեկություններ տարածելու ազատությունը<sup>4</sup>:

Ժողովրդավարական հասարակությունը չի կարող ունենալ բնականոն զարգացում, եթե չկա մտքի և խոսքի ազատություն, իսկ այդ ազատությունները կոչված են ապահովելու մամուլը և զանգվածային լրատվամիջոցները: Մամուլի և մյուս լրատվամիջոցների շնորհիվ է երաշխավոր-

www.lawinstitute.am

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

վում խոսքի ազատությունը: Խոսքի ազատության իրավունքի միջոցով հասարակայնությունը իրացնում է սահմանադրական կարևոր իրավունքներից մեկը՝ իրազեկվում է՝ ստանում տեղեկություն, որն անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակարգում՝ քաղաքական երկխոսությունների, բանավեճերի և քննարկումների համար: Խոսքի ազատության իրավունքի հիմքը դրվեց 1689 թ. Անգլիայում «Իրավունքների մասին բիլով», որով այդ երկիրը հռչակվեց սահմանադրական միապետություն, որի շնորհիվ սահմանափակվում էին միապետի ինքնիշխան լիազորությունները և երաշխավորվում խորհրդարանի իրավունքներն ու ազատությունները: Այնուհետև, խոսքի ազատությունը իր զարգացումը գտավ 1787թ. ԱՄՆ-ի Սահմանադրությունում, որից հետո ժողովրդավարական մի շարք երկրներ իրենց սահմանադրություններում և օրենսդրություններում ճանաչեցին այն որպես գերակա իրավունք՝ երաշխավորելով նաև մամուլի ազատության սկզբունքը: Անդրադառնալով մամուլին՝ նշենք, որ մամուլի ազատությունը իրավական պետությունում նորագույն հաղորդակցության տեխնոլոգիաների զարգացման պայմաններում ՁԼՄ գործունեության հիմնական սկզբունքն է: Որպես ժողովրդավարական վարչակարգի պարտադիր տարր, այդ սկզբունքը անհատների և նրանց միավորումների քաղաքական բազմակարծությունն արտահայտող և մշակութային բազմազանությունն ապահովող անհրաժեշտ պայմանն է: Այսպիսին է «անհրաժեշտ բազմազանության» օրենքը, որը, ըստ Մ. Ֆեդոտովի, բնորոշ է կիբերնետիկային, համաձայն որի՝ որքան բարդ է կառավարվող օբյեկտը, այնքան բազմազործառությանին է կառավարվող մեխանիզմը: Հետևաբար՝ «զսպելով» բազմակարծությունը, այդ մեխանիզմը հասարակությանը զրկում է ինքնակատարելագործման հնարավորությունից, իսկ իրեն՝ ինքնապահպանությունից<sup>5</sup>:

Քաղաքական համակարգին բնորոշ է առանձին քաղաքական գործիչների կամ «խմբավորումների» ինքնապաշտպանական բնագործ: Հասարակությանը պետք է հնարավորություն ընձեռվի ինքնուրույն ձևավորել, քննարկել և ընտրել վարքագծի տարբեր դրսևորումներ:

Մինչդեռ ամբողջատիրությունը միանշանակ և տրամաբանորեն հակասում է մամուլի և ընտրությունների ազատությանը, քանի որ այն

հիմնված է «սեփական-օտար» դիխոտոմիայի վրա և չի թույլատրում «հիմնական ուղուց» շեղված կարծիքների արտահայտություն<sup>6</sup>:

Դեռևս ԽՍՀՄ Սահմանադրությունում, խորհրդային իրավական համակարգում, ձևավորվել էր այնպիսի հայեցակարգ, որի համաձայն՝ մամուլի գործունեությունը ծառայում էր բացառապես դասակարգային տեսակետների արտահայտմանը: Այսպես, 1977 թվականին ԽՍՀՄ Սահմանադրությունը երաշխավորում էր մամուլի ազատությունը, սակայն բացառապես կուսակցության շահերի համար, սոցիալիստական ժողովրդավարության ամրապնդման և զարգացման նպատակով:

Այնուհետև 1990 թ. հունիսի 12-ին ընդունվեց «Մամուլի և զանգվածային մյուս լրատվամիջոցների մասին» ԽՍՀՄ օրենքը, որի առաջին հոդվածը վերնագրված էր «Մամուլի ազատություն», և որտեղ առաջին անգամ տրվեց մամուլի օրենսդրական սահմանումը. «Մամուլը և զանգվածային մյուս լրատվամիջոցներն ազատ են: ԽՍՀՄ Սահմանադրությամբ քաղաքացիներին երաշխավորված խոսքի ազատությունը և մամուլի ազատությունը կարծիքների և համոզմունքների արտահայտման իրավունքն է փնտրել, հավաքել, ստանալ և տարածել տեղեկություններ և գաղափարներ ցանկացած ձևերով, ներառյալ մամուլն և մյուս զանգվածային լրատվամիջոցները»<sup>7</sup>: Նշված օրենքի իմաստը կայանում էր նրանում, որ ԽՍՀՄ պատմության ամբողջ ժամանակահատվածում առաջին անգամ օրենսդրորեն ամրագրվեց խոսքի իրավունքը: Մինչ այդ գրաքննությունը դիտվում էր որպես իրավաբանորեն սահմանված նորմ, իսկ հրապարակայնությունը, որն իր լայն տարածումը գտավ միայն 1980-ականների երկրորդ կեսին՝ ընդամենը առավելություն էր, շնորհիվ ԽՍՀՄ քաղաքացիներին՝ ԽՄԿ քաղբյուրոյին առընթեր գրաքննության կոմիտեի կողմից: Վերջապես օրենքով կարգավորվեց մինչ այդ երկրում տիրող իրավիճակը՝ այսուհետև խոսքի ազատության իրավունքը հռչակվեց որպես պարտադիր իրավանորմ, իսկ գրաքննությունը դուրս մղվեց իրավական դաշտից<sup>8</sup>: Բացի այդ, «Մամուլի և զանգվածային մյուս լրատվամիջոցների մասին» ՌԴ օրենքով ստեղծվեցին նպատակոր պայմաններ, որոնց միջոցով ՁԼՄ ոլորտի մասնավոր լրատվամիջոցը վերջնականորեն ձեռք բերեց իրավական կարգավորում և օրենսդրական ամրագրում: Օրենքը ՁԼՄ աշխատավորական կո-

www.lawinstitute.am

լեկտիվին իրավունք տրամադրեց հանդես գալ որպես դրա հիմնադիր կամ համահիմնադիր, որի հետևանքով լրագրողները, համաձայն իրենց հրատարակչության ներքին կանոնադրության, հետագայում հնարավորություն կստանային դատական կարգով մյուս սեփականատերերից պահանջել համապատասխան գույքի՝ իրենց ամրագրված մասնաբաժինը:

«Խոսքի իրավունք» հասկացության ըմբռնումը ինքնին միանշանակ չէ: Վերլուծելով խոսքի իրավունքի նորմատիվային բովանդակությունը՝ հարկ է անդրադառնալ անվանի լրագրողների արտահայտած տեսակետներին: Այսպես, ըստ որոշ լրագրողների՝ խոսքի իրավունքը պարզապես լրագրողի իրավունքն է ազատորեն ձևակերպել իր մտքերը, այնուհետև տարածել և հասցնել դրանք հասարակությանը: Ումանք գտնում են, որ դա անվերապահորեն յուրաքանչյուրի սահմանադրական իրավունքն է՝ ստանալ իրեն հետաքրքրող ամբողջական և հավաստի տեղեկատվություն: Այսպես, Դ. Վոսկոբոյնիկովի և Ս. Դուբինսկայայի կարծիքով, խոսքի ազատությունը ինքնաարտահայտման ազատություն է՝ «ներքին ձերբազատում» և «ազատ վարքագծի դրսևորում»<sup>9</sup>: Իսկ Յա. Չասուրսկու կարծիքով, «խոսքի իրավունք» հասկացության իմաստը կայանում է ոչ միայն քաղաքացիների ազատ տեղեկություն ստանալու, այլև ՉԼՄ գործունեության ոլորտում նրանց ակտիվորեն մասնակցության մեջ: Նա նշում է, որ 15 տարվա ընթացքում խոսքի ազատությունը Ռուսաստանում թեև ձևական գոյություն էր պահպանում, սակայն զգալի չափով կրճատվել էին դրա իրացման հնարավորությունները, որի պատճառն էին ՉԼՄ կացության համար անբարենպաստ տնտեսական հանգամանքները: Առավել բարդ է մենաշնորհման խնդիրը, մասնավորապես հեռուստատեսությունում: «Ոչ բոլորը գիտեն, որ հեռուստալսարանի ավելի քան 22 %-ին տիրապետող հեռուստալիքը արդեն մոնոպոլիստ է»<sup>10</sup>:

Համաձայն խոսքի իրավունքի ազատության՝ ՌԴ-ում արգելվում են սահմանափակումները հետևյալ դեպքերում՝

1. զանգվածային տեղեկատվության փնտրելը, ստանալը, արտադրելը և տարածելը,
2. զանգվածային լրատվամիջոցի հաստատումը, տիրապետումը, օգտագործումը և տնօրինումը,
3. ՉԼՄ արտադրանքի թողարկման և տարածման

համար նախատեսված տեխնիկական սարքերի և սարքավորումների, հումքի և նյութերի պատրաստումը, ձեռքբերումը, պահպանումը և շահագործումը: Անշուշտ, խոսքի իրավունքի ընդհանուր այս կանոնից բացառություններ կարող են արվել, սակայն առաջնահերթ, միայն օրենսդրական, այլ ոչ նորմատիվ իրավական ակտերում, երկրորդ՝ միայն ՉԼՄ օրենսդրությունում, որն իր հերթին նույնպես պետք է համապատասխանի ՉԼՄ մասին օրենքներին: Նշված բացառությունները պետք է համապատասխանեն և համահունչ լինեն ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 19 հոդվածի դրույթներին, համաձայն որի՝ «Յուրուքանչյուր ոք ունի ազատ կարծիքի արտահայտման իրավունք. այն իր մեջ ներառում է ազատություն՝ փնտրել, ստանալ և տարածել ցանկացած տեղեկություն, անկախ պետական սահմաններից, զրավոր կամ բանավոր՝ մամուլի կամ գեղարվեստական արտահայտման ձևերով, կամ էլ իր ընտրությամբ այլ միջոցներով»<sup>11</sup>: Բացառությունները սահմանվում են միայն օրենքով և միայն այլոց իրավունքների և ազատությունների հարգման անհրաժեշտության նկատառումներով, պետական անվտանգության պահպանման, հասարակական կարգի, բնակչության առողջության և հասարակությունում բարոյականության պահպանման դեպքում<sup>12</sup>: Հայաստանի Հանրապետությունում խոսքի ազատությունը ամրագրված է ներպետական կարևորություն ունեցող մի շարք իրավական փաստաթղթերում. այսպես, Սահմանադրության 27-րդ հոդվածը, որում ամրագրված են գրեթե բոլոր կարևոր (բոլոր ազատությունների չափանիշը) ազատությունները, ինչպիսիք են՝ մամուլի ազատությունը, ստեղծագործելու ազատությունը, ընտրելու և ընտրվելու ազատությունը: Խոսքի ազատության իրավունքի համապատասխան հոդվածով երաշխավորվել է ազատ կարծիք արտահայտելու իրավունքը, ինչը Սահմանադրությունը դիտում է որպես մեկ միասնական իրավունք՝ վերապահելով անհատին գործելու ազատ և անկախ՝ առանց որևէ պետական մարմնի միջամտության: Ներկայումս սահմանադրական կարգ ունեցող գրեթե բոլոր պետությունները երաշխավորել են խոսքի ազատության իրավունքը՝ ամրագրելով այն որպես պարտադիր իրավունք՝ իրենց ազգային սահմանադրություններում:

www.lawinstitute.am

Ինչպես արդեն նշվեց, խոսքի ազատության իրավունքը երաշխավորված է միջազգային նշանակություն ունեցող իրավական փաստաթղթերում: Այսպես, համաձայն Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետի՝ խոսքի ազատության իրավունքը ներկայացվում է որպես ժողովրդավարական հասարակության հենասյուներից մեկը և դրա առաջընթացին ու յուրաքանչյուր անհատի ինքնաիրացմանը ծառայող հիմնարար պայման է<sup>13</sup>: Հոդվածի բովանդակության վերլուծությունից երևում է, որ խոսքի և կարծիքի դրսևորման յուրաքանչյուր արտահայտման ձև պաշտպանվում է օրենքով: Ավելին, այն ներառում է ոչ միայն անհատի խոսքի արտահայտման հնարավորությունը, այլ նաև քաղաքական գաղափարներ և կարծիքներ արտահայտելու իրավունքը: Հոդվածի վերլուծությունից երևում է նաև, որ խոսքի իրավունքի հետ երաշխավորվում է տեղեկատվություն ստանալու իրավունքը: Ժողովրդավարական տիպի պետությունները իրենց սահմանադրություններում ընդունել են խոսքի և մամուլի ազատության պաշտպանության հատուկ երաշխիքներ: Ընդ որում, տարբեր պետություններում միևնույն սահմանադրական նորմի՝ խոսքի ազատության ձևակերպումները տարբերվում են մեկը մյուսից, թեպետ բազմաթիվ պետություններ նախապատվություն են տվել ֆրանսիական (մասնավորեցված դրական) և ամերիկյան (բացարձակ-բացասական) մոդելներին: Այսպես, մասնավորեցված-դրական մոդելը բնորոշ է Գերմանիայի Ֆեդերալ Հանրապետության Հիմնական օրենքին՝ ընդունված 1949թ. մայիսի 23-ին, Իսպանիայի Սահմանադրությանը՝ ընդունված 1978թ.: Համաձայն Ավստրիայի դաշնային Սահմանադրության (ընդ.1920թ.)՝ կարևորվում է հետևյալ նորմը. «Մամուլը ենթակա չէ ոչ գրաքննության, ոչ արտոնագրման»<sup>14</sup>: Այդպիսով, երաշխավորելով խոսքի ազատության իրավունքը, Ավստրիայի Սահմանադրությունը բացառում և արգելում է գրաքննությունը և կիրառումը: Նույն նորմն ամրագրված է նաև մեր օրենսդրությունում, որն արտացոլված է ՉԼՄ գործունեության ոլորտը կարգավորող հիմնական օրենքում: ՉԼՄ մասին օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գրաքննությունն արգելվում է, և սա կրում է անվերապահ բնույթ: Հայաստանի Հանրապետության իրավական համա-

կարգի համապատասխան օրենքներում և իրավական ակտերում ամրագրված է. «ըրաւովամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատութունը երաշխավորվում է<sup>15</sup>: Խոսքի և մամուլի երաշխիքների մասին դրույթը իր ձևակերպումն է գտել նաև «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում, (2000թ.) ինչպես նաև՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում (2003թ սեպտեմբերի 23), որի համաձայն՝ ցանկացած անձի և ՉԼՄ-ի գործունեության համար սահմանված են ազատության, մատչելիության և հրապարակայնության սկզբունքները, որոնք էլ համարվում են սահմանադրական երաշխիքների՝ իրավահավասարության, օրինականության, խոսքի (արտահայտվելու) ազատության և բազմակարծության սկզբունքների արտահայտություն<sup>16</sup>: ՉԼՄ գործունեությունը կարգավորող որոշ դրույթներ են ամրագրված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածում, որը վերաբերվում է անձի պատվի, արժանապատվության, գործարար և բարի համբավի պաշտպանության հարցերին, ինչպես նաև «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքում (ընդունվել է 1999թ.), որով կարգավորվում են գիտության, գրականության, արվեստի ստեղծագործությունների, կատարումների, հեռարձակվող կազմակերպությունների հաղորդումների ստեղծման և օգտագործման հետ կապված հարաբերությունները: Այդուհանդերձ, Հայաստանի Հանրապետությունում խոսքի ազատության երաշխիքն իր առանցքային արտացոլումն է գտել ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածում, որում ամրագրվում են միմյանց հետ փոխկապակցված և միահյուսված իրավունքներն ու ազատությունները, որպես միասնական ամբողջություն՝ ուղղված մարդու խոսքի և մտքի հավասար հնարավորությունների զարգացմանը, ներառյալ հետևյալ ազատությունները՝ խոսքի, իրազեկման, քարոզչության, կարծիքի, համոզմունքի, տեղեկատվության, զանգվածային տեղեկատվության, գրաքննությունից ձերբազատման, որոնք ունեն հավասարապես կարևոր նշանակություն և չեն կարող կիրառվել առանց հաշվի առնելու դրանց միջև եղած համակարգային կապը<sup>17</sup>:

Այժմ փորձենք վերլուծել խոսքի ազատության սահմանադրական երաշխիքները հետևյալ կարևոր սկզբունքների համատեքստում, առանց որոնց, անհատի այս հիմնարար իրավունքը ուղղա-

կի չի կարող իրականացվել.

1. միջազգային իրավունքի նորմերի գերակայությունը ազգային օրենսդրության նորմերի նկատմամբ,
2. պետության պարտավորությունը ապահովել և պաշտպանել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները,
3. ՀՀ սահմանադրական նորմերը գործում են անմիջականորեն:

ՀՀ-ում միջազգային-իրավական նորմերի անմիջական համապատասխանեցումը իր ամրագրումն է գտել ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ կետում, որի համաձայն՝ «միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրերում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը: Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել»: Այսպիսով, Հայաստանում հաստատվեց միջազգային իրավունքի ինչպես համընդհանուր նորմերի և սկզբունքների անմիջական ներգործությունը, այնպես էլ միջազգային պայմանագրերի՝ որպես բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող ակտերի ներգործությունը ՀՀ ողջ տարածքում: Լինելով ՀՀ համակարգի բաղկացուցիչ մաս՝ ՀՀ միջազգային պայմանագրերը ենթակա են կիրառման ՀՀ բոլոր մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից:

2001թ. Հայաստանի Հանրապետությունը դարձավ միջազգային կազմակերպության՝ Եվրոպայի խորհրդի մասնակից անդամ՝ պարտավորություն ստանձնելով վավերացնել Մարդու իրավունքների հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950 թ. Եվրոպական կոնվենցիան և ընդունեց միջազգային պարտավորությունները, սկզբունքները և նորմերի կատարումը: Հայաստանը այն պետություններից է, որն անդամակցելով մի շարք միջազգային կառույցների, վերակառուցեց և վերափոխեց իր սահմանադրական կարգը՝ ենթարկելով քաղաքական, տնտեսական, իրավական, մշակութային զգալի և արմատական փոփոխությունների: Կարծում ենք, որ հայաստանյան ՉԼՄ ազատության բովանդակության վրա անմիջական ներգործություն են ունենում համապատասխան համընդհանուր ճանաչում գտած միջազգային իրավական ակտերն ու դրանց կիրառման

պրակտիկան:

Ըստ «Մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի՝ «Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս նորմը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում»<sup>18</sup>: Տվյալ նորմի վերաբերյալ վեճերի լուծման հարցերով կայացրած որոշումները հստակ ձևակերպված են Եվրոպական դատարանի պրակտիկայում: Մասնավորապես, Եվրոպական դատարանը և Եվրոպական հանձնաժողովը սահմանել և մեկնաբանել են «կարծիքի արտահայտման ազատություն» հասկացությունը, միաժամանակ նշելով, որ այն տարածվում է ոչ միայն այն տեղեկությունների և գաղափարների վրա, որոնք պետության կողմից կարող են դրականորեն կամ բացասաբար ընդունվել, այլ նաև այնպիսիների, որոնք հենց իշխանությունների կողմից ուղղվելով՝ բացասաբար են անդրադառնում հասարակության վրա: Հանձնաժողովը նաև ընդգծեց, որ լրատվամիջոցների առևտրային բնույթի «արտահայտությունը» (գովազդը), թեև ընկած է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) հոդված 10-ի գործողության տակ, սակայն, այդուհանդերձ այն պետք է հնարավորինս քիչ պաշտպանված լինի, ի տարբերություն «քաղաքական ելույթների»: Բացի այդ, գործողության մեջ են Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի կողմից ընդունված մի շարք որոշումներ, որոնք նպաստում են ՉԼՄ ազատության ներթափանցմանը: Առաջնահերթ արժեք ունի «ՉԼՄ և մարդու իրավունքների մասին Հռչակագրի» ընդունմանը վերաբերող 428 (1970թ.) բանաձևը: Այստեղ թվարկված են այն սկզբունքները, որոնց պետությունները պետք է անվերապահորեն հետևեն, որպեսզի ՉԼՄ կարողանա իրականացնել իր գործառույթները հանրային շահերի ապահովման նպատակով: Այդ սկզբունքներից են.

- ա) ՉԼՄ միջոցով պետք է տարածվի ազատ արտահայտվելու իրավունքը,
- բ) ՉԼՄ միջոցով ազատ արտահայտվելը



ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ներառում է իրավունքի միջոցով տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, հրապարակելու և տարածելու ազատություն,

գ) իշխանությունները պարտավոր են ողջամիտ սահմաններում (ժամկետներում) հասարակայնությանը հետաքրքրող հարցերի վերաբերյալ տրամադրել տեղեկատվություն, իսկ ՉԼՄ պարտավորվում է հաղորդել պետական գործերի վերաբերյալ ամբողջական և հավաստի տեղեկատվություն,

դ) ՉԼՄ անկախությունը պետական վերահսկողությունից պետք է ամրագրված լինի օրենքով, որ ենթադրում է,

ե) արգելվում է մամուլի և ուղղակի, և անուղղակի գրաքննությունը. սահմանափակումները կարող են կիրառվել միայն Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի հոդված 10-ով սահմանած դրույթներով,

զ) պետական վերահսկողությունից ՉԼՄ անկախությունը պետք է ամրագրված լինի օրենքով, անկախության ցանկացած սահմանափակում թույլատրելի է միայն դատարանի կայացրած որոշման հիման վրա, այլ ոչ թե գործադիր իշխանության մարմինների կողմից,

է) ՉԼՄ ներքին կանոնակարգման կազմակերպումը պետք է երաշխավորի պատասխանատու խմբագիրների ազատությունը՝ արտահայտելու իրենց կարծիքը. նրանց անկախությունը պետք է լինի երաշխավորված,

ը) ՉԼՄ անկախությունը պաշտպանվում է մոնոպոլիաների սպառնալիքներից,

թ) ոչ մասնավոր հաստատությունները, ոչ էլ ֆինանսական խմբերը ՉԼՄ բնագավառում չպետք է ունենան մենաշնորհի իրավունք, նրանց չի թույլատրվում կազմավորել կառավարությանը ենթաստորադաս մոնոպոլիաներ,

ժ) անհրաժեշտ է ընդունել օտարերկրյա լրագրողների ազատության ապահովման համար առանձնահատուկ միջոցառումներ, ներառյալ պաշտպանությունը կամայական արտաքստմից, ՉԼՄ կարգավիճակը, պարտավորությունները և առավելությունները, որն էլ ենթադրում է օտարերկրյա լրագրողների կողմից համապատասխան պարտավորությունը՝ հավաստի լուսաբանել իրադարձությունները:

Այս միջազգային ակտը, համաձայն «Պետությունների կառավարությունների՝ զանգվածային լրատվամիջոցների հետ հարաբերությունների

մասին», թիվ 748 երաշխավորագրի (1975) և «Ազգային հեռարձակման և դրա կառավարման դերի մասին», թիվ 820 բանաձևի (1984) որպես օրենսդրական նախագիծ, երաշխավորված է եղել ՌԳ բոլոր սուբյեկտների հեռուստառադիոընկերությունների՝ ՌԳ նախագահ Բ. Ելցինի «Տեղեկատվական կայունության երաշխիքների և հեռուստահեռարձակմանը ներկայացվող պահանջների մասին» 1993թ. մարտի 20-ի հրամանագրով:

Այնուհետև, պետք է ուշադրություն դարձնել անկախ և բազմակարծ մամուլի զարգացմանն ուղղված հռչակագրերի շարքին՝ ընդունված ՅՈՒՆԵՍԿՈ-ի կողմից տարածաշրջանային մակարդակով՝ Նամիբիայում (1991թ.), Ալմա-Աթայում (1992թ.), Սանտյագոյում (1994թ.), Եմենում (1996թ.): Այդ փաստաթղթերը քննադատում են կառավարությունների՝ մամուլի ազատության սահմանափակումների փորձերը, մասնավորապես՝ տնտեսական և քաղաքական ճնշումները, գրաքննությունը, լրագրողներին աշխատանքից ազատելը, տեղեկատվության տարածման սահմանափակումները պետությունների և ազգային սահմանների միջև. «լրագրողի ձեռքակալումը և կալանավորումը իրենց մասնագիտական գործունեության հիման վրա համարվում են մարդու իրավունքների լուրջ իրավախախտումներ»<sup>19</sup>: Հռչակագիրը նաև երաշխավորում է իրենց պետություններից հեռացած լրագրողների անվտանգությունն ու անարգել վերադարձը և նրանց մասնագիտական գործունեության վերսկսումը. «նրանց, որոնց աշխատանքից անհիմն կերպով հեռացրել են, պետք է հնարավորություն ընձեռվի վերականգնվել իրենց նախկին աշխատանքում»<sup>20</sup>:

Մյուս կողմից, վերոնշյալ հռչակագրերը ընդունում և ողջունում են մամուլի ազատության և ժողովրդավարության զարգացման համաշխարհային միտումը: Դրանք խրախուսում են «լրագրողների կողմից սեփական, անկախ ՉԼՄ-ի ստեղծումը, որոնց գործունեությունն ու ֆինանսավորումը ապահովում են հենց իրենք՝ լրագրողները, և, որոնց անհրաժեշտության դեպքում որպես օգնություն տրամադրվում են լրացուցիչ նյութական միջոցներ՝ ֆինանսավորող հաստատությունների հրատարակչական քաղաքականություն չմիջամտելու պայմանով»<sup>21</sup>:

Նորաստեղծ ՉԼՄ առաջացման իրավաբանական փաստի ձևակերպման և ՉԼՄ իրավական

www.lawinstitute.am

կարգավիճակի ճանաչման համար ՉԼՄ հաստատման և գրանցման կանոնները փոքր ինչ տարբերվում են մյուս իրավաբանական անձանց ստեղծման կանոններից, որոնք ամրագրված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքում: Դա նախ և առաջ պայմանավորված է ՉԼՄ հասկացության սահմանման հետ՝ որպես «լրատվամիջոցի տարածման պարբերական ձևի», որն, անշուշտ, չի կարող համարվել իրավաբանական անձ: Երկրորդ, հրատարակչությունը կարող է դիտվել որպես իրավաբանական անձ, սակայն կարող է նաև չհամարվել որպես այդպիսին, եթե այն որևէ հաստատության կամ կազմակերպության ներքին ստորաբաժանում է, կամ էլ եթե այդ դերում հանդես է գալիս մասնավոր ֆիզիկական անձը: Իսկ եթե հրատարակչությունը կազմակերպվում է որպես իրավաբանական անձ, ապա ենթակա է գրանցման՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի ընդհանուր նորմերին համապատասխան: Երրորդ, եթե ՉԼՄ իրավական կարգավիճակը, որպես իրավաբանական փաստերի տարատեսակ, ունակ չլինեք առաջացնել իրավունքներ և պարտականություններ, ապա ՉԼՄ հաստատման և գրանցման միջացառումները, ինչպես նաև ՉԼՄ վերաբերյալ օրենքների ընդունումը անիմաստ կլինեք: Ընդամին, այնտեղ, որտեղ ՉԼՄ չի տարբերվում իրավունքի այլ սուբյեկտներից, ՉԼՄ ոլորտի օրենքների ընդունման անհրաժեշտություն չկա:

Այսպիսով, ՉԼՄ իրավական կարգավիճակից բխող առանձնահատկությունները ներկայանում են որպես հիմնական տարրերի համակցություն. իրավական կարգավիճակ, իրավասուբյեկտություն, կանոնադրական իրավունքներ և պարտականություններ, դրանց իրացման երաշխիքներ: Իրավական կարգավիճակի ձեռքբերումը տեղի է

ունենում ՉԼՄ հիմնադրման և գրանցման փուլերի միջոցով:

Առաջին փուլը՝ ՉԼՄ հիմնադրումը, որը կատարվում է ֆիզիկական կամ իրավաբանական անձանց փոխադարձ կամահայտնության արտահայտությամբ: ՉԼՄ օրենքներով սահմանված կանոնները բավականաչափ պարզ են և ժողովրդավարական: Երկրորդ՝ ՉԼՄ հիմնադրման իրավունքով օժտված է քաղաքացիական ամեն մի միավորում՝ հասարակական, կրոնական, աշխատանքային, լրագրողական կոլեկտիվներ և այլն: Հաստատությունները և կազմակերպությունները (կորպորացիաներ, բանկեր, գրադարաններ, համալսարաններ, գիտական կենտրոններ և այլն), և չորրորդ՝ ՉԼՄ հիմնադիրներ կարող են լինել պետական մարմինները: Բնականաբար, սա վերաբերում է ինչպես պետական իշխանությանը, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմիններին:

Ամփոփելով ՉԼՄ բովանդակության վրա ներգործություն ունեցող սահմանադրական նորմերի շրջանակը՝ կարելի է եզրահանգել, որ առաջնահերթ առկա է սահմանադրական ինստիտուտը: Այն կատարում է հասարակական կառուցվածքը վերակազմակերպող գործոնի դեր՝ մի կողմից օրենսդրությունում կարգավորելով իրավական այն նորմերը, որոնք իրավական համակարգում տարբեր են ըստ իրենց զբաղեցրած տեղի և դերի, մյուս կողմից՝ որպես փոխապայմանավորված և փոխլրացնող նորմերի համակցություն՝ ներառում է այդ նորմերը մեկ միասնական համակարգում, որի արդյունքում կարգավորվում են ՉԼՄ կազմակերպման գործընթացի և գործունեության ընթացքում առաջացող հասարակական հարաբերությունները:

<sup>1</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, 1950 թ., հոդ. 10:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, հոդ. 23:

<sup>3</sup> Տե՛ս ՌԴ տեղեկատվական անվտանգության հայեցակարգ, Российская газета, 28 сентября 2000г:

<sup>4</sup> Տե՛ս Маклаков В.В. Страшун Б.А., Свобода информации, Конституционное право зарубежных стран. М., 1993. С. 102.

<sup>5</sup> Տե՛ս Федотов М. Власть, зеркало или служанка, СМИ в отсутствие Ариадны. М., 1998. С. 239.

<sup>6</sup> Տե՛ս Նույն տեղում, էջ 239:

<sup>7</sup> Տե՛ս Закон РФ О средствах массовой информации, 27 декабря 1991г. С. 1.

<sup>8</sup> Տե՛ս Иванов Д. С тоской о свободе слова. Москва, 2005. С. 2.

<sup>9</sup> Տե՛ս Նույն տեղում էջ 3:

<sup>10</sup> Տե՛ս Նույն տեղում էջ 3:

<sup>11</sup> Տե՛ս «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիր, ընդունված Գլխավոր

ասանբլեայի կողմից 1966թ. դեկտեմբերի 16, հ.19, կ.2:

<sup>12</sup> Տե՛ս Նույն տեղում, հոդ. 19, կ.3:

<sup>13</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ, Երևան «Իրավունք», 2010թ., էջ 303:

<sup>14</sup> Տե՛ս <http://dir.yahoo.com/Government/Law/Constitutional/Constitutions/>.

<sup>15</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրություն (1995թ.), հոդ. 27, կետ 2:

<sup>16</sup> Տե՛ս «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, 2003թ. սեպտեմբերի 23, հոդ. 4, կետ 2, հոդ. 7, կետ 2:

<sup>17</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ, Երևան «Իրավունք», 2010թ., էջ 304:

<sup>18</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, Երևան 2007թ., հոդ.10, էջ 14:

<sup>19</sup> Տե՛ս Հռչակագիր, ընդունված Մանայում (Եմեն), 1996թ. հունվարի 11-ին:

<sup>20</sup> Տե՛ս Նույն տեղում:

<sup>21</sup> Տե՛ս Серия Деклараций о содействии развитию независимой и плюралистической прессы, принятые на региональных семинарах ЮНЕСКО в Виндхукке (Намибия, 1991 г.), Алма-Ате (Казахстан, 1992 г.), Сантьяго-де-Чили (1994 г.), и одобренных резолюцией 28С/4.6 28-й сессии Генеральной конференции ЮНЕСКО.

## РЕЗЮМЕ

### *Конституционально-правовые гарантии свободы слова*

Статья раскрывает право на свободу слова не только в широком, но и в узком понимании данного аспекта. С точки зрения целей предпринятого исследования, свобода слова рассматривается как юридически признанная и нормативно закреплённая возможность человека самостоятельно выбирать вид и меру своего речевого поведения. В статье проведен анализ современного каталога прав человека на уровне отраслевого законодательства.

## SUMMARY

### *Constitutional and legal guarantees for freedom of speech*

This article reveals right to freedom of speech not only in the wide, but also in the narrow sense of this aspect. From the point of view of this research goals, freedom of speech is examined as a legally recognized and normatively prescribed opportunity for a person to select form and measure of his/her speech behavior. This article analyses basic human rights and freedoms at branch legislation level.

**ԱՐՇԱԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ**

«ԱՅԳ» հոգեբանական ծառայությունների կենտրոնի  
ծրագրերի համակարգման բաժնի ղեկավար

**ԱԶՍՏԱԶՐԿՈՒՄ ՊԱՏԺԱՏԵՍԱԿԸ ՈՐՊԵՍ  
ՔՐԵԱԲԱՆԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ**

Բանտ հասկացությունը դարավոր պատմություն ունի: Այն իր կիրառումն էր գտել դեռ մեր թվարկությունից 2600 տարի առաջ Հին Չինաստանում, Բաբելոնում: Սակայն իր այժմեական առանձնահատկությունները բանտը ձեռք է բերել նորագույն ժամանակներում՝ պատմական զարգացման ամբողջ ընթացքում: Հին ժամանակներում բանտը անձին ֆիզիկապես բռնելու (պահելու) միջոց էր, որը սովորաբար կիրառվում էր ոչ թե որպես պատիժ, այլ որպես միջոց պատժից առաջ: Կիրառվելով որպես պատժամիջոց՝ բանտը ենթադրում էր մարմնական տանջալից սպրտումներ, որը զուգակցվում էր ձեռնաշղթաների, ֆիզիկական բռնությունների կիրառմամբ, մարմնական վնասվածքներով, կապտուկներով, և «կալանավորը» պատիժը կրում էր կյանքի համար առավել ոչ պիտանի վայրերում՝ խոնավ նկուղներում, գետնափոր վայրերում և այլն: Մանիտարական պայմանների մասին խոսելն անգամ ավելորդ էր: Պատիժը կրող անձիք ուղղակի «լցված էին» հարդի վրա, որոնք այդտեղ մնում էին մինչև լրիվ փտելը: Հիվանդ դատապարտյալների համար չկային առանձին շինություններ, նրանք անմիջապես մահանում էին, իսկ նրանց դիակները մնում էին այնտեղ մի քանի օր: Այս պայմաններում բանտերը հանդիսանում էին ուղղակի համաճարակի օջախ: Վերջինս հաճախ չէր սահմանափակվում բանտի տարածքով և տարածվում էր նաև հասարակության շրջանում:

Քրեական իրավունքի տեսության մեջ առանձնացվում են մի շարք տարրեր, որոնց հասկացությունը ձևավորում է պատժի հասկացությունը և արտացոլում պատժի էությունը: Պատժի նպատակների հիմնախնդիրը ոչ միայն և ոչ այնքան իրավաբանական, որքան փիլիսոփայական և հոգեբանական է, որը դարերի ընթացքում զբաղեցրել է ժամանակի խոշորագույն փիլիսոփաների և հոգեբանների միտքը:

Ըստ ՀՀ քրեական օրենսգրքի՝ պատժը պե-

տական հարկադրանքի միջոց է: Պետական հարկադրանքի միջոցները տարաբնույթ են. քրեական պատիժն այդ համակարգում հանդիսանում է որպես հատուկ, առավել խիստ և ծանր միջոց: Հարկադրանքի այս միջոցի հատուկ բնույթն արտահայտվում է հետևյալում. պատիժ կարող է նշանակվել միայն քրեական օրենսգրքով՝ որպես հանցագործություններ նախատեսված արարքների համար:

Ասել է թե անձի նկատմամբ քրեական պատժի կիրառման հիմքը միմիայն նրա կողմից հանցավոր արարքի կատարումն է: Եթե անձը չի կատարել նման արարք, ապա ոչ մի պարագայում նրա նկատմամբ քրեական պատիժ չի կարող կիրառվել: Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ պետության անունից կայացված և որոշակի պատիժ նախատեսող մեղադրական դատավճիռը, ըստ էության, հանցագործությանը և հանցագործին պետության կողմից տրված պաշտոնական բացասական սոցիալական և բարոյական գնահատականն է:

Այս առումով, ոչ միայն պատժի տեսակները, պատժի կրման պայմանները, այլև պատժի նպատակները ևս պատմության զարգացման տարբեր ժամանակներում տարբերվել են իրենց բնույթով: Պատժի նպատակների վերաբերյալ տեսությունների մեծամասնությունը պայմանականորեն կարելի է բաժանել երկու հիմնական ուղղությունների՝ հատուցման և օգտակարության տեսություններ:

Առաջինը պատժի բացարձակ տեսություններն են, որոնք պատժի նպատակը համարում են անցյալին ուղղված բացարձակ գաղափարը՝ հատուցում կատարված ոտնձգության և հանցագործի կողմից պատճառած չարիքի համար (հատուցման տեսություն):

Երկրորդ՝ պատժի հարաբերական տեսություններ, որոնք ուղղված են ապագային և պատիժն ընդունում են ոչ միայն որպես հանցավոր

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

արարքից բխող, այլև դրանով պայմանավորված, պետության կողմից իրականացվող նպատակամուկված գործունեություն (օգտակարության տեսություն):

Հատուցման տեսությունը դարեր շարունակ ամենատարածվածն էր փիլիսոփայական գիտելիքների մեջ: Հին Հունաստանում պատժի հատուցման գաղափարը պաշտպանում էին այնպիսի փիլիսոփաներ, ինչպիսիք էին՝ Պյութագորասը և Արիստոտելը (կյանքի վերջին տարիներին վերջինս փոխեց իր հայացքները):

Միջնադարում այս գաղափարն էր զարգացնում իտալացի ուտոպիստ Թ. Կամպանելլան: Նա կողմնակից էր հանցագործության և պատժի համապատասխանությանը, Թալիոնի՝ «ակն ընդ ակն, ատամն ընդ ատամն» սկզբունքին: Այս տեսությունը հետագայում առավել զարգացրին Կանտը և Հեգելը: Գերմանացի դասական փիլիսոփայության հիմնադիր Կանտը (1724-1804թթ.) քրեական իրավունքը սահմանում էր որպես պատժի իրավունք և այն դիտում հանցագործին գրկանքների պատճառում: Նա նույնպես կողմնակից էր Թալիոնի սկզբունքին. չարիքը պահանջում է հատուցում չարիքով, և միայն հավասարության սկզբունքով հատուցումը կարող է որոշել պատժի տեսակն ու ծավալը: Հեգելը նույնպես պատիժը հիմնավորում էր որպես հանցագործության համար հատուցում: Նա գտնում էր, որ պատիժը կարող է կիրառվել միայն մարդու՝ հանրորեն վտանգավոր վարքի արտաքին կողմի նկատմամբ և չի կարող առնչվել նրա գիտակցությանը:

Պատիժը հատուցում է, բայց ոչ համարժեք հանցագործությանը պատճառված և հանցագործին պատժելով պատճառված վնասների միջև: Փաստորեն պատժի հատուցման հեգելյան ձևակերպումը տարբերվում է իր նախորդներից այն բանով, որ Հեգելը խոսում էր ոչ թե լիարժեք հատուցման, այլ հանցագործի կողմից խախտված իրավունքների վերականգնման մասին: Պատժի հատուցման տեսության կողմնակիցների հետ գուցահեռ՝ դեռևս հնագույն ժամանակներում որոշ գիտնականներ պատժի նպատակների շարքում միայն հատուցման ընկալումը բավարար չէին համարում և պատիժը կապում էին հասարակության համար ավելի օգտակար, գործնական նպատակների հետ: Նման գաղափարներով առաջին անգամ հանդես եկավ հին հույն փիլիսոփա Պրոտագորասը:

Իրավունքը խախտողին ոչ ոք չի պատժում իրավունքը խախտելու համար, մնան կերպ կարող են վարվել միայն կենդանակերպ մարդիկ, ովքեր անգիտակցաբար վրեժ են լուծում: Խելամտորեն են գործում նրանք, ովքեր պատժում են ոչ թե կատարված հանցանքի համար, քանի որ կատարվածը չես վերականգնի, այլ որպեսզի պատժելով՝ ապագայում ոչ ոք իրավունքը չխախտի՝ թե՛ նա, ով կատարել է և թե՛ նա, ով տեսել է մեղավորին պատժված:

Հին հույն փիլիսոփա Պլատոնը կյանքի վերջին տարիներին պատժի նպատակը նույնպես համարում էր ահաբեկումը և հանցագործների ուղղումը, չնայած՝ երիտասարդ տարիներին գտնում էր, որ պատժի նպատակը հանցագործությանը արատավորված հոգիների մաքրումն է: Արիստոտելը, պատիժը հատուցում համարելով, ավելի ուշ շրջանում տարբերություն էր մտցնում պատժի և վրեժի (հատուցման) միջև: Նա վրեժը համարում էր զայրույթի և ցասման արդյունք. «Պատժել զայրույթի պահին՝ անիմաստ է. պատիժ պետք է կիրառել մեղավորին ուղղելու և հանցագործությունները կանխելու համար»:

Պատժի նպատակների և խնդիրների հարցը տասնամյակներ շարունակ քննարկվել է մաս խորհրդային իրավաբանական գրականության մեջ և եղել է քրեագետ-իրավաբանների ուշադրության կենտրոնում: Այս հարցի կապակցությամբ, գիտնականների մոտ վեճի առարկան հանգում էր հետևյալին՝ հատուցումը համարե՞լ պատժի նպատակ, թե՛ ոչ:

Հատուցման՝ որպես քրեական պատժի նպատակի, կողմնակիցները (Ն. Ա. Բելևշյայև, Վ.Գ. Սմիռնով, Ի.Ի. Կարպեց, Բ.Ս. Ուտևսկի, Պ.Պ. Օսիպով և այլոք) պնդում էին, որ պատիժ նշանակվում է ոչ միայն արդեն կատարվածի համար, այլև հետագա հանցագործությունները կանխելու նպատակով: Հանցագործի նկատմամբ նշանակվում է պատիժ, որը որոշակի իմաստով կատարվածի համար հատուցումն է այն պարզ պատճառով, որ հատուցումը, վերջին հաշվով, պատժի բաղկացուցիչ մասն է: Բացի այդ, դրանում գրեթե միշտ շահագրգռված է տուժող կողմը: Նման մոտեցման հակառակորդներն (Ա.Ա. Գերցենզոն, Ա.Ա. Պիոնուկովսկի, Ա.Լ. Ռեմենսոն, Մ.Դ. Շարգորոտսկի և այլոք) իրենց հերթին պնդում էին, որ հատուցումը պատժի էությունն է և ոչ երբեք նրա նպատակը: Պատժի վերջնական նպատակը միայն և բացառա-

պես հանցագործությունների կանխումն է: Պատժի հատուցման գաղափարի դեմ նոր շրջանում հանդես եկան հոլանդացի իրավաբան, միջազգային իրավունքի գիտության հիմնադիր Հ. Հրոցիուսը (1583-1645թթ.): Նրանք պատժի նպատակները տեսնում էին ոչ թե հատուցման, այլ ահաբեկման և հանցագործների ու այլ անձանց ուղղման մեջ:

Պատժի ընդհանուր տեսության ձևավորման համար վճռական նշանակություն են ունեցել իտալացի լուսավորիչ, հումանիստ Չ. Բեկկարիայի (1738-1794թթ.) հայացքները: Նա, մերժելով հատուցման գաղափարը, պատժի հետ կապում էր այլ՝ օգտակար ու կիրառական նպատակներ: Նա պատժի նպատակ էր համարում հանցագործների համար խոչընդոտների ստեղծումը, որպեսզի նա, ինչպես նաև այլ անձիք, հասարակությանը նոր վնաս չպատճառեն: Այդ նպատակով, պետք է կիրառել այնպիսի պատիժ, որը կհամապատասխանի հանցագործությանը, հանցագործի համար կլինի նվազ տանջալից, բայց նրա հոգեկանի վրա կունենա մեծ ազդեցություն: Բեկկարիան ձևակերպեց մի սկզբունք, որը բավական մեծ ազդեցություն ունեցավ քրեական իրավունքի հետագա զարգացման վրա: Այն է՝ արդյունավետ է ոչ թե պատժի խստությունը, այլ նրա անխուսափելիությունը:

Չ. Բեկկարիայի գաղափարներն առավել հետևողական զարգացրեց գերմանացի քրեաբան Ա. Ֆոյերբախը (1775-1833թթ.)՝ ստեղծելով ինքնուրույն քրեաիրավական տեսություն: Նա պատժի նպատակ էր համարում հանցագործությունների կանխումը, բայց այն կապում էր ահաբեկման հետ՝ նշելով, որ քրեական օրենսգրքում պարունակվող պատժի սպառնալիքը պետք է ազդի պոտենցիալ հանցագործի վրա, ահաբեկի նրան և դրանով իսկ կանխի հանցագործությունը: Նա առավել մեծ նշանակություն էր տալիս ոչ թե կոնկրետ անձի նկատմամբ պատժի գործնական կիրառմանը, այլ պատժի սպառնալիքով հանցագործի ահաբեկմանը: Փաստորեն Ֆոյերբախը որպես պատժի նպատակ, առաջնային էր համարում ընդհանուր կանխումը:

Պատժի գործնական նպատակների նշանակությունը հիմնավորող փիլիսոփայական հայեցակետերի ընդհանրացումը նպատակահարմար ենք համարում ավարտել անգլիացի գիտնական Ի. Բենտամի (1748-1832թթ.) հայացքների ներկայացմամբ: Բենտամն առաջ էր քաշում պատիժը չկիրառելու երեք հիմնական պայմաններ: Առաջին՝ պատիժ չի կարող կիրառվել, եթե դրանով չի փոխհատուցվում հանցագործությանը պատճառված վնասը: Երկրորդ՝ կիրառվող պատժի ծախսերը պետության համար չեն կարող լինել ավելի թանկ, քան հանցագործությանը պատճառված վնասը: Երրորդ՝ եթե վնասը կարող է հատուցվել առավել արդյունավետ եղանակով: Ուստի, Բենտամը կողմնակից էր այնպիսի պատիժների, որոնք պետությունից մեծ ծախսեր չեն պահանջում:

Հին և միջնադարյան հայ իրավունքի հուշարձաններում, այդ թվում Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի (Գունդստաբ) Դատաստանագրքերում նույնպես նշվում է, որ կիրառվող քրեական պատիժը հետապնդում է որոշակի նպատակներ: Թե՛ Մխիթար Գոշը և թե՛ Սմբատ Սպարապետը, ըստ Հ. Խաչիկյանի, պատժի նպատակը տեսնում էին հանցավոր արարքներից հասարակությանը պաշտպանելու մեջ: Նրանց համոզմամբ, պատիժը պետք է հետապնդի ոչ միայն պատիժ-հատուցման մերկ նպատակ՝ Թալիոնի սկզբունքով, այլ նաև մարդկանց կրոնաբարոյական իմաստով ուղղելու նպատակ: Նրանք գտնում էին, որ պատիժները (հատկապես մարմնական) հանցագործին ուղղելու, ահաբեկելու և հատուցելու նպատակ ունեն: Ընդ որում, հատուցումը և ահաբեկումը կիրառում է պետությունը, իսկ ուղղումը՝ գլխավորապես եկեղեցին: Հանցագործը պատժվում է այն պատճառով, որ նա խախտել է օրենքը, իսկ նրա նկատմամբ նշանակված պատիժը պետք է օրինակ ծառայի ուրիշներին, նախազգուշացում լինի նրանց համար: Նրանք դեմ էին նաև պատիժները կիրառելու դատան, մարդու արժանապատվությունը նվաստացնող մեթոդներին:

Պատժի նպատակների ձևակերպման մեջ անփոփոխ չի եղել նաև Հայաստանի Հանրապետությունը: Այս առումով, դեռևս 1961 թվականին ընդունված Խորհրդային Հայաստանի քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ քրեական պատժի նպատակը ձևակերպված էր հետևյալ կերպ. «պատիժը ոչ միայն մեղքի քավումն է կատարված հանցագործության համար, այլև նպատակ ունի դատապարտվածներին ուղղել և վերադաստիարակել աշխատանքին ազնվորեն վերաբերվելու, օրենքները ճշտորեն կատարելու, համակեցության կանոնները հարգելու ոգով, ինչպես նաև կանխելու նոր հանցագործությունների կատարումը ինչպես դատապարտվածների, այն-

www.lawinstitute.am

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

պես էլ այլ անձանց կողմից»:

Պատիժը նպատակ չունի ֆիզիկական տանջանքներ պատճառել դատապարտյալին կամ ստորացնել նրա մարդկային արժանապատվությունը: Այս առումով, պատժի նպատակների մեջ բավական փոփոխություններ են կատարվել 2003 թվականի օգոստոսի մեկին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի մեջ, սահմանելով՝ «Պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները»:

Ինչպես երևում է վերոգրյալից՝ ՀՀ քրեական օրենսգրքում առաջինը սահմանվում է սոցիալական արդարության վերականգնումը (48-րդ հոդվածի 2-րդ մաս): Պատժի՝ սոցիալական արդարությունը վերականգնելու նպատակը բխում է ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 10-ից. «պատիժը և քրեափրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի, համապատասխանեն հանցանքի ծանրությանը, այն կատարելու հանգամանքներին և հանցագործի անձնավորությանը: Սոցիալական արդարության վերականգնումը հնարավոր է, եթե հանցանք կատարած անձի նկատմամբ նշանակվի այնպիսի պատիժ, որն անհրաժեշտ է ու բավարար նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:

Այսպիսով, ՀՀ գործող քրեական օրենսգրքում կարևորվեց ոչ միայն պատժի գաղափարը, այլև հանցագործություն կատարած անձը՝ իր տարիքային ու անհատական առանձնահատկություններով, հանցանքը կատարելու պահին ապրած հոգեվիճակով և այլ յուրահատկություններով: Այս առումով պետք է նշել, որ արդի ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետության ազատագրկման վայրերը գործում են մարդու իրավունքների պաշտպանության դիրքերից, ինչը նաև դեռևս 2001 թվականին Եվրոխորհրդին անդամակցության շրջանակներում քրեակատարողական ոլորտում տեղի ունեցած բարեփոխումների հետևանք է: Ազատությունից զրկված անձանց պետք է վերաբերվել մարդասիրաբար և հարգել նրանց մարդկային արժանապատվությունը («Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիր, հոդված 10): Յուրաքանչյուր մարդ ունի մարդուն բնորոշ իր արժանապատվության հանդեպ հարգալից վերաբերմունքի և իր իրավական կարգավիճակի ճանաչման իրավունք (Մարդու և

ժողովուրդների իրավունքների աֆրիկյան խարտիա, հոդված 5):

Ընդհանրացնելով պատժի վերը շարադրված կիրառական նպատակները՝ սկզբունքորեն դրանք կարելի է նույնացնել հանցագործի ուղղման և հանցագործությունների կանխման նպատակների հետ: Ըստ էության, պատժի նպատակներն ինքնին ենթադրում են դատապարտված անձի ուսումնասիրում, անհատական հոգեբանական առանձնահատկությունների բացահայտում, քանի որ պատժի նպատակներից մեկը հանցագործ անձին ուղղելն է: Ուղղել դատապարտյալին, մեր կարծիքով, կնշանակի ձևափոխել կամ նվազագույնի հասցնել այն հոգեբանական առանձնահատկությունները, որոնք նպաստել են հանցավոր դիրքորոշումների ձևավորմանը և զարգացմանը: Նման մոտեցումը հիմնավորվում է հոգեբանական գիտության տեսանկյունից՝ հաշվի առնելով անձի հոգեբանությունը, նրա անձնային, հոգեբանական և այլ առանձնահատկությունները:

Դատապարտյալների ուղղում հասկացությունը ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 16-րդ հոդվածի պահանջներով, փոքր-ինչ այլ կերպ է մեկնաբանվում, սահմանելով՝ «դատապարտյալի ուղղումը մարդու, հասարակության, համակեցության կանոնների և ավանդույթների նկատմամբ դատապարտյալի հարգալից վերաբերմունքի ձևավորումն է, ինչպես նաև վերջիններիս օրինապահ վարքագծի խթանումը՝ դատապարտյալի մոտ առողջ կենսակերպի ամրապնդման և զարգացման նպատակով»:

Այնուամենայնիվ, հասարակության մեջ տիրում է այն թյուր կարծիքը (հատկապես հանցավորության աճի դեպքում), թե հանցագործությունների կանխման գրավականը քրեական պատիժների խստացումն է: Պատիժն այն միջոցներից մեկն է, որի օգնությամբ պետությունը, ազդելով հանցավորության վրա, պահում է այն որոշակի հարթության վրա: Պատիժը վերջին, ծայրահեղ միջոցն է, որը պետք է գործի այն պարագայում, երբ հասարակությունն այլևս ի գորու չէ կանխել հանցագործությունը: Ոչ թե պատիժների խստությունն է ահաբեկում հանցագործներին, այլ օրենքների գործնական և անխուսափելի կիրառումը, հանցագործությունների հուսալի բացահայտումը: Պետության համար առավել նպատակահարմար է և արդյունավետ կանխել հանցագործությունը, քան պատժել հան-

www.lawinstitute.am

ցագործին:

Վերը շարադրված նյութերի վերլուծությունը քույլ է տալիս եզրակացնել, որ, չնայած բազմաթիվ նմանություններին և տարբերություններին, այնուամենայնիվ պատիժը չունի մեկ ընդհանուր նպատակ և խնդիրներ: Խնդիրների մեծամասնությունը, որոնց առկայությունը նպաստում է հանցագործությունների կատարմանը, բաժին է ընկնում հոգեբանությանը, հոգեբանական, հուզական դեֆիցիտին, նույնիսկ, եթե առանձին պատճառներ կապված են սոցիալ-տնտեսական անկայունության և անբարենպաստ իրավիճակների հետ: Այս խնդիրների հաղթահարումը կարող է հանդիսանալ անձի վերականգնման (ռեաբիլիտացիայի) և կրկնահանցագործությունների կանխման լավագույն ուղղություններից մեկը: Այս առումով, դատապարտյալների հետագա վերականգնումն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով, անհրաժեշտ է ռեադապտացիային ուղղված հոգեբանական

պատրաստականություն ապահովել պատժի կրման ժամանակահատվածում: Սակայն, հոգեբանական պատրաստականության ապահովման գործընթացն առաջին հերթին ենթադրում է դատապարտյալների անհատական որակների, ազատագրվման պայմանների, ինչպես նաև համալիր հոգեբանական պայմանների և առանձնահատկությունների ուսումնասիրում, ուստի կարևորվում են քրեակատարողական հիմնարկում դատապարտյալների հետ իրականացվող տարբեր հոգեբանական միջամտությունների առանձնահատկությունները պատժի կրման ժամանակահատվածում, որոնք իրենց յուրահատկություններով մեծ ազդեցություն կարող են ունենալ դատապարտյալների հոգեբանական հարմարման և ռեադապտացմանն ուղղված հոգեբանական պատրաստականության ապահովման վրա:

#### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Խաչիկյան Հ. Մ. Պատժի ինստիտուտը քրեական իրավունքում, Երևան, 2000:
2. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք առ 02.05.2003թ.:
3. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք առ 06.10.2001թ.:
4. Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգիրք առ 10.02.2005թ.:
5. Բանտի ղեկավարմանը՝ մոտեցում Մարդու իրավունքների դիրքերից, բանտային հետազոտությունների միջազգային կենտրոն 2003:
6. Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններ, Երևան, 2002:
7. Ուղղիչ հաստատությունների աշխատողների ուսուցման ձեռնարկ, Երևան, 2002:
8. Антонян Ю. М., Гульдан В.В. Криминальная патопсихология. М., 1991.
9. Аристотель. Риторика. СПб, 1984.
10. Змановская Е.В. Девиантология: Психология отклоняющегося поведения. Санкт-Петербург, 2001.
11. Платон. Законы. Т.14, П., 1923.
12. Шаргородский М.Д. Наказание по уголовному праву эксплуататорского общества. М., 1957.
13. Фойницкий И.Я. Учение о наказании... М., 2000.

#### ՔԵՅՈՒՄԵ

##### *Наказание в виде лишения свободы как проблема криминально-психологических исследований*

В статье рассматриваются цель и задачи наказания в виде лишения свободы, ее философские и юридические изменения в течении исторического развития. В статье изложены, как юридические, так и криминологические и психологические аспекты, которые способствуют более глубокому психологическому восприятию наказания в виде лишения свободы.

#### SUMMARY

##### *Imprisonment as a subject of study in criminal psychology*

The objectives and goals of the punishment, also its philosophic and juridical changes during history are discussed in this article. The article is full of juridical, criminological and psychological aspects which make more obvious the psychological perception of the punishment.



**ՊԵՐՃ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ



**ՀՈՂԱՍՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ  
ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ  
ՀԱՍՏԱՏԵՔՍՏՈՒՄ**

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (փոփոխված 11-րդ արձանագրությամբ<sup>1</sup>) (այսուհետ՝ նաև Կոնվենցիա), թիվ 1 արձանագրության<sup>2</sup> 1-ին հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի գրկել սեփական գույքից, բացառությամբ՝ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու, հարկերի, մյուս զանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար»:

Կոնվենցիայի նշված հոդվածը ներառում է երեք կարևոր նորմ: Առաջինը, որն իր բնույթով ընդհանուր է, սահմանում է սեփականության իրավունքից անարգել օգտվելու սկզբունքը. այն դրսևորված է հոդվածի 1-ին պարբերության առաջին նախադասության մեջ: Երկրորդ նորմը վերաբերում է սեփականությունից գրկելուն և դրա համար նախատեսում է մի շարք պայմաններ. այն արտացոլված է նույն պարբերության երկրորդ նախադասության մեջ: Երրորդ նորմը ճանաչում է, որ մասնակից պետություններն իրավունք ունեն վերահսկել սեփականության իրավունքի իրականացումը հասարակության

շահերին համապատասխան՝ ընդունելով այնպիսի օրենքներ, որոնք անհրաժեշտ կհամարեն այդ նպատակին հասնելու համար. այս նորմը արտացոլված է հոդվածի 2-րդ պարբերության մեջ<sup>3</sup>:

Միևնույն ժամանակ, Կոնվենցիայի նշված հոդվածում ամրագրված են մի շարք հիմնարար հասկացություններ, որոնցով պայմանավորված են Կոնվենցիայով սահմանված իրավակարգավորությունների առանձնահատկությունները: Մասնավորապես՝ Կոնվենցիայում գործածված են «սեփականություն», «օրենքով սահմանված», «ի շահ հանրության» և այլ հասկացություններ, որոնք ունեն առանցքային նշանակություն և կոնվենցիոն կարգավորումների համատեքստում ինքնուրույն կիրառություն և իրավական բովանդակություն են ձեռք բերում:

«Սեփականություն» հասկացությունը Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածում գործածվելիս ունի ինքնավար նշանակություն և չի ենթարկվում պաշտոնական դասակարգումների<sup>4</sup>, այն չի սահմանափակվում, օրինակ, նյութական աշխարհի օբյեկտներով և ներառում է որոշակի իրավունքներ, շահույթներ, որոնք ստեղծում են ակտիվներ<sup>5</sup>: Միաժամանակ, դատարանի կողմից արձանագրվել է նաև, որ սեփականությունը, որն այդպիսին չի համարվում ըստ ներպետական օրենսդրության, կարող է ճանաչվել այդպիսին ըստ Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի<sup>6</sup>: Օներիիդիզի գործով<sup>7</sup>, որի փաստական հանգամանքների համաձայն դիմումատուն ապօրինի հողագավթում էր կատարել և դրա վրա բնակելի տուն էր կառու-

www.lawinstitute.am

ցել, դատարանն այն դիրքորոշումն էր արտահայտել, որ ապօրինի հողագավթումը չի սահմանափակում նրան գույքային իրավունքներ (շահ) ունենալու հենց դրա վրա կառուցված տան նկատմամբ:

Նշված հասկացությունների մեկնաբանությունները դատարանի կողմից տրվել են սեփականության իրավունքի պաշտպանության նպատակով ներկայացված դիմումների քննության շրջանակում՝ անդրադառնալով դրանց՝ որպես սեփականության իրավունքի իրականացման կամ սահմանափակման համար անհրաժեշտ պայմանների ամբողջություն:

Անդրադառնալով սեփականությունից զրկելու պայմաններին, հարկ է նշել, որ դատարանը բազմիցս անդրադարձել է դրանց՝ արձանագրելով, որ Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով այդ պայմանները հանգում են հետևյալին.

1. միջոցները պետք է լինեն օրինական,
2. միջոցներն ունեն օրինական նպատակ՝ ի շահ հանրության,
3. միջոցները համամասն են օրինական նպատակին:

Միջոցների օրինական լինելու պայմանն անհրաժեշտ է համարում, որ սեփականագրվմանն ուղղված միջոցները պետք է համապատասխանեն օրենքի պահանջներին: Կոնվենցիայի տարբեր հոդվածների վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ ակտի կարևորագույն սկզբունքներից է հանդիսանում այն, որ դրանով ամրագրված ցանկացած իրավունքի (այդ թվում թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով ամրագրված) իրականացմանը միջամտելը կարող է իրականացվել միայն օրենքին համապատասխան: Նշված պահանջը Կոնվենցիայում արտահայտվում է, օրինակ, «օրենքով սահմանված», «օրենքով նախատեսված» կամ «օրենքին համապատասխան» բառակապակցություններով:

Անդրադառնալով թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի դրույթներին՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Զարբոնին և Վենտուրան ընդդեմ Իտալիայի գործով ընդգծվել է. «Դատարանը կրկնում է, որ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի առաջին և ամենակարևոր պահանջն է, որ պետական իշխանությունների կողմից ցանկացած միջամտու-

թյունը սեփականության խաղաղ իրականացմանը պետք է լինի օրինական»<sup>8</sup>: Իսկ թե ինչ պետք է հասկանալ «օրենքով սահմանված» արտահայտության ներքո, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից բացահայտվել է Սանդեյ Թայմզն ընդդեմ Միացյալ Թագավորության գործում: Մասնավորապես, դատարանի կողմից արձանագրվել է. «Հետևյալ երկուսը այն պահանջներն են, որոնք բխում են «օրենքով սահմանված» արտահայտությունից: Ամենից առաջ, օրենքը պետք է համապատասխանաբար մատչելի լինի: Երկրորդ, նորմը չի կարող «օրենք» համարվել, քանի դեռ այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը հնարավորություն կտա քաղաքացուն իրականացնել վերահսկողություն. նա պետք է հնարավորություն ունենա, եթե անհրաժեշտ է նաև համապատասխան խորհուրդ ստանալով, կանխատեսել (այն չափով, որքան դա հնարավոր է տվյալ հանգամանքներում) այն հետևանքները, որոնք տվյալ գործողությունը կառաջացնի: Պարտադիր չէ, որ հետևանքները կանխատեսելի լինեն բացարձակ ճշգրտությամբ ...»<sup>9</sup>:

Սիդնեյ Թայմզի գործն առնչվում էր Կոնվենցիայի 10-րդ հոդվածին (արտահայտվելու ազատություն), սակայն դրա հիման վրա ձևավորված բավարար մատչելիության և կանխատեսելիության սկզբունքները հավասարաչափ կարող են կիրառելի լինել նաև սեփականության իրավունքի առնչությամբ: Այս մոտեցումը դատարանի կողմից դրսևորվել է, օրինակ, Սպացեքն ընդդեմ Չեխայի Հանրապետության գործում, որի շրջանակներում դատարանը ընդգծեց. «...«օրենքի» մասին խոսելիս թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը վկայակոչում է Կոնվենցիայի որևէ այլ մասում հանդիպած նույն հասկացությունը, որը նկատի ունի օրենքով սահմանված իրավունք, ինչպես նաև դատական նախադեպ: Այն պարունակում է որակական պահանջներ, որոնք ավելի նշանակալից են, քան մատչելիությունն ու կանխատեսելիությունը»<sup>10</sup>: Այսինքն՝ Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածում «օրենքով նախատեսված» արտահայտությունը նշանակում է, որ անձին սեփականությունից զրկելու գործողությունների համար պետությունը պետք է ունենա ներպետական օրենքներով ամրագրված բավարար հիմ-

www.lawinstitute.am

քեր, և այդ օրենքները պետք է լինեն մատչելի ու որոշակի: Անհրաժեշտ է նկատել նաև, որ «օրենք» հասկացությունը դատարանի կողմից ընկալվում է լայն առումով և այդ արտահայտության ներքո նկատի չի ունեցվում դրա ձևական կողմը, այլ հաշվի է առնվում նշանակությունը<sup>11</sup>: Դատարանն օգտագործում է «օրենքի» լայն հասկացությունը, որը ներառում է նաև ավելի ցածր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտեր, որոնց վրա ևս պետք է տարածվի մատչելիության և կանխատեսելիության պահանջը:

Ինչ վերաբերվում է մատչելիությանը, ապա Կոնվենցիան չի պարունակում որևէ առանձնահատուկ պահանջ՝ ուղղված որոշակի իրավական նորմերին հրապարակայնություն տալուն, մատչելի դարձնելուն: Սպացեքն ընդդեմ Չեխիայի Հանրապետության գործով վճռում նշվել է, որ դատարանը չէ, որ պետք է կարծիք հայտնի այն մեթոդների պատշաճության մասին, որոնք ընտրվել են անդամ պետության օրենսդրությամբ<sup>12</sup>: Այսինքն՝ մատչելիության ապահովման միջոցների ընտրությունը թողնված է անդամ պետությանը, և դատարանի կողմից յուրաքանչյուր կոնկրետ գործով գնահատվում է՝ արդյոք քննարկվող իրավական նորմերի մատչելիությունն ապահովվել է, թե ոչ, ինչ եղանակով է ապահովվել, և արդյոք ընտրված եղանակն ապահովել է հետապնդվող նպատակը:

Միջոցների օրինականության կարևորագույն տարր է հանդիսանում նաև այն, որ անձին սեփականությունից զրկելու գործընթացի համար պետք է սահմանված լինեն համապատասխան ընթացակարգեր, որոնցով կերաշխավորվի այդ անձանց իրավունքների պաշտպանությունը և կկանոնակարգվեն պետական մարմինների գործողությունները: Օրինակ, Հենթրիչի գործով դատարանը գտավ, որ պետության նախապատվության իրավունքը վիճարկող ապացույցների ձեռքբերման ընթացակարգի բացակայությունը առաջացրել է Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում<sup>13</sup>:

Միջոցների օրինականության պայմանը, ընդհանուր առմամբ, պահանջում է, որ անձին սեփականությունից զրկելու հետ կապված հարաբերություններում որևէ կամայականություն չլինի, լինի ներպետական օրենք, որով կսահմանվեն համապատասխան հիմքեր անձին սե-

փականությունից զրկելու համար, և այդ օրենքը լինի մատչելի ու անհրաժեշտ չափով կանխատեսելի՝ հնարավորություն ստեղծելով քաղաքացու համար այդ օրենքի պահանջներին համապատասխանեցնել սեփական վարքագիծը և կանխատեսել այդ գործողությունների հետևանքները: Այդ պահանջները վերաբերվում են ոչ միայն օրենքներին, այլև հավասարապես կիրառելի են նաև այլ իրավական ակտերի նկատմամբ:

Կոնվենցիայի համաձայն՝ անձին սեփականությունից զրկելու հաջորդ կարևոր պայմանն այն է, որ միջոցները հետապնդեն օրինական նպատակ՝ ծառայեն հանրության շահերին: Այսինքն՝ սեփականության իրավունքի իրականացմանը միջամտությունը կարող է արդարացված լինել միայն այն դեպքերում, երբ դա տեղի է ունենում հասարակայնության կամ ընդհանուրի շահերից ելնելով<sup>14</sup>: Այս առումով կարևոր նշանակություն ունի Ջեյմսը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության գործով դատարանի արտահայտած դիրքորոշումն այն մասին, որ սեփականագրվումը, որն իրականացվել է այլ անհատի անձնական արտոնություն տալու միջոցով, չի կարող լինել «ի շահ հանրության»<sup>15</sup>:

Միևնույն ժամանակ, դատարանի կողմից շեշտվել է, որ այնուամենայնիվ, սեփականության հարկադիր փոխանցումը մեկ անհատից մյուսին կարող է տեղի ունենալ՝ կախված այն հանգամանքներից, որոնք օրենսդրության իմաստով կոչված են հանրային կարիքների բավարարմանը<sup>16</sup>: Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի ֆրանսերեն տեքստում օգտագործված «pour cause d'utilite publique» (ի շահ հասարակության) արտահայտությունը չպետք է մեկնաբանել նեղ առումով, ինչպես դա կատարված է Կոնվենցիայի անդամ որոշ երկրների օրենսդրությամբ, ինչը սակայն չի կարող որոշիչ լինել, քանի որ կոնվենցիոն դրույթները կարող են ուղղակիորեն գործել և կիրառվել դատական պրակտիկայում: Դեռ ավելին, դատարանը նշել է, որ «հանրային շահ» արտահայտությունը ընդգրկում է նաև սեփականության հարկադիր օտարման (էքսպրոպրիացիա) բոլոր միջոցառումները, այդ թվում՝ նաև ուղղված սոցիալական արդարության վերականգմանը՝ հղում կատարելով այլ ժողովրդավարական պետություններում քննարկվող հարցի վերաբերյալ ար-

տահայտված դիրքորոշումներին. հատկապես մեջբերվել է ԱՄՆ Գերագույն դատարանի կողմից քննված այն գործը, որը վերաբերվում էր Հավայան օրենսդրությանը՝ ուղղված անշարժ գույքի հարկադիր փոխանցմանը վարձատուից վարձակալին՝ նպատակ ունենալով թուլացնել հողի սեփականության իրավունքի կենտրոնացումը (Հավայան տնային շինարարության վարչությունն ընդդեմ Միդիֆֆի 104S. Ct. 2321 [1984])<sup>17</sup>:

Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը, որպես ելակետային դրույթ, հիմնվում է նաև այն սկզբունքի վրա. Կոնվենցիայով սահմանված պաշտպանության համակարգի համաձայն՝ ազգային (պետական) իշխանություններն են, որ պետք է ի սկզբանե գնահատեն առկա խնդիրները, դրանց կապը հասարակության հետ, սեփականագրվման անհրաժեշտությունն ու այն միջոցառումները, որոնք պետք է ձեռնարկվեն: Այսինքն՝ ազգային իշխանությունները, ուղղակիորեն իմանալով տվյալ հասարակությունը, տեղյակ լինելով վերջիններիս խնդիրներին, ավելի շահեկան իրավիճակում են գտնվում, քան միջազգային դատարանը, որպեսզի գնահատեն թե ինչն է բխում հանրային կարիքներից:

Այդ առումով դատարանն ուղղակիորեն նշում է. «Բացի այդ, «հասարակական շահ» հասկացությունը անխուսափելիորեն լայն է: Մասնավորապես, ինչպես նշել է հանձնաժողովը, սեփականությունից զրկելու մասին օրենքներ ընդունելու վերաբերյալ որոշումը, որպես կանոն, պետք է ներառի քաղաքական, տնտեսական և սոցիալական հարցերի վերաբերյալ դիրքորոշումները, որոնք ժողովրդավարական հասարակության մեջ շատ բազմազան են: Դատարանը, բնական համարելով այն, որ սոցիալական և տնտեսական քաղաքականության իրականացման համար ազգային օրենսդրությանը տրված թույլատրելի հայեցողության շրջանակը պետք է լինի լայն, կհարգի օրենսդիր իշխանության որոշումը՝ ինչ հասկանալ «հասարակական շահ» արտահայտության տակ: Սակայն միայն այնքան ժամանակ, քանի դեռ այդ որոշումը չի լինի ակնհայտորեն առանց ողջամիտ հիմնավորման: Այլ կերպ ասած՝ չնայած դատարանը չի կարող իր սեփական գնահատականը փոխարինել ազգային իշխանությունների գնահատականով, այն պար-

տավորված է ստուգելու Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով վիճարկվող միջոցները և դա անելով հետազոտելու այն փաստերը, որոնց շրջանակներում գործել են ազգային իշխանությունները: Նաև դատարանը խնդիր ունի պարզել՝ արդյո՞ք վիճարկվող օրենսդրության նպատակը օրինական է, և համապատասխանո՞ւմ է արդյոք առկա փաստերին»<sup>18</sup>:

Փաստորեն, որպեսզի դատարանը համարի, որ անձի սեփականության իրավունքի իրականացմանը միջամտությունը բխել է հանրային շահերից, բավարար է, որպեսզի այդ միջամտությունը չլինի ակնհայտորեն՝ առանց ողջամիտ հիմնավորման: Նման ձևակերպման պայմաններում, կարելի է եզրակացնել, որ եթե քննարկվող գործերում բացակայի ողջամիտ հիմնավորումը, այնուամենայնիվ անհրաժեշտ է, որպեսզի դա լինի ակնհայտ: Այսինքն՝ միայն հիմնավորման բացակայությունը չի կարող հիմք հանդիսանալ, որպեսզի սեփականության իրավունքի իրականացմանը միջամտելու նպատակը համարվի հանրային շահերից չբխող:

Չնայած այն հանգամանքին, որ դատարանը նշված գործերի լուծման և Կոնվենցիայի պահանջների համապատասխանության հարցերը քննարկելիս կիրառում է նաև որոշ այլ չափանիշներ, որոնցից է, օրինակ, հանրային և մասնավոր շահերի միջև նպաստավոր հավասարակշռության որոշումը, այնուամենայնիվ ավելի նպատակահարմար կլինեի կոնկրետ նպատակը հանրային շահերից բխող ճանաչելու հարցում չսահմանափակվել միայն ողջամիտ հիմնավորման և դրա ակնհայտության պահանջների գնահատմամբ, այլ լրացուցիչ ուսումնասիրել երկրի տնտեսական և սոցիալական կյանքի առանձնահատկությունները պարզելու համար՝ արդյո՞ք իրականում առկա եղել է հանրային շահը, թե՛ ոչ:

Կոնկրետ միջոցների՝ հանրության շահերին համապատասխանության որոշման հարցում դատարանի կողմից գնահատման առարկա է դարձնում նաև պետության՝ թույլատրելի հայեցողության շրջանակում գործելու հանգամանքը: Գնահատման այս սկզբունքն առաջին անգամ դրսևորվել է Լոուելսն ընդդեմ Իռլանդիայի գործով կայացված վճռում<sup>19</sup>, որը որոշում է պետության գործողությունների դատական վերահսկողության շրջանակը և Կոնվենցիայով նախա-

տեսված իրավունքների վերաբերյալ որոշումներ կայացնելու հարցում պետությանը տրամադրված հարզանքի աստիճանը: Այս սկզբունքը, որը սահմանափակում է դատարանի իրավասությունները, կոչված է ապահովելու յուրաքանչյուր հասարակության հարաբերական ինքնուրույնությունը՝ անհատի իրավունքների և ազգային շահերի միջև առկա ներքին բախումները լուծելու հարցում:

Ինչպես վերը նշվել է, Կոնվենցիան պետություններին հայեցողության լայն շրջանակ է տրամադրում՝ որոշելու, թե որոնք են հանրության շահերը, սակայն միևնույն ժամանակ դատարանին չի զրկում պետության կողմից հանրության շահերի սահմանումը ստուգելու իրավունքից: Պետության նշված իրավագործությունն անսահմանափակ չէ. հանդիսանում է կոնվենցիոն ինստիտուտների վերանայման առարկա<sup>20</sup>: Օրինակ, Սթրեյանը և այլոք ընդդեմ Ռուսիայի գործով դիմումատուները դատարան էին դիմել սեփականությունից զրկելն անօրինական ճանաչելու և վնասի փոխհատուցում տրամադրելու պահանջներով: Դիմումի հիմքում դրվել էր այն հանգամանքը, որ պետությունը երեք տարի առաջ դիմումատուից հարկադիր վերցված սեփականությունը վաճառել էր երրորդ անձի: Գործի հանգամանքների և ներպետական օրենսդրության ուսումնասիրության արդյունքում դատարանը գտավ, որ պետությունը անձին սեփականությունից զրկելու համար օրինական նպատակ չի սահմանել<sup>21</sup>:

Այսինքն՝ դատարանը, որպես կանոն, հարգում է պետությունների որոշումները այն հարցի վերաբերյալ, թե որն է հանդիսանում հանրային շահ և հանրային ինչպիսի կարիքների բավարարման համար է սահմանափակվում անձի սեփականության իրավունքը: Միայն այն բացառիկ դեպքերում, երբ սեփականությունից զրկելը գնահատվում է որպես ակնհայտորեն անարդար, դատարանն արձանագրում է Կոնվենցիայի պահանջների խախտում:

Անդրադառնալով Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված անձի սեփականության իրավունքի իրականացմանը միջամտելու համար անհրաժեշտ պայմաններից վերջինին՝ հարկ է նշել, որ այն օրգանապես կապված է նախորդ երկուսի հետ և կոչ-

ված է ապահովելու հավասարակշռություն սեփականության իրավունքի իրականացմանը միջամտելու միջոցների և միջամտության նպատակների միջև: Կոնվենցիան պետությանը հնարավորություն է տալիս իր տարածքում միջամտելու սեփականության իրավունքի իրականացմանը այն սահմաններում, որը անհրաժեշտ կհամարվի՝ հանրային շահերից ելնելով: Միևնույն ժամանակ դատարանը պարտավորություն ունի յուրաքանչյուր կոնկրետ դեպքում որոշելու՝ ձեռնարկված միջոցները (միջամտության աստիճանը) արդյոք անհրաժեշտ են եղել հանրային կարիքների բավարարման համար, արդյոք որևէ սահմանազանցում թույլ չի տրվել միջոցների ընտրության հարցում, ապահովվել է արդյոք հավասարակշռությունը հանրային շահերի և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև: Դատարանի պրակտիկայում այս մոտեցումն ամրագրվել է որպես «համաձայնության սկզբունք» կամ «նպաստավոր հավասարակշռության սկզբունք»:

Դատարանի գնահատմամբ նպաստավոր հավասարակշռության հասնելու պահանջն ամբողջությամբ արտացոլված է կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածում՝ ներառյալ երկրորդ նախադասությունը, որը պետք է կարդալ առաջին նախադասությամբ ամրագրված գլխավոր սկզբունքի լույսի ներքո<sup>22</sup>: Անհրաժեշտ է որպեսզի ողջամիտ հավասարակշռություն լինի կիրառված միջոցների և իրականացվող նպատակի միջև<sup>23</sup>, որը կարող է խախտվել, եթե անձը ստիպված լինի «անհամաչափ բեռ»<sup>24</sup> կրել:

Կիրառվող միջոցների և հանրային շահերի միջև նպաստավոր հավասարակշռության պայմանի առկայությունը, սակայն, չի երաշխավորում անձի սեփականության իրավունքի սահմանափակման գործընթացում վերջինիս իրավունքների պաշտպանությունը: Այսինքն՝ հնարավոր են իրավիճակներ, երբ նպաստավոր հավասարակշռության պայմանը բավարարված լինի, սակայն խախտված լինեն սեփականության իրավունքից ածանցյալ այլ իրավունքներ, մասնավորապես՝ փոխհատուցում ստանալու իրավունքը և այլն:

Չվոլսկու և Չվոլսկայայի գործով դատարանը խնդիր ուներ որոշելու՝ արդյոք պահպանվել է նպաստավոր հավասարակշռության պայ-

մանը նախկին կոմունիստական կառավարության գործողություններից տուժած անձանց իրավունքների վերականգման գործընթացում: Մասնավորապես, անհրաժեշտ էր որոշել՝ նախկինում սեփականությունից զրկված անձանց՝ իրենց գույքը հետ պահանջելու իրավունքի վերապահումը արդյոք չի խախտում ներկա սեփականատերերի իրավունքները: Գործի հանգամանքներից ելնելով՝ դատարանը գտավ, որ նշված միջոցները օրինական են, համապատասխանում են հանրային շահերին, և պահպանված է նպաստավոր հավասարակշռության սկզբունքը, քանի որ գործընթացի նպատակն էր վերականգնել անձանց իրավունքները, որոնք խախտվել էին կոմունիստական ռեժիմի պայմաններում: Այնուամենայնիվ դատարանը գտավ, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի 2-րդ պարբերության պահանջների խախտում, քանի որ երկրի օրենսդրությունը պարտավորեցնում էր ներկա սեփականատերերին (գործով դիմումատուներ) առանց փոխհատուցման նախկին սեփականատերերին փոխանցել իրենց պատկանող գույքը, որը ձեռք էր բերվել բարեխղճորեն<sup>25</sup>:

Հանրային և մասնավոր շահերի միջև նպաստավոր հավասարակշռության տեսանկյու-

նից չափազանց կարևոր է սեփականությունից զրկված անձին փոխհատուցում տրամադրելու հարցը, որը տարբեր շահերի միջև դրված հավասարակշռության գնահատման շրջանակներում կարող է վտանգված լինել՝ պայմանավորելով սեփականությունից զրկված անձին անհամաչափ «բեռով» ծանրաբեռնելը<sup>26</sup>:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է եզրակացնել, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան սահմանում է այն հիմնարար ելակետային դրույթները, որոնց շրջանակներում իրավասու են գործելու անդամ պետությունների իշխանությունները: Միևնույն ժամանակ Կոնվենցիան այդ իշխանություններին վերապահում է հայեցողության որոշակիորեն լայն շրջանակ քննարկելու և լուծելու ներպետական խնդիրները՝ սեփական հասարակության բարեկեցության ապահովման շարժառիթներից ելնելով: Սակայն այդ հայեցողության շրջանակը անսահմանափակ բնույթ չի կարում և պայմանավորված է հանրային և մասնավոր շահերի միջև նպաստավոր հավասարակշռություն ապահովելու անհրաժեշտությամբ, ինչը անմիջականորեն ստուգվում է դատարանի կողմից:

www.lawinstitute.am

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական տեղեկագիր (Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու), հրատարակության 3-րդ տարի, N 5(13), 20.12.2004թ.:

<sup>2</sup> Տե՛ս Փարիզ, 1952թ. մարտի 20-ը:

<sup>3</sup> Տե՛ս Սփորինգը և Լոնդոնի ընդդեմ Շվեդիայի գործով ՄԻԵԳ-ի 23.09.1982 թվականի վճիռը (մաս 61):

<sup>4</sup> Տե՛ս Բեյեյեռն ընդդեմ Իտալիայի գործով ՄԻԵԳ-ի 05.01.2000 թվականի վճիռը (մաս 100), Հունաստանի նախկին թագավորը և այլոք ընդդեմ Հունաստանի գործով ՄԻԵԳ-ի 23.11.2000 թվականի վճիռը (մաս 60):

<sup>5</sup> Տե՛ս Գասուս Դոսջերը և Ֆորդերտեքնիկ Գմբբ-Հ-ն ընդդեմ Նիդերլանդների գործով ՄԻԵԳ-ի 23.02.1995 թվականի վճիռը (մաս 53): Իսթրիդիսն ընդդեմ Հունաստանի գործով ՄԻԵԳ-ի 25.03.1999 թվականի վճիռ (մաս 54). այս գործի փաստական հանգամանքների համաձայն՝ կինոթատրոնը, որը 11 տարի շարունակ գործում էր սահմանված կարգով՝ կնքված վարձակալության պայմանագրի հիման վրա, առանց իշխանությունների միջամտության, ձեռք էր բերել մշտական հաճախորդներ և ստեղծում էր սեփականություն:

<sup>6</sup> Տե՛ս Պանիկյան ընդդեմ Բուլղարիայի գործով ՄԻԵԳ-ի 10.07.1999 թվականի վճիռը:

<sup>7</sup> Տե՛ս Օներիիլդիզն ընդդեմ Թուրքիայի գործով ՄԻԵԳ-ի 10.11.2004 թվականի վճիռը:

<sup>8</sup> Տե՛ս Քարբոնին և Վենտուրան ընդդեմ Իտալիայի գործով ՄԻԵԳ-ի 30.05.2000 թվականի վճիռը (մաս 32):

<sup>9</sup> Տե՛ս Սանդեյ Թայմզն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով ՄԻԵԳ-ի 1979 թվականի վճիռը (մաս 49):

<sup>10</sup> Տե՛ս Սպացեքն ընդդեմ Չեխիայի Հանրապետության գործով ՄԻԵԳ-ի 09.11.1999 թվականի վճիռը (մաս 54):

### ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

- <sup>11</sup> Տե՛ս Սպացեքն ընդդեմ Չեխիայի Հանրապետության գործով ՄԻԵԳ-ի 09.11.1999 թվականի վճիռը (մաս 57):
- <sup>12</sup> Տե՛ս Սպացեքն ընդդեմ Չեխիայի Հանրապետության գործով ՄԻԵԳ-ի 09.11.1999 թվականի վճիռը (մաս 57):
- <sup>13</sup> Տե՛ս Հենթրիչն ընդդեմ Ֆրանսիայի գործով ՄԻԵԳ-ի 22.09.1994 թվականի վճիռը (մաս 42):
- <sup>14</sup> Տե՛ս Моника Карсс-Фрикс, Жеребцов А.Н., Меркулов В.В., Эргель А.Г. “Европейская конвенция о защите прав человека и основных свобод, Статья 1. Протокол N 1. Право на собственность”, М., 2002. С. 26.
- <sup>15</sup> Տե՛ս Ջեյմսը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության գործով ՄԻԵԳ-ի 21.02.1986 թվականի վճիռը (մաս 40):
- <sup>16</sup> Տե՛ս նույն տեղը:
- <sup>17</sup> Տե՛ս նույն տեղը (մասեր 40, 42):
- <sup>18</sup> Տե՛ս Ջեյմսը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության գործով ՄԻԵԳ-ի 21.02.1986 թվականի վճիռը (մասեր 42, 46):
- <sup>19</sup> Տե՛ս Լոուելսն ընդդեմ Իռլանդիայի գործով ՄԻԵԳ-ի 01.07.1961 թվականի վճիռը (մաս 9, 11-15), գործի շրջանակներում Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի կողմից 19.12.1959թ. գեկույցը:
- <sup>20</sup> Տե՛ս Վայագիսն ընդդեմ Խորվաթիայի գործով ՄԻԵԳ-ի 20.07.2006 թվականի վճիռը (մաս 41), Լիթգոուն և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության գործով ՄԻԵԳ-ի 08.07.1986 թվականի վճիռը (մասեր 121, 122):
- <sup>21</sup> Տե՛ս Սթրեյնը և այլոք ընդդեմ Ռումինիայի գործով ՄԻԵԳ-ի 21.07.2005 թվականի վճիռը:
- <sup>22</sup> Տե՛ս Սքորդիոն ընդդեմ Իտալիայի գործով ՄԻԵԳ-ի 29.03.2006 թվականի վճիռը (մաս 93):
- <sup>23</sup> Տե՛ս Փրեսես Կոնսանիա Նավիերան ընդդեմ Բուլղարիայի գործով ՄԻԵԳ-ի 03.07.0997 թվականի վճիռը (մաս 10), Սքորդիոն ընդդեմ Իտալիայի գործով ՄԻԵԳ-ի 29.03.2006 թվականի վճիռը (մաս 93):
- <sup>24</sup> Տե՛ս Սփորինգը և Լոննրոթն ընդդեմ Շվեդիայի գործով ՄԻԵԳ-ի 23.09.1982 թվականի վճիռը (մաս 30):
- <sup>25</sup> Տե՛ս Ջվոլսկին և Ջվոլսկայայան ընդդեմ Չեխիայի Հանրապետության գործով ՄԻԵԳ-ի 12.11.2002 թվականի վճիռը (մասեր 69-74):
- <sup>26</sup> Տե՛ս Լիթգոուն և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության ՄԻԵԳ-ի 08.07.1986 թվականի գործով կայացված վճիռը:

#### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- 1. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա (փոփոխված 11-րդ արձանագրությամբ) ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական տեղեկագիր (Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու), հրատարակության 3-րդ տարի, N 5(13), 20.12.2004թ.:
- 2. Monica Crass-Friks. “The right to Property”. A guide to the implementation of Article 1 of Protocol No 1 to the European Convention of Human Rights. Human Rights Handbook No 4. Council of Europe 2001.
- 3. Моника Карсс-Фрикс, Жеребцов А.Н., Меркулов В.В., Эргель А.Г. “Европейская конвенция о защите прав человека и основных свобод, Статья 1. Протокол N 1. Право на собственность”, М., 2002.

#### ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

- 1. Սփորինգը և Լոննրոթն ընդդեմ Շվեդիայի գործով ՄԻԵԳ-ի 23.09.1982 թվականի վճիռը:
- 2. Բեյելենն ընդդեմ Իտալիայի գործով ՄԻԵԳ-ի 05.01.2000 թվականի վճիռը:
- 3. Հունաստանի նախկին թագավորը և այլոք ընդդեմ Հունաստանի գործով ՄԻԵԳ-ի 23.11.2000 թվականի վճիռը:
- 4. Գասուս Դոսջերը և Ֆորդերտեքնիկ Գմբբե-ն ընդդեմ Նիդերլանդների գործով ՄԻԵԳ-ի 23.02.1995 թվականի վճիռը:
- 5. Իսթրիլիսն ընդդեմ Հունաստանի գործով ՄԻԵԳ-ի 25.03.1999 թվականի վճիռը:
- 6. Պանիկյան ընդդեմ Բուլղարիայի գործով ՄԻԵԳ-ի 10.07.1999 թվականի վճիռը:
- 7. Օնեթիլդիզն ընդդեմ Թուրքիայի գործով ՄԻԵԳ-ի 10.11.2004 թվականի վճիռը:
- 8. Քարբոնին և Վենտուրան ընդդեմ Իտալիայի գործով ՄԻԵԳ-ի 30.05.2000 թվականի վճիռը:
- 9. Սանդեյ Թայմզն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով ՄԻԵԳ-ի 1979 թվականի վճիռը:
- 10. Սպացեքն ընդդեմ Չեխիայի Հանրապետության գործով ՄԻԵԳ-ի 09.11.1999 թվականի վճիռը:
- 11. Հենթրիչն ընդդեմ Ֆրանսիայի գործով ՄԻԵԳ-ի 22.09.1994 թվականի վճիռը:
- 12. Ջեյմսը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության գործով ՄԻԵԳ-ի 21.02.1986 թվականի վճիռը:
- 13. Լոուելսն ընդդեմ Իռլանդիայի գործով ՄԻԵԳ-ի 01.07.1961 թվականի վճիռը: Գործի շրջանակներում Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի կողմից 19.12.1959թ. գեկույցը:
- 14. Վայագիսն ընդդեմ Խորվաթիայի գործով ՄԻԵԳ-ի 20.07.2006 թվականի վճիռը:
- 15. Լիթգոուն և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության գործով ՄԻԵԳ-ի 08.07.1986 թվականի վճիռը:
- 16. Սթրեյնը և այլոք ընդդեմ Ռումինիայի գործով ՄԻԵԳ-ի 21.07.2005 թվականի վճիռը:
- 17. Սքորդիոն ընդդեմ Իտալիայի գործով ՄԻԵԳ-ի 29.03.2006 թվականի վճիռը:
- 18. Փրեսես Կոնսանիա Նավիերան ընդդեմ Բուլղարիայի գործով ՄԻԵԳ-ի 03.07.0997 թվականի վճիռը:

19. Սքոթլիոն ընդդեմ Իտալիայի գործով ՄԻԵԴ-ի 29.03.2006 թվականի վճիռը:  
20. Սփորինգը և Լոննրոթն ընդդեմ Շվեդիայի գործով ՄԻԵԴ-ի 23.09.1982 թվականի վճիռը:  
21. Ջվոլսկին և Ջվոլսկայայան ընդդեմ Չեխիայի Հանրապետության գործով ՄԻԵԴ-ի 12.11.2002 թվականի վճիռը:  
22. Լիթգոուն և այլոք ընդդեմ Սիացյալ Թագավարության ՄԻԵԴ-ի 08.07.1986 թվականի գործով կայացված վճիռը:

#### РЕЗЮМЕ

*Проблема защиты права собственности на землю в контексте первой статьи  
первого протокола конвенции по правам  
и основным свободам человека*

Статья посвящена анализу норм европейской конвенции по правам и основным свободам человека, связанных с ограничением права собственности для общественных нужд. В статье рассматриваются понятия использованные в первой статье первого протокола Конвенции, обсуждаются условия и порядок ограничения права собственности. В детальной форме представляется практика Европейского суда по правам человека, обсуждаются комментарии данные судом по применению норм первой статьи первого протокола Конвенции.

#### SUMMARY

*The problem of protection of the property right of the land in the context of the 1<sup>st</sup> article  
of the protocol No 1 of convention of human rights  
and fundamental freedoms*

In the Article have been analyzed the regulations of european convention of human rights and fundamental freedoms (concerning controlling the use of property in accordance with the general interest). It discusses the notions in the 1<sup>st</sup> article of the protocol No 1 of the convention, as well as the conditions and the procedure of deprivation of property. In detailed form is introduced the practice of the European court of human rights and the comments given by the court on the 1<sup>st</sup> article of the protocol No 1 of the convention are discussed.